



244.



321  
2-91  
№ 69

«Յանաջ»-ի գրադարան

№ 69

26 SEP 2006

Ի. ՆՈՎՈՏՈՐՈՎՍԿԻ



ԻՆՉ Է

# ԻՐԱԽԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

12236+

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թարգմ. Ա. Աբեղեան

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Մամուլ» ընկ. Լորիս-Մելիքեան փող. № 22.

1917

12236



12 JUL 2013

75367

## 1. ԻՆՉ Է ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Պետութիւնը—դա նստակեաց ժողովուրդն է, որ ապրում է մի միակ բարձրագոյն իշխանութեան տակ:

Ուրեմն՝ այնտեղ, ուր չկայ ժողովուրդ, չը կայ և պետութիւն. կամ՝ ուր կայ ժողովուրդ, որ սակայն թափառական է, այսինքն՝ չունի մի որոշ և հաստատուն բնակավայր, այնտեղ չէ կարող լինել և պետութիւն. օրինակ՝ թափառաշրջիկ ժողովուրդը պետութիւն չէ կազմում: Վերջապէս, նստակեաց ժողովուրդը միայն այն դէպքում է պետութիւն կազմում, երբ նա ապրում է մի բարձրագոյն իշխանութեան եեթակայ, այսինքն, երբ այդ նստակեաց ժողովուրդն ունի մի բարձրագոյն իշխանութիւն, որին հպատակւում են բոլորը:

Ուրիշ խօսքով, այն բոլոր դէպքերում, երբ կան հետևեալ երեք պայմանները, այն է. 1) ժողովուրդ, 2) նրա նստակեացութիւնը և 3) բարձրագոյն իշխանութիւնն՝ այնտեղ կայ և պե-

42236



տութիւն. իսկ ուր չկայ այս երեք պայմաններից մէկն ու մէկը՝ այնտեղ չկայ և պետութիւն:

Պետական իշխանութիւնը բաղկացած է երեք տեսակի իշխանութիւններից—օրէնսդրական, գործադիր կամ կատարողական և դատատանական:

Օրէնքներ հրատարակելու իրաւունքը կոչւում է օրէնսդրական իշխանութիւն:

Այդ օրէնքները իրագործող իրաւունքը կոչւում է կատարողական կամ կառավարչական իշխանութիւն:

Դատող կամ արդարադատութիւն կատարող իրաւունքը կոչւում է դատական իշխանութիւն:

Երբ պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է մէկ անձի միայն, այսինքն թագաւորի, իշխանի, կայսրի, այն ժամանակ մենք այդ իշխանութիւնը անւանում ենք քաղաքձակ միապետութիւն կամ ինքնակայրութիւն:

Պետութեան բարձրագոյն իշխանութիւնը կարող է պատկանել ողջ ժողովրդին կամ նրա ընտրած ներկայացուցիչներին: Պետական այդպիսի կազմը անւանւում է հասարակապետութիւն կամ հանրապետութիւն:

Վերջապէս կայ և մի այլ տեսակ պետական կազմ, ուր պետական իշխանութիւնը պատ-

կանում է մասամբ ժողովրդին և մասամբ թագաւորին. այդպիսի պետական կազմը կոչւում է սահմանափակ կամ սահմանադրական միապետութիւն:

Այդպիսի պետութեան մէջ թագաւորի ինքնակալական իշխանութիւնը սահմանափակւած է ժողովրդին վերապահած իրաւունքներով և ազատութիւններով, որոնք դուրս են թագաւորի իշխանութիւնից:

Այդ իրաւունքները, արտօնութիւնները և ազատութիւնները մի առ մի յիշւած են լինում երկրի հիմնական օրէնքի մէջ:

Այդ օրէնքը որոշում է պետական կազմակերպութեան հիմունքները—դրա համար էլ նա կոչւում է հիմնական օրէնք:

Հիմնական օրէնքը ուրիշ անունով ասւում է սահմանադրութիւն կամ կոնստիտուցիա, այսինքն հիմունքներ, որոնցով որոշւում են որպէս ժողովրդի իրաւունքներն ու պարտականութիւնները, նոյնպէս և թագաւորի իրաւունքներն ու պարտականութիւնները: Նա է, որ որոշում է, թէ վերև յիշւած երեք իշխանութիւններից որոնք են պատկանում ժողովրդին և որոնք՝ թագաւորին.

Սովորաբար ժողովրդի ձեռքին գտնւում է օրէնսդրական և դատական իշխանութիւնը, իսկ թագաւորին մնում է կատարողական



(գործադիր) կամ կառավարչական իշխանութիւնը: Անգլիայում, օրինակ, իշխանութեան բոլոր երեք տեսակները պատկանում են ժողովրդին, գտնւում են նրա ներկայացուցիչների ձեռքում: Նրա համար էլ անգլիական թագաւորի մասին ասում են, որ նա միայն «թագաւորում է, սակայն չէ կառավարում պետութիւնը»:

Ռուսաստանում Յեզափոխութիւնից առաջ բոլոր երեք իշխանութիւններն էլ՝ օրէնսդրական, դատական և գործադիր, պատկանում էին կայսրին, որի իշխանութիւնը ոչինչ և ոչ ոք չէր սահմանափակում: Հետեւապէս Ռուսաստանում բարձրագոյն ողջ իշխանութիւնը թագաւորի ձեռքումն էր, ուրիշ խօսքով՝ Ռուսաստանը բացարձակ միապետութիւն էր:

## 2. ԻՆՉ է ԻՐԱՆԻԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՉ Է ՈՍՏԻԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Պետական այն կազմակերպութիւնը, որ մենք տեսնում ենք Եւրոպայի, Ամերիկայի և Աւստրալիայի բոլոր յառաջադէմ ժողովուրդների մէջ, կոչւում է իրաւական:

Իրաւական է կոչւում այդ ժողովուրդների պետութիւնը նրա համար, որ այդ ժողովուրդների հիմնական օրէնքները ընդունում են ժողո-

վորդի քարճրագոյն իրաւունքները պետութեան այս կամ այն իշխանութեան վերաբերմամբ և օրէնքի իշխանութիւնը՝ ողջ պետական կեանքում:

Այսպիսի պետութիւնը իրաւական է կոչւում նաև այն պատճառով, որ իւրաքանչիւր քաղաքացի, նոյն օրէնքների համաձայն, օգտւում է նաև այլ իրաւունքներից, օրինակ՝ խղճի, հաւատի, համոզմունքների ազատութիւն, ունի խօսքի, մամուլի, ժողովումների, ժողովրդական հանդէսների ազատութիւն, նաև անձի, բնակարանի անձեռնմխելիութիւն, և այլն:

Այս բոլոր իրաւունքների մասին մենք կը խօսենք տունձին, այժմ պէտք է միայն նկատենք, որ եւրոպական բոլոր ազգերը, նախ քան իրաւական պետութիւն ունենալը, ունեցել են ոստիկանական պետական կազմ—օրինակ՝ ինչպէս որ էր մի ժամանակ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլ պետութիւնների մէջ:

Այժմ տեսնենք, թէ ինչ բան է ոստիկանական պետութիւնը, ինչ տառնաւայտկութիւններ ունի նա և ինչու ոստիկանական անունն է ստացել: Ոստիկանական պետութեան մէջ պետական բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է թագաւորին: Նա ինքն է հաստատում օրէնքները, սահմանում հարկեր և տուրքեր. նա է նշանակում մինիստրներ և դատաւորներ:

Թագաւորի ձեռքում են գտնւում յիշած



բոլոր երեք իշխանութիւնները՝ օրէնսդրական, կատարողական և դատական: Թագաւորի կամքը ամենաքարծր օրէնքն է: Երկրի բոլոր բնակիչները հնազանդուում են նրան:

Ոստիկանական պետութեան մէջ թագաւորի ամենամեծ հոգսը իր իշխանութիւնը պահպանել և հաստատելն է:

Պետութեան մէջ ապրողները զուրկ են էական իրաւունքներից—նրանք միայն հաւատարիմ հպատակներ են՝ պարտաւոր են առանց այլևայլութեան հպատակել թագաւորի կամքին:

Հպատակի իւրաքանչիւր քայլը պէտք է լինի իշխանաւորների թոյլտուութեամբ: Այն բանը, որ թագաւորական օրէնքներով թոյլատրւած չէ,—նա արգելւած է:

Թագաւորները ձգտում էին միշտ խառնել ժողովրդի կեանքի բոլոր գործերի մէջ: Եւ որովհետեւ մի մարդու համար անհնար է ամեն ինչ տեսնել, ամեն բանի հասնել, ուստի թագաւորները չափազանց շատացնում էին թէ չինոփնիկների (պաշտօնեաների), թէ գաղտնի և թէ յայտնի ոստիկանների թիւը:

Թագաւորները խառնուում էին բնակիչների տնտեսական կեանքի մէջ և նոյն իսկ նրանց անձնական, ընտանեկան գործերի մէջ: Թագաւորները աշխատում էին առաջնորդել ժողովրդի արդիւնաբերական, աւետրական և գիւղատնտե-

սական կեանքը և գործերը: Իսկ այս բոլորի համար պէտք էր չինոփնիկների ահագին բանակ: Մի խօսքով, ոստիկանական պետութեան մէջ ժողովրդի կեանքը ամբողջովին կաշկանդոււմ էին, որպէս շղթաներ, թագաւորի սահմանած օրէնքները:

Արգելումների մի ահագին ցանց կաշկանդում էր հպատակների շարժումը: Ամենուրեք կար ռի իշխանութիւն, որ հաւանութիւն էր տալիս, թոյլատրում, արգելում և հսկում: Պաշտօնեաների ու ոստիկանների այս ահագին բանակի կերակրելը մեծ գումարներ էր պահանջում, ի հարկէ ժողովրդի գրպանից: Իսկ ամենից վատը այն է, որ թագաւորական օրէնքների առաջ բորոն էլ միահաւասար չեն:

Որչափ հարուստ, դիրքով բարձր և ծագումով նշանաւոր է մի մարդ, այնչափ համարձակ ոտնատակ է տալիս նոր օրէնքները, առանց վախենալու որեւէ պատասխանատուութիւնից:

Հարուստը խախտում է օրէնքը, որովհետեւ հաւատացած է, որ կաշառակիր պաշտօնեային տւած իր կաշառքով նա կազատւի ամեն տեսակ պատասխանատուութիւնից: Իսկ դա առաջանում է նրանից, որ թագաւորական կառավարութիւնը այն սխալ համոզմունքն ունի, թէ իշխանութեան արժանիքը և ժողովրդի յարգանքը դէպի իշխանութիւնը պահելու համար ան-



հրաժեշտ է պաշտօնեաների չարագործութիւնները ծածկել:

Եւ ահա պետական ծառայութեան մէջ գտնուող անձերի զեղծումների և յանցանքների այս անպատիժ մնալը ունենում է այն հետեանքը, որ պաշտօնեաների և ոստիկանական ծառայողների մէջ զարգանում է կամայականութիւնը: Իսկ այդ կամայականութեան դէմ անհնար է գտնել դատաստան և արդարութիւն այն պարզ պատճառով, որ իրենք բարձր պաշտօնեաները միայն թղթի վրայ է, որ պատասխանատու են համարւում թագաւորի առաջ, իսկ իրօք չէ որ նրանք նշանակւած են հենց իր թագաւորի կողմից:

Եթէ մի միջոցաւ վատ է դուրս գալիս — դրանում մեղաւոր է, ի հարկէ, ինքը թագաւորը, որ ինքն է նրան այդ պաշտօնը տւել:

Ոստիկանական պետութեան մէջ թագաւորին շրջապատում են միշտ հարուստ և ազնւատոն մարդիկ, որոնք հոգս են տանում, թէ ի՞նչ պէս անեն, որ լաւ տեղաւորւեն, հաստատւեն նրա շուրջը:

Հասարակ մահկանացուներ թոյլ չեն տրուում թագաւորի մօտ, այնպէս որ թագաւորը լաւ ընտրութեան միջոցներից գուրկ է:

Թագաւորի անձին մօտ գտնուող իւրաքանչիւր ոք աշխատում է իր ձեռքը գցել որչափ

կարելի է շատ իրաւունքներ, որով շուտով ողջ թագաւորութիւնը լցւում է հարիւրաւոր և հազարաւոր մեծ ու փոքր ինքնակալներով:

Սկսւում է «խնամիութիւն անելը»: Պնակալէզները առաջ են քաշում իրենց բարեկամներին, մօտ ծանօթներին և պետական ողջ կառավարութիւնը անցնում է պալատական մարդկանց մի խմբակի ձեռքը:

Արժանաւոր անձին դժւար է ոստիկանական պետութեան մէջ իր խելքի և ընդունակութիւնների համապատասխան տեղ և պարագմունք գրտնել: Ամեն տեղ նստած են անընդունակ, բայց լաւ կապեր և հարստութիւն ունեցող ազնւատոն մարդիկ:

Ոստիկանական պետութեան մէջ թագաւորը իր իշխանութեան բարիքները բաժանում է ազնւականների և կալածատէրերի հետ, թագաւորը իրեն անւանում է «առաջին ազնւական», որով պարզ ցոյց է տալիս, թէ ով է ինքը, և ում շահերն են նրա սրտին աւելի մօտիկ:

Ոստիկանական պետութեան մէջ բոլոր պաշտօնեաները մեծ մասամբ ազնւականներից են լինում կամ թէ ազնւականութիւն են ձեռք բերում որոշ աստիճաններից յետոյ:

Թագաւորը հաստատում է այն օրէնքները, որ խմբագրում են աստիճանաւորները, իսկ սրբանք շատ անգամ աչքով չեն տեսել այն ժողո-



վրդին, որի համար սահմանափակ են այդ օրէնքները:

Հպատակները կողմից առաջացած ամեն մի դժգոհութիւն ոստիկանական պետութեան կողմից ճնշուած է ոստիկանական և զինուորական ոյժով: Ինչ էլ որ անի թագաւորը, բոլորը պարտաւոր են գոհ լինել. ժողովրդին հասած բոլոր թշուառութիւնների ժամանակ՝ օրինակ երաշտի, վարակիչ հիւանդութիւնների և այլն, ինքը թագաւորն է կարգադրում, թէ ի՞նչ միջոցներ պէտք է ձեռք առնել:

Ամեն բանում իշխանաւորներ, պաշտօնեաներ, ոստիկաններ են, որ կան. ամեն բանի դէմ ոստիկանական միջոցներ, որ ասում են՝ «այս թոյլ է տրուած, միւսը՝ արգելուած է»:

Ահա այն պետութեան առանձնայատկութիւնները, որին տրւած է ամենաճիշտ անունը՝ ոստիկանական պետութիւն:

Քաղաքացիների իրաւազրկութիւնը, ժողովրդի տգիտութիւնը, պետութեան անվերջ խնամակալութիւնը սպանում են մարդկանց մէջ ձեռներէցութեան ոգին, որի շնորհիւ փաստում են առեւտրը, արդիւնագործութիւնը և գիւղական տնտեսութիւնը:

Բացի այդ, ոստիկանական պետութեան մէջ հարկերը և տուրքերը այնպէս են բաշխւած, որ ինչքան աղքատ է մարդ, այնքան համեմատա-

բար նա աւելի է վճարում պետական գանձարանին, և ընդհակառակը՝ որքան նա հարուստ է, այնքան քիչ պէտք է վճարէ:

Եւ դա զարմանալի էլ չէ, եթէ յիշենք, թէ ո՞ւր է հետ է բաժանում թագաւորը իր իշխանութեան արտօնութիւնները և ո՞ւր վրայ է յենում նա պետութիւնը կառավարելիս:

Մենք գիտենք, որ նրա անունով իշխում են հարուստները, ազնական-կալածատէրերը, մասամբ նաև վաճառականները, իսկ ժողովուրդը ոստիկանական պետութեան մէջ միշտ հեծում է հարկերի և տուրքերի ծանրութեան տակ, խարխափում է տգիտութեան մէջ, զուրկ իրաւունքներից, ենթակայ բազմաթիւ իշխանաւորների կամայականութիւններին:

Այս բոլորի հետևանքը եղաւ այն, որ բոլոր երկիրներում ոստիկանական պետութիւնը մէկը միւսի յետևից տապալեց՝ նոյնը նաև՝ Ռուսաստանում:

Այժմ ամփոփենք համառօտակի՝ ոստիկանական պետութեան առանձնայատկութիւնները:

1. Այդպիսի պետութեան գլուխը տէր է անսահման իշխանութեան:

2. Օրէնքի և դատարանի առաջ ամենքը հաւասար չեն ճանաչւած:

3. Կառավարութեան մէջ թագաւորում է կամայականութիւնը, շատ է ամեն տեսակ իշխանաւորների թիւը:



4. Դատարանը դանդաղաշարժ է, անարդար և անողորմ: Դատում են կառավարութեան կողմից նշանակւած չինոֆիկները:

5. Հպատակները չունեն և ոչ մի իրաւունք. նրանց միակ բաժինը պարտականութիւններն են:

6. Քանի աւելի աղքատ է մարդ, այնքան աւելի է նա հարկեր և տուրքեր վճարում, համեմատած իր կարողութեան հետ:

7. Ժողովուրդը լուսաւորւած չէ, որովհետեւ կառավարութիւնը ամեն կերպ արգելքներ է յարուցանում՝ դպրոցներ, գրադարաններ և այլն բանալու դէմ:

8. Ժողովուրդը չգիտէ, թէ ինչ բանի վրայ են ծախսւում իրանից պետական գանձարան հաւաքած փողերը:

9. Զօրքի, նաւատորմի վրայ արւող ծախսերը, չինոֆիկներին և պոլիցիականներին տրուող ռոճիկները չափազանց մեծ են: Ժողովրդի կենսական պահանջներին գոհացում տալու համար մնում են խղճուկ գրողներ:

10. Ժողովրդա-տնտեսական կեանքի զարգացումը ճնշւում է ոստիկանական միջոցներով:

11. Որովհետեւ չկան ոչ մի տեսակ օրինական միջոցներ, որոնցով ազգաբնակչութիւնը կարողանար իր զժգոհութիւնը յայտնել կառավարութեանը, այդ պատճառով էլ ոստիկանական

պետութեան մէջ անպակաս են անկարգութիւններ, յուզումներ, բռնութիւններ, ապստամբութիւններ,—որոնց կառավարութիւնը ճնշում է զինւորական և ոստիկանական միջոցներով:

Եւրոպայի լուսաւորւած ժողովուրդների մէջ էլ ոստիկանական պետութիւն գոյութիւն ունէր մի քանի դարեր: Վերջին հարիւր տարում նա աստիճանաբար ընկաւ, շնորհիւ ժողովրդական խռովութիւնների և ապստամբութիւնների: Ազգերը երկար կուռւմ էին թագաւորական իշխանութեան դէմ՝ քաղաքացիների իրաւունքների և արտօնութիւնների համար, բոլորի հաւասարութեան համար օրէնքների առաջ, մինչև որ նրանց աջողւեց կամ գլխովին վերջացնել թագաւորների իշխանութիւնը, կամ սահմանափակել այդ:

Անցած ողջ դարը նշանաւոր է այդ կուռւմ, կռիւ՝ արդար օրէնքների համար, կռիւ իրաւունքների համար: Կարելի է ասել, որ լուսաւորւած ազգերը իրաւունքների տէր դարձան տնդադար կռիւներ մղելով: Նրանք այդ կռիւներով ոչնչացրին ոստիկանական պետութիւնը և նրա աւերակների վրայ դրին իրաւական պետութեան հիմքը, պետական այն կազմի, ուր տիրում է արդար օրէնքը և ճանաչւած է քաղաքացիների անխախտելի, անձեռնմխելի կամ անկապտելի իրաւունքները, որոնց ոչ մի կառավարութիւն



Ժողովրդից խել իրաւունք չունի: Մինչև 1917 թ. փետրւարեան Յեղափոխութիւնը Ռուսաստանը ոստիկանական տիպիկ պետութիւն էր: Շնորհիւ Ռուսական Մեծ Յեղափոխութեան՝ տապալեց ոստիկանական կառավարութիւնը և հաստատեց իրաւակարգ:

Հետեւալում պիտի խօսենք իրաւական պետութեան առանձնայատկութիւնները մասին:

### 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Իրաւական պետութեան հիմնական սկզբունքներն են. 1-ին՝ Ժողովրդի վեհապետութիւն (Ժողովրդապետութիւն) և 2-րդ՝ իրաւունքի տիրապետութիւն: Իրաւունքի տիրապետութիւն նշանակում է՝ բոլոր քաղաքացիների հաւասարութիւնը օրէնքի և դատարանի առաջ, իւրաքանչիւր մարդու սրբազան, անձեռմխելի իրաւունքների ճանաչումը: Այժմ ծանօթանանք մօտիկից, թէ ինչ է իրաւական պետութեան առաջին հիմքը—Ժողովրդական վեհապետութիւնը:

### 4. ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Ժամանակակից իրաւական պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը, որին պարտական են բոլորը հնազանդել, պատկանում է ամբողջ Ժողովրդին:

Ժողովուրդն է պետութիւնը կառավարողը, նա է վարում պետական բոլոր գործերը:

Ժողովուրդն է օրէնքներ հրատարակում, նա ինքն է հսկում դրանց կատարման վրայ, ինքն է արգարդատութիւն անում: Ժողովրդի ձեռքումն է նաև օրէնսդրական գործադիր և դատաստանական իշխանութիւնը: Ժողովուրդն է, որ ինքը իր վրայ հարկեր և տուրքեր է նշանակում, որպէսզի զանձ Ժողովի, պետական և Ժողովրդական բոլոր կարիքներին բաւարարութիւն տայ: Նա է, որ Ժողովրդական փողերին տալիս է այս կամ այն գործադրութիւնը: Նա այսպէս՝ իրաւական պետութեան մէջ Ժողովուրդը պետութեան գլուխն է, նրա աէրը:

Վերև ասածներից պարզ է, որ Ժողովրդի գերիշխանութիւնը կայանում է նրանում, որ պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է միմիայն իրեն՝ Ժողովրդին, նրա ձեռքին է կառավարութեան ղեկը, նա է իր տան տէրը:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս է կառավա-



1003  
12936



բում այս ժողովուրդ-վեհապետը, ինչպէս է գործադրում իր գերագոյն իշխանութիւնը:

# 5. ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ Է ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԻՐ ՎԵՀԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Առաջին հայեացքից թւում է, թէ ամենից հասարակն այն է, որ քաղաքացիք ժողովւեն միատեղ քննելու պետական գործերը և ապա ձայների մեծամասնութեամբ կայացնեն որոշումներ:

Բայց այս եղանակը կարելի է գործադրել գիւղական ժողովներում, ուր ժողովուրդը քիչ կայ: Երեսուն, քառասուն տասնէրերի համար ոչ մի գժարութիւն չէ ներկայացնում ի մի ժողովել, սրովհետեւ բոլորը ապրում են մի մեանց մօտիկ, — հարեաններ են: Ի՞նչ վերաբերում է ժամանակակից պետութիւններին, — նրանք այնքան մեծ են իրանց բռնած տարածութիւնով և այնքան շատ՝ բնակիչների թւով, որ բոլոր քաղաքացիների ի մի ժողովումը անհնարին է: Դրա համար էլ փոխանակ ողջ ժողովրդի անմիջական ժողովումի, տեղի է ունենում ընտրած ներկայացուցիչների համաժողովը:

Ժողովուրդը ընտրում է հաւատարմատարներ և յանձնում է նրանց պետութեան գերա-

գոյն իշխանութիւնը, օրէնքներ սահմանելու և հարկեր որոշելու իրաւունքը: Ողջ ժողովրդի կողմից ընտրեալների այս համաժողովը անւանւում է պատգամատրական կամ ներկայացուցչական ժողով, իսկ պետութեան կառավարութեան այս եղանակը անւանւում է կառավարութեան ներկայացուցչական եղանակ:

Ուրեմն ժողովուրդը կառավարում է ինքը, սակայն ոչ անմիջապէս, այլ իր ներկայացուցիչների միջոցով: Եթէ ժողովուրդը տեսնում է, որ իր ընտրած ներկայացուցիչները կառավարում են ոչ այնպէս, ինչպէս ինքը ժողովուրդն է ուզում, այն ժամանակ նա սպասում է յաջորդ ընտրութիւններին և ընտրում է ուրիշ մարդկանց, յանձնելով նրան անել այս կամ այն:

Այսպիսով ժողովրդական ներկայացուցիչները միշտ էլ գտնւում են իրանց պատգամատրական ժողով ուղարկող ընտրողների հսկողութեան տակ:

Եւ այսպէս, իրաւական պետութեան մէջ ժողովրդական իշխանութիւնը գտնւում է, մէկ ընտրութիւնից մինչև յաջորդ ընտրութիւնը, ժողովրդի ներկայացուցիչների ձեռքում: Այդ ներկայացուցիչները կառավարում են ընտրողների հսկողութեան տակ, իսկ սրանց այդ բանում օգնում է ազատ մամուլը: Լրագիրները հաղորդում են ժողովրդական ներկայացուցիչների կարծիք-



ները և որոշումները ամեն օր, ուստի և ընտրողները կարող են միշտ էլ իմանալ, թէ ինչ են անում իրենց ներկայացուցիչները: Թէ ինչպէս է ժողովուրդը ընտրում իր ներկայացուցիչներին, ինչ է առաջանում զրանց ընտրողական զանազան ձևերից, ինչու գոյութիւն ունեն ներկայացուցիչներ ընտրելու զանազան եղանակներ — ահա այն հարցերը, որոնց պէտք է այժմ և եթ պատասխանել:

## 6. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՂՊՆԱԿՆԵՐ

Ժողովրդի ներկայացուցիչներ ընտրելու եղանակները զանազան են լինում:

Իսկ ինչո՞ւ գոյութիւն ունեն ընտրութեան տարբեր եղանակներ: Հարցը նրանումն է, որ եթէ բոլոր մարդիկ միմեանց նման լինէին, եթէ բոլորի կարիքներն ու շահերը միօրինակ լինէին, այն ժամանակ, ի հարկէ, զրանց շահերը պաշտպանելու համար ներկայացուցիչներ ընտրելու ձևն էլ հեշտ կլինէր: Իւրաքանչիւր քաղաքացի կաշխատէր միայն ընտրել ամենաընդունակին: Սակայն իրօք, ժամանակակից պետութիւններից իւրաքանչիւրի մէջ, բոլոր բնակիչները բաժանաժ են զասակարգերի, համաձայն այն դիրքի,

որ նրանք բռնաժ ունեն պետութեան տնտեսական կեանքի մէջ: Այսպէս, կան դասակարգեր՝ գիւղացի-հողագործների, բանւորների, գործարանատէրերի, կալւածատէր-հողատէրերի, պաշտօնեաների, գործակատարների, առևտրականների, ազատ պարապմունք ունեցողների (փաստաբաններ, բժիշկներ, ուսուցիչներ) և այլն և այլն: Իւրաքանչիւր դասակարգ ունի իր եկամուտի յատուկ աղբիւրը, այսինքն ապրելու միջոցները. օրինակ՝ բանւորը — աշխատավարձ, գործարանատէրը և վաճառականը — վաճառակ, կալւածատէրը — հողի կապալագին, ազատ պարապմունքներ ունեցողները՝ ոտճիկ կամ ծառայութեան վարձ, և այլն և այլն:

Այս դասակարգերի շահերը ոչ միայն վանազան են, այլ շատ տնգամ և իրար հակառակ: Դրա համար էլ ժամանակակից պետութիւնների մէջ չէ կարելի հեշտութեամբ ընտրութիւններ կատարել: Օրինակ՝ բանւորը չէ կարող ընտրել գործարանատիրոջը, գիւղացին՝ կալւածատիրոջը, որովհետեւ կալւածատէրը և գործարանատէրը, որպէս ներկայացուցիչներ, կը պաշտպանեն ոչ թէ ժողովրդական կարիքները, այլ իրենց դասակարգի շահերը:

Ժողովրդի համար կարևոր է իմանալ ոչ միայն այն, թէ ո՞ւմ պէտք է ընտրել, այլ և կարևոր է իմանալ՝ ի՞նչպէս ընտրել, որովհետեւ այն, ինչ կալւածատիրոջը, գործարանատիրոջը, պաշտօ-



նեային ձեռնառու է ընտրութիւնների այս եղանակը, գիւղացի երկրագործին, բանւորին և կրթւած մարդկանց՝ ընդհակառակը ձեռնառու է ընտրութեան այլ եղանակ: Դրա համար էլ, նայելով այն բանին, թէ որչափ ժողովրդի աշխատաւոր դասը կարողացել է լաւ ըմբռնել և իր կարիքները պաշտպանել, ըստ այնմ էլ ուստիկանական պետութիւնը խորտակող յեղափոխութեան ժամանակ ընտրութիւնների ձեերը մի երկրում դառնում են յօգուտ ժողովրդի, իսկ միւսում՝ յօգուտ այն դասակարգերի, որոնք գործարանների, գաւոռների և կալածոների տէր են:

Մենք նախ ծանօթանանք ընտրութեան եղանակների հետ այն երկիրներում, ուր ընտրութեան եղանակները կազմւել են յօգուտ աշխատաւոր դասի: Այդ երկիրներում ժողովուրդը ձեռք է գցել ընդհանուր, սւղղակի, հաւասար և գաղտնի ընտրողական իրաւունք:

## 7. ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՌԻՂՂԱԿԻ, ՀԱՒԱՍՏԱՐ ԵՒ ԳԱՂՏ- ՆԻ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Երկու տեսակ ընտրողական իրաւունք գոյութիւն ունի. — ակտիւ՝ ներկայացուցիչ ընտրելու իրաւունք, երբ մարդ ինքն է ընտրում, և պասսիւ՝ ներկայացուցիչ ընտրւելու իրաւունք, երբ նրան ընտրում են ուրիշները:

Պետութիւնների մէջ, մեծ մասամբ, չափահաս դարձած իւրաքանչիւր քաղաքացի օգտոււմ է թէ՛ ակտիւ և թէ՛ պասսիւ ընտրողական իրաւունքից, այսինքն՝ թէ՛ նա ինքը կարող ընտրել և թէ՛ նրան կարող են ընտրել: Հէնց այս է նըշանակում ընդհանուր ընտրողական իրաւունք: Պատճառն ինչ է, որ ազգերը կոխ են մղել ընդհանուր ընտրողական իրաւունքի համար:

Բանն այն է, որ իւրաքանչիւր պետութեան մէջ բնակիչների մեծամասնութիւնը սոսկ աշխատաւորներ են — բանւորներ և գիւղացիներ: Եթէ ընտրողական իրաւունքը լինի ընդհանուր, այսինքն՝ իւրաքանչիւր չափահաս մարդ ունենայ այդ իրաւունքը, այդ դէպքում ժողովրդական ներկայացուցիչների մեծամասնութիւնը կը ներկայացնի և կը պաշտպանի հոգագործների և բանւորների շահերը: Իսկ եթէ հասարակութեան որեւէ դասակարգ գրկւի ընտրողական իրաւունքից, այդ դէպքում ազգային ժողովում նա չի էլ ունենայ ներկայացուցիչներ, որոնք սկսէին պաշտպանել նրա պահանջները. իսկ ինչ կերպ կարող է հասարակութեան մի որեւէ դասակարգ գրկւել ընտրողական իրաւունքից:

Հասարակութեան որեւէ դասակարգ կը գրկւի ընտրողական իրաւունքից այսպէս կոչւած ցենզի սահմանումով. այդ ցենզն էլ կարող է լինել կարողութեան ցենզ կամ կրթական ցենզ:



Կարողութեան ցննդը սահմանում է, թէ ընտրողական իրաւունք ունի միայն նա, որ աւել է կամ օրէնքով սահմանւած արժէք ունեցող մի անշարժ կալւածքի, կամ՝ ունի որոշ եկամուտ, և կամ, վերջապէս, վճարում է սահմանւած չափով ուղղակի հարկեր: Նրժական ցննդը ընտրողական իրաւունքը վերապահում է միայն նրանց, ովքեր ստացել են որոշ կրթութիւն:

Հասկանալի է, որ կարողութեան և կրթական ցննդ պահանջւող գէպքերում ընտրողական իրաւունքից զրկւում են ազգաբնակչութեան էն ամենաաղքատ տարրերը, այսինքն՝ գիւղացիների և բանւորների մեծամասնութիւնը, որովհետեւ նրանք համարեա ոչ մի կարողութիւն չունեն, նրանց աշխատավարձը մեծ մասամբ առած՝ ցածր է ցենզի սահմանած եկամուտից և, չբաւորութեան պատճառով, նրանց մեծ մասը չէ ստացել և ոչ մի կրթութիւն:

Յիշած գէպքում գիւղացիները և բանւորները ազգային ժողովում չեն ունենայ և ոչ մի ներկայացուցիչ: Չինովիկները, գործարանատէրերը և կալւածատէրերը իրենց բէֆի համաձայն էլ կրանօրինեն պետութեան գործերը: Այլ է, երբ ամենքը օգտուում են ընտրողական իրաւունքից, երբ նա ընդհանուր է: Այս դէպքում աշխատւորները ստանում են հնարաւորութիւն՝ ներկայացուցիչների մեծամասնութիւն կազմելու

պատգամաւորական ժողովում և պետական իշխանութիւնը ժողովրդի համար ծառայեցնելու: Ահա թէ ինչն է պատճառը, որ բոլոր երկիրների ժողովուրդները ձգտել են ձեռք բերել ընդհանուր ընտրողական իրաւունք:

Սակայն ժամանակակից բոլոր պետութիւնների մէջ էլ ընդհանուր ընտրողական իրաւունքը այս կամ այն չափով սահմանափակւած է: Այսպէս՝ ընտրելու և ընտրւելու իրաւունք չունեն 1) փոքրահասակները և անչափահասները, — հասկանալի պատճառով. 2) օրէնքով ցոյց տրւած յանցանքների համար դատարանի միջոցով ընտրողական իրաւունքից զրկւածները. 3) զինւորական ծառայութեան մէջ գտնւողները, այսինքն՝ զինւորները և սպաները խիստ զինւորական գեսցիպլինայի շնորհիւ նրանք կարող են ընտրել ոչ խղճով՝ ում որ հէնց իրանք ուզում են, այլ նրան, ում կը հրամայէ իշխանութիւնը. 4) ամբողջ ոստիկանութիւնն ևս նոյն պատճառով զրկւած է այդ իրաւունքից. 5) պետական ծառայութեան մէջ գտնւող չինովիկները սովորաբար զրկւում են միայն ընտրելու իրաւունքից, որովհետեւ նրանց համար էլ դժւար է խղճով ընտրութիւն անելը, սակայն քաղաքացիները իրաւունք ունեն չինովիկներ էլ ընտրելու իրենց ներկայացուցիչ, այնպէս որ, եթէ չինովիկների մէջ լինեն լաւ մարդիկ, արժանի ներկայա-



ցուցիչ լինելու, այդ դէպքում արդէն նրան ընտրել կարող են:

Ամենայնապէս երկիրներում ընտրողական իրաւունքից օգտուում են հաւասարապէս թէ տղամարդիկ և թէ նաև կանայք, և զրանից ոչ թէ ֆեաւ, այլ օգուտ ունի հասարակութիւնը: Չէ որ մեծ անարդարութիւն է՝ զրկել ընտրական իրաւունքից օրինակ տղամարդուց աւելի խելօք մի կնոջ հէնց նրա համար, որ նա տղամարդ չէ, այլ կին: Աւստրալիայի և Ամերիկայի մի քանի ժողովուրդներ հասկացել են այս բանը և արդէն ընտրողական իրաւունք են տւել անխտիր թէ մէկ, և թէ միւս սեռին: Նոյնն է այժմ նաև Ռուսաստանում: Նմանապէս անմիտ և անարդար բան է մարդկանց զրկել ընտրողական իրաւունքից նրանց հաւատի կամ ազգութեան համար: Ժամանակակից պետութիւնները շատ ընդարձակ են. նրանք ծաւալւել են գլխաւորապէս նւաճումների միջոցով: Ու շատ հասկանալի է, որ այդ պետութիւնների մէջ կողք-կողքի ապրում են տարբեր հաւատ և տարբեր լեզուներ ունեցող մարդիկ: Իւրաքանչիւր պետութեան մէջ պատահում է, որ մի որոշ հաւատի հետևող և մի որոշ լեզու խօսող մարդկանց թիւը մեծ է լինում ուրիշներից. և սակայն այդ բանը բնաւ հիմք չի տալիս չէ կարող, որ այլակրօններին և այլազգիներին զրկեն ընտրողական իրա-

ւունքից, քանի որ նրանք էլ հաւասարապէս պատկանում են պետութեանը և միւս քաղաքացիների հետ հաւասարապէս տալիս են հարկեր և տուրքեր: Ձրկել նրանց ընտրողական իրաւունքից այն պատճառով, որ ուրիշ հաւատի և ուրիշ ազգութեան են պատկանում, դա կը լինէր անարդար բան: Այդ պատճառով էլ բոլոր լուսաւորւած երկիրներում ընտրողական իրաւունքից օգտուում են բոլոր չափահաս քաղաքացիները, առանց հաւատի, ազգութեան և լեզւի խտրութեան, իսկ Աւստրալիայում և Ամերիկայում, ինչպէս ասացինք, նաև առանց սեռի խտրութեան: Այժմ մենք արդէն գիտենք, թէ ինչու ժողովուրդները ձեռք բերին ընդհանուր ընտրողական իրաւունք՝ առանց սեռի, հաւատի, ազգութեան, լեզւի խտրութեան, վերացնելով կարողութեան և կրթական ցենզը:

Ընտրողական իրաւունքի մի ուրիշ առանձնայատկութիւնը լուսաւորւած երկիրներում այն է, որ ընտրութիւնները լինում են ուղղակի, կամ ուրիշ խօսքով ասած, ընտրողները անմիջապէս, կամ ուղղակի են ընտրում իրենց ցանկացած մարդկանց:

Այդպիսի ժողովրդական ներկայացուցիչների անմիջական կամ ուղղակի ընտրութիւնները կոչւում են միաստիճան, տարբերելու համար երկաստիճան կամ եռաստիճան կամ նոյնիսկ



քառաստիճան ընտրութիւններից: Իբրեւ օրինակ ուղղակի ընտրութիւնների կարելի է վերցնել մեր կեանքից՝ գիւղական ժողովը (ВОЛОСТНОЙ СХОДЪ), իսկ անուղղակի ընտրութիւնների համար՝ գիւղախմբային գիւղապետի (ВОЛОСТНОЙ СТАРШИНА) համար կատարուող ընտրութիւնները: Իւրաքանչիւր գիւղական հասարակութիւն անմիջապէս է ընտրում իր ներկայացուցչին, իսկ բոլոր ընտրածները միասին կազմում են գիւղախմբային ժողովը: Գիւղախմբի գիւղապետը չէ ընտրուում անմիջապէս շրջանի բոլոր գիւղացիներէ կողմից, այլ անուղղակի կերպով գիւղախմբային ժողովում: Այդ նշանակում է՝ յիշած գիւղապետի ընտրութիւնները լինում են երկաստիճան: Նահանգական ղեմակի ժողովների ձայնաւորներն ևս ընտրուում են երկաստիճան կարգով, որովհետեւ նրանք ընտրուում են գաւառական ղեմակի ժողովի ձայնաւորների կողմից, որոնք իրենց կարգին հանդիսանում են գաւառի ներկայացուցիչներ, անմիջապէս կամ ուղղակի ընտրած այդ գաւառի անգլաբնակութեան կողմից: Ուղղակի ընտրութիւնները աւելի օգտաւէտ են ժողովրդի համար, քան անուղղակիները, որովհետեւ ամեն մէկը իր ձայնը տալիս է նրան, ում նա ինքը ուզում է ընտրել իր ներկայացուցիչ: Իսկ անուղղակի ընտրութիւններին միշտ էլ կարող է պատահել, որ երկրորդ ընտրողա-

կան ժողովը, որին մասնակցում են լիազօրները՝ (ВЫБОРЩИКИ) ընտրւած անմիջապէս ժողովրդից կամ առաջին ընտրողական ժողովից՝ նրանք ընտրեն ոչ այն մարդկանց, որոնց ժողովուրդը կուզէր տեսնել իր ներկայացուցիչներէ շարքում:

Ենթադրենք, թէ իմ ընտրած լիազօրը խոտանում է ազգային ժողովի ներկայացուցիչ ընտրելիս իր ձայնը տալ իմ առած մարդուն: Իսկ ո՞վ կարող է երաշխաւորել, որ նա կը կատարէ իր խօսքը. չկայ այդ երաշխաւորութիւնը:

Ապա՝ ընտրութիւնների ժամանակ պատահում է, որ հարուստ ընտրողները կամ կառավարութիւնը իր ոստիկանութեան միջոցով կաշառում կամ ահ է տալիս ընտրողներին: Իսկ որոնց է աւելի հեշտ կաշառել. հարիւր հազարաւոր ժողովրդին, որ մասնակցում է առաջին ընտրողական ժողովին, թէ՛ երկրորդ ժողովին մասնակցող հազարաւոր կամ երրորդին մասնակցող հարիւրաւոր լիազօրներին:

Հասկանալի բան է, որ, քանի աւելի քիչ են ընտրողները, այնքան էլ աւելի՝ դիւրին է նրանց կաշառել կամ վախեցնել. այդ պատճառով էլ բոլոր իրաւական պետութիւնների մէջ մտցրւած են ուղղակի, այսինքն՝ անմիջական կամ միատասիճան ընտրութիւններ:

Ընտրելու իրաւունքից օգտուող բոլոր քաղաքացիները կազմում են մի ընտրողական շրջան



և ձայն են տալիս անմիջապէս նրան, ում որ նրանք ուզում են իրենց ներկայացուցիչ ունենալ: Բոլոր երկիրներն գիւղացիները և բանւորները հասկացել են, որ միմիայն ուղղակի ընտրութիւնները կարող են նպատակի հասցնել, այն է՝ որ ազգային ժողովի ներկայացուցիչների մեծամասնութիւնը նրանց ընտրածը լինի:

Սակայն գիւղացիները և բանւորները ձգտում են ոչ միայն ընդհանուր և ուղղակի, այլ նաև հաւասար ընտրողական իրաւունքի: Ինչ է նշանակում հաւասար ընտրողական իրաւունք: Այդ նշանակում է, թէ իւրաքանչիւր ընտրող, ով էլ նա լինի, հասարակութեան որ դասակարգին էլ նա պատկանելիս լինի, ինչ գործով էլ զբաղւելիս լինի, — միայն մէկ ձայնի իրաւունք ունի: Երբ ընտրութիւններին ամենքը մէկ-մէկ ձայն ունենան, այդ դէպքում ամեն մէկին էլ վերապահւած կըլինի հաւասար միջոց՝ ազդելու պետական գործերի վրայ, իսկ եթէ օր. կալածատէրերը, գործարանատէրերը, չինովնիկները կամ հոգևորականները ունենան երկ-երկու կամ երեք-երեք ձայն, այդ դէպքում էլ, հասկանալի է, ազգային ժողովը նրանց ձեռքում կըգտնւի, որովհետև նրանց կըյաջողւի ընտրել ներկայացուցիչների մեծամասնութեան: Այս պատճառով այն երկրներում, օր. Բելգիայում, ուր որոշ ընտրողներ ունեն շատ ձայներ, իսկ ուրիշները

մէկ-մէկ, այնտեղ էլ գոյութիւն ունի այլանդակ ժողովրդական ներկայացուցչութիւն, և վերջինս չէ արտայայտում ընտրողների մեծամասնութեան կամքը, այլ արտօնութիւններ ունեցող ընտրողների կամքը: Բելգիայում մինչև օրս էլ գիւղացիները և բանւորները կռւում են հաւասար ընտրողական իրաւունքի համար. մէկ մարդ — մէկ ձայն — ահա իսկական ժողովրդական պահանջը:

Վերջապէս, ընտրողական իրաւունքը պիտի լինի գաղտնի: Ընտրութիւնների գաղտնի լինելը կայանում է նրանում, որ ոչ ոք, բացի ձայն տուողից իրենից, չպէտք է իմանայ, թէ նա ում տւեց իր ձայնը: Գաղտնի լինելը անհրաժեշտ է նրա համար, որ, ինչպէս ցոյց է տալիս բոլոր պետութիւնների փորձը, կառավարութիւնը, գործարանատէրերը, վաճառականները և կալածատէրերը, — բոլորն էլ ամեն ժամանակ պահանջել են հասարակ աշխատաւոր ժողովրդից, որ նա իր ձայնը տայ չինովնիկներին, խազէիներին կամ կալածատէրերին: Անհնազանդներին երկիւղ է տւել կառավարութիւնը ոստիկանութեան միջոցով, իսկ գործարանատէրերը և կալածատէրերը արձակել են իրենց բանւորներին կամ զրկել են գիւղացիներին կապալից, — երբ իմացել են, որ բանւորները և գիւղացիները իրենց մարդկանց են ձայն տւել: Ակներև է, որ յայտ-



նի կամ բաց ընտրութիւններին, երբ ամեն ոք կարող է իմանալ, թէ այս կամ այն ընտրողը ում ձայն տւեց, կառավարութեան համար շատ հեշտ բան է հայածանքի ենթարկել իրեն անհաճոյ ընտրողներին: Գործարանատիրոջ կամ վաճառականի համար զժլար բան չէ արձակել իր այն բանւորին կամ գործակատարին, որ ձայն չի տայ նրան. կալւածատէրը լաւ գիտէ, թէ որ մշակի հաշիւը պիտի տեսնի կամ որ գիւղացուն կապալուց գրկի այն բանի համար, որ սրանք ձայն չեն տւել նրան, այլ իրենց մարդուն: Իսկ եթէ ընտրութիւնները գաղտնի լինեն, այդ դէպքում իւրաքանչիւր մարդ կարող է ձայն տալ իր խղճի ձայնին լսելով, առանց վախենալու, թէ իրեն կը հալածեն կամ կարձակեն, թէ իրեն կը զրկեն աշխատավարձից. չէ որ ընտրութիւնները գաղտնի են և ոչ ոք չէ կարող իմանալ, թէ նա ում ձայն տւեց:

Այսպէս ուրեմն, իրաւական պետութեան քաղաքացիները կուի ճանապարհով ձեռք են բերել ընդհանուր, ուղղանի, հաւասար և զաղտնի ընտրողական իրաւունք: Այժմ հարկաւոր է իմանալ, թէ նրանք ինչպէս են օգտուում այդ իրաւունքից և թէ ինչպէս են տեղի ունենում ընտրութիւնները:

## 8. ԸՆՏՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ


Ժողովրդական ներկայացուցիչների ընտրութիւնները կատարելու համար երկիրը բաժանւում է, ազգաբնակչութեան թւի համաձայն, ընտրողական շրջանների: Իւրաքանչիւր շրջան ընտրում է մէկ ներկայացուցիչ: Մէկ ընտրական շրջան կազմող բնակիչների թիւը տարբեր է զանազան պետութիւններում. օրինակ՝ հարիւր կամ երկու հարիւր հազար բնակիչներ ուղարկում են ազգային ժողովը մէկ-մէկ ներկայացուցիչ: Սակայն իւրաքանչիւր պետութեան սահմաններում բոլոր ընտրողական շրջաններում էլ բնակիչների թիւը համահաւասար է: Որովհետեւ այդ շրջանների բնակիչների թիւը որոշ ժամանակ անցնելուց յետոյ փոխւում է՝ արտագաղթից կամ ներգաղթից, ծննդեան և մահւան դէպքերից, այդ պատճառով էլ իւրաքանչիւր պետութեան մէջ անհրաժեշտ է մի այնպիսի օրէնքի գոյութիւնը, որով սահմանւի երկրի վերստին բաժանումը ընտրողական շրջանների, — որոշ ժամանակամիջոց, ասենք հինգ տարի, անցնելուց յետոյ: Այդ ընտրողական շրջանները կարող են յարմարեցւել արդէն սահմանւած երկրամասերին՝ վիճակներին, նահանգներին և գաւառներին. բայց աւելի լաւ է, որ երկիրը բաժանւի ընտրողական շրջանների՝ անկախ եղած բաժանումներից: Կա-



ընտր է սակայն, որ իւրաքանչիւր ընտրողական շրջանի ընտրողների թիւը միևնույն չէ՝ հաւասար լինի: Եթէ մի երկրում, համաձայն օրէնքի, իւրաքանչիւր շրջան պէտք է ունենայ երկու հարիւր հազար բնակիչ, իսկ իրապէս մի շրջան ունի 200, մի ուրիշը 240, և մի երրորդը 160 հազար բնակիչ, այդ դէպքում երկրորդ շրջանի ներկայացուցիչը կհանդիսանայ 240 հազար բնակիչի կամքի, իսկ երրորդի ներկայացուցիչը՝ միայն 160 հազար քաղաքացիների կամքի արտայայտիչ: Բնակիչների այբպիսի անհաւասար բաժանումը ունենում է այն հետևանքը, որ շատերը զրկւում են իրենց կամքը արտայայտելու հնարաւորութիւնից: Օրինակ՝ վերև յիշած երկրորդ շրջանի 40 հազար բնակիչներ մնում են իսկապէս առանց ներկայացուցչի: Անհաւասար թւով բնակիչներ ունեցող շրջանների մի ուրիշ անյարմարութիւնը այն է, որ նա անդրադառնում է ժողովրդական ներկայացուցիչների կազմի վրայ: Օրինակի համար վերցնենք մի դէպք գերմանական կեանքից:

Բերլին քաղաքը բաժանւում է վեց ընտրողական շրջանների, այնպէս, որ քաղաքի կենտրոնը կազմում է մէկ ընտրողական շրջան, իսկ արւարձանները բաժանւում են հինգ շրջանների:

Արւարձաններում ապրում են գլխաւորապէս բանւորներ. արւարձանների ազգաբնակիւ-



թիւնը աճում է արագօրէն: Քաղաքի կենտրոնի ազգաբնակչութիւնը հետզհետէ պակասում է, որովհետև բնակարանների վարձը այնտեղ աւելի և աւելի թանկանում է: Այդ կենտրոնում ապրում են միայն սակաւաթիւ և շատ հարուստ մարդիկ:

Իհնչ է կատարւում ընտրութիւնների օրը: Հինգ արւարձանների շրջաններում բանւորների ահագին ըզմութիւն, ընտրում են բանւորական կուսակցութեան ներկայացուցիչներ: Իսկ քաղաքի կենտրոնում ընտրւում է միշտ ուրիշ կուսակցութեան մարդ: Այլ կերպ կրկնէք, եթէ Բերլինը բաժանւած լինէր թւով նոյն չափ՝ վեց ընտրողական շրջանների, որոնց բնակիչների թիւը իրար համահաւասար լինէին: Այդ դէպքում ձայների ահագին մեծամասնութիւնը կը տրւէր յօգուտ Բերլինի բանւորների և սրանք կընտրէին, ոչ թէ հինգ, այլ բոլոր վեց ներկայացուցիչներին: Իհնչ հետևանք կունենար քաղաքի այբպիսի բաժանումը:



Հարկաւոր է, նշանակում է քաղաքները բաժանել շրջանների, սկսելով կենտրոնից մի որևէ կէտից, որոնք նմանէին սեպերի:

Բոլոր երկիրներում քաղաքային ազգաբնակչութիւնը աճում է, իսկ գիւղա-



կան ազգաբնակիւթիւնը նւազում: Եթէ որոշ ժամանակ անցնելուց յետոյ նոր ընտրողական շրջաններ հասման են, այդ դէպքում, կարճ ժամանակ անցնելուց յետոյ, քաղաքային շրջանների ներկայացուցիչ կըսկսեն ընտրել հարկը հազարաւոր բնակիչների կողմից, իսկ գիւղական շրջանների ներկայացուցիչները միայն տասնեակ հազարաւոր ներկայացուցիչների կողմից: Եւ որովհետեւ քաղաքների նշանակութիւնը հետզհետէ մեծանում է հասարակական կեանքում, իսկ գիւղերի նշանակութիւնը ընկնում, ուստի ժողովրդական ներկայացուցիչների կազմը կարող է մնալ անփոփոխ և տարէցտարի աւելի պակաս չափով արդարացնել ժողովրդի մեծամասնութեան կամքը: Այժմ արդէն պարզ է, թէ ինչու իրաւական պետութիւնների ժողովուրդները աշխատում են, որ երկիրը բաժանւի ընտրողական շրջանների՝ համաձայն բնակիչների համահաւասար թւի:

Ընտրութիւնների համար սովորաբար նշանակում է տօն օր (կիրակի) այն պատճառով, որպէսզի հնարաւորութիւն տրւի բանւոր և ընդհանրապէս շաբաթւայ մէջ զբաղած ազգաբնակիւթեանը՝ կատարելու իր քաղաքացիական պարտքը, այսինքն՝ տալու իր ձայնը:

Բուն ընտրութիւնները կատարւում են այս կերպ: Իւրաքանչիւր ընտրական շրջանում որո-

շում են ըստ կարելոյն շատ ընտրելավայրեր, որտեղ դրւում են ընտրական արկիւններ: Դրանց մօտ նստած են լինում երկրում գոյութիւն ունեցող կուսակցութիւնների լիազօրները: Վերջիններս հետևում են, որ չլինի թէ որ և է մարդ երկիւղ տայ կամ կաշառի ընտրողներին, հետևում են, որ սրանք մէկ-մէկ ձայն տան, որ միայն ձայնի իրաւունք ունեցողները մասնակցեն ընտրութեանը: Մի խօսքով՝ քաղաքական կուսակցութիւնների լիազօրները հետևում են, որ ընտրութիւնները լինեն կանոնաւոր: Ընտրելավայրի մուտքի մօտ կանգնած են լինում քաղաքական կուսակցութիւնների ուրիշ ներկայացուցիչներ, որոնք ներս մտնող ընտրողների ձեռքն են տալիս իրենց թիկնածուների անունները՝ վրան տպած թերթեր: Ընտրութեան թեկնածու կարող է կոչւել ամեն ոք, որ կամենում է իր թեկնածութիւնը դնել ժողովրդական ներկայացուցչութեան համար: Այդ թեկնածուները սովորաբար պատկանում են երկրում գործող քաղաքական կուսակցութիւններից մէկին կամ միւսին — գիւղացիական, կալւածատիրական, բանւորական, կառավարական և այլն: Քաղաքական կուսակցութիւնների մասին մենք կարծօրէն կը խօսենք ստորեւ, իսկ առայժմ պէտք է նկատենք, որ իւրաքանչիւր ընտրող սովորաբար տալիս է իր ձայնը իր կուսակցութեան, այսինքն՝ բան-



ւորը բանւորական կուսակցութեանը, գիւղացիին՝  
 գիւղացիական, կալւածատէրը՝ կալւածատիրա-  
 կան կուսակցութեանը, և այլն: Ընտրողները  
 ընտրութեան սենեակը գալով՝ մտնում են ա-  
 ռանձնացրած անկիւն, վերցնում են սպիտակ  
 ծրար, մէջն են դնում իրենց ընտրելիների ա-  
 նունները, վրան նշանակած թերթիկը այնպէս,  
 որ ոչ ոք չնկատէ այդ, իսկ միւս թիվնաժողով-  
 րւ թերթիկները ծալում զրպանն են դնում:  
 Դրանից յետոյ նրանք մօտենում են սեղանին,  
 որի վրայ դրած է լինում ընտրական արկղը.  
 սեղանի մօտ նստած լիազօրներին յայտնում են  
 իրենց բնակութեան վայրը և անուն ազգանունը:  
 Լիազօրները ստուգում են, թէ արդեօք այդ ա-  
 նունը կա՞յ ընտրողների ցանկում, որի մասին  
 իւրաքանչիւր ընտրող, որ կամենում է օգտուել  
 իր ընտրողական իրաւունքից, պէտք է իր ժա-  
 մանակին հոգ տանի: Եթէ այդ անունը կայ  
 ցանկում, այդ դէպքում ընտրողը արկղն է դը-  
 ցում իր ծրարը, և բանը դրանով վերջանում է:  
 Երեկոյեան որոշ ժամից սկսած, երբ վերջ է  
 դրում ձայնաւութեանը, լիազօրները սկսում են  
 հաշուել իւրաքանչիւր թեկնածուի համար դրած  
 թերթիկները և իբրեւ ժողովրդական ներկայա-  
 ցուցիչ յայտարարում են նրան, ով ստացել է  
 բոլոր ձայների կէսից աւելին, իսկ եթէ բոլոր  
 թեկնածուները չեն հասնում կէսին, ապա կատարւում է

ստացած լինեն, այդ դէպքում, սովորաբար, հե-  
 տեալ տօն օրւայ համար նշանակւում է կրրի-  
 նաքւէարկութիւն: Սակայն այս անգամ ընտրող-  
 ները պէտք է իրենց ձայնը տան անպատճառ  
 այն երկուսից մէկն ու մէկին, որոնք առաջին  
 ձայնաւութեան ժամանակ ստացել էին միւսնե-  
 րից աւելի ձայն: Ենթադրենք, թէ առաջին ան-  
 գամ՝ ձայնաւութեան են ենթարկւել հետեալ երեք  
 հոգին—Յովհաննիսեան՝ աշխատաւորական կու-  
 սակցութեան անգամ, Պետրոսեան՝ ազատամիտ  
 կուսակցութեան անգամ, և Սարգիսեան՝ կալւա-  
 ծատէրերի կուսակցութեան անգամ: Ասենք թէ  
 այդ բոլորի համար տրւել է ընդամենը 1,000  
 ձայն, որից Յովհաննիսեան ստացել է 400, Սար-  
 ցիկեանը 350, Պետրոսեանը 300 ձայն, — այն ինչ  
 1000-ի կէսը անում է 500: Այս դէպքում կրկնա-  
 քւէարկութեան ժամանակ Պետրոսեանի համար  
 ձայն տուող բոլոր ընտրողները պարտաւոր են  
 ձայն տալ կամ աշխատաւորական և կամ կալ-  
 ւածատէրերի կուսակցութեան թեկնածուին: Ե-  
 թէ 250 բանւորներ իրենց ձայն տան Յովհաննի-  
 սեանին, իսկ 50-ը մնան ձեռնպահ, այդ դէպ-  
 քում ժողովրդական ներկայացուցիչ ընտրւած  
 կհամարւի յիշած շրջանի աշխատաւորական կու-  
 սակցութեան անգամը:

Այսպէս են կատարւում ընտրութիւնները



այն բոլոր երկիրներում, ուր գոյութիւն ունի կառավարութեան ներկայացուցչական եղանակ:

Սակայն բանն այն է, որ երկիրը հաւասար թւով ազգաբնակչութիւն ունեցող շրջանների բաժանելը, քանի որ բնակիչները անդադար մի վայրից միւս վայրն են տեղափոխուում, շատ դժւար է. անյարմար բան է նաև ընտրողական շրջանների սահմանները շատ յաճախակի փոփոխել: Այս է պատճառը, որ այդ պակասութիւնը աշխատում են վերացնել այսպէս կոչւած „անւանացանկերով“ ընտրութեամբ: Մի քանի մանր շրջաններ միանում և կազմում են մի մեծ ընտրական շրջան, և այդ դէպքում իւրաքանչիւր ընտրող տալիս է իր ձայնը ոչ թէ մէկ թեկնածուի միայն, այլ թեկնածուների մի ամբողջ ցանկի, որի համար և ընտրութեան այդ եղանակը կոչւում է „անւանացանկերով ընտրութիւն“: Այս եղանակն էլ ունի այն անյարմարութիւնը, որ ընտրողը ստիպւած է յաճախ ձայն տալ նաև իրեն անձամբ անհաճոյ թեկնածուներին: „Չէ՛ որ դրանով, եթէ ընտրողը հրաժարւի ձայնտուութիւնից, կհասփանւի ամբողջ ցանկը, մինչ այդ ցանկից նրան անհաճոյ կարող է լինել թէկուզ մէկ մարդ միայն:

„Անւանացանկերով“ ձայնտուութիւնը ունի և այն անյարմարութիւնը, որ ընտրողը յաճախ ձայն պիտի տայ իրեն անծանօթ մարդ-

կանց. իսկ այս հանգամանքը կարող է առաջացնել ոչ-ցանկալի անտարբերութիւն դէպի ընտրութիւններ:

Նկատւած բան է, որ ընտրողները ամենից աւելի գիտակցաբար և եռանդով են վերաբերւում ընտրութիւններին այն ժամանակ, երբ նրանք սերտ կապերով են կապւած թեկնածուների հետ, երբ նրանք լաւ են ճանաչում այդ թեկնածուներին: Այս պատճառով՝ ցանկերով ընտրութիւն կատարելը չբուժող դեղ է շրջանային ընտրութիւնների պակասաւոր կողմերի դէմ, և համարեա ոչ մի տեղ կեանքի մէջ գործադրութիւն չէ գտել:

Կայ և մի ուրիշ անյարմարութիւն, որ աւելի կարևոր է յիշատակել. դա ըստ մեծամասնութեան կատարւող ընտրութիւններն են: Մենք տեսանք վերևը, որ ժողովրդական ներկայացուցիչ է դառնում նա, որը ստանում է ձայների մեծամասնութիւն: Ընտրութեան այս եղանակը, այսպիսով, ապահովում է ընտրողների մեծամասնութեան շահերը ազգային ժողովում, սակայն նա չէ տալիս ոչ մի հնարաւորութիւն՝ փոքրամասնութեանն էլ ընտրելու իր ներկայացուցչին: Չէ՛ որ կարող է պատահել, որ լինի մի խոշոր փոքրամասնութիւն. իսկ զրկել նրան իր շահերը պաշտպանելու իրաւունքից, — այդ անարդար բան է:



Քննենք այդ բանը օրինակներով: Ընդունենք, թէ մի պետութեան մէջ ընտրող—բնակիչների թիւը հասնում է 10,000-ի, բաժանւած 10 հաւասար ընտրողական շրջանների, այնպէս, որ իւրաքանչիւր շրջանում կան 1000 ընտրողներ: Ենթադրենք նաև, թէ այդ պետութեան մէջ գոյութիւն ունեն ընդամենը երկու քաղական կուսակցութիւններ—աշխատաւորական և ազատամիտ: Ասենք թէ իւրաքանչիւր ընտրողական շրջանում աշխատաւորական կուսակցութեան թեկնածուն ստանում է 550 ձայն, իսկ ազատամիտ կուսակցութեան թեկնածուն՝ 450 ձայն: Կնշանակէ՞ բոլոր 10 շրջաններում էլ կըյաղթեն աշխատաւորական կուսակցութեան թեկնածուները, և այդպիսով էլ ազգային ժողովը բաղկացած կլինի 10 ներկայացուցիչներից, որոնք բոլորը միասին ստացած կլինեն 5500 ձայն: Իսկ ազատամիտ կուսակցութեան թեկնածուներից ոչ մէկն էլ չի դառնայ ժողովրդական ներկայացուցիչ, չնայելով այն բանին, որ նրանք բոլորը միասին ստացել են 4500 ձայն:

„Ըստ մեծամասնութեան“ կատարւող ընտրութեան շնորհիւ կէսից մի քիչ պակաս ընտրողները մնացին բոլորովին առանց ներկայացուցիչների, որոնք պաշտպանել կարողանային նրանց շահերը ազգային ժողովում: Այս բանը թէ անարդար է և թէ ոչ-ցանկալի: Օրէնքը նը-

րանց տալիս է ընտրելու իրաւունք, այն ինչ ընտրութիւնների եղանակն այնպէս է, որ չըքացնում է այդ իրաւունքը: Աշխատաւորների համար էլ նոյնչափ կարևոր է ազդել պետական գործերի վրայ, որչափ ազատամիտների համար, սակայն ընտրութիւնների եղանակը հնարաւորութիւն չէ տալիս նրանց իրենց թեկնածուներից թէկուս մէկին անցկացնել իբրև ժողովրդական ներկայացուցիչ:

Մենք պարզութեան համար միայն վերցրինք այնպիսի պետութիւն, ուր գոյութիւն ունենային միայն երկու կուսակցութիւններ, որպէսզի պարզ կերպով ցոյց տայինք ձայների մեծամասնութեան վրայ հիմնւող ընտրական եղանակի պակասաւոր կողմը: Իրականութիւնը այն է, որ ամեն մի պետութեան մէջ կան շատ դասակարգեր և շատ էլ քաղաքական կուսակցութիւններ՝ նրանց շահերը պաշտպանող: Իւրաքանչիւր պետութեան մէջ ապրում են հոգևորականներ, կալւածատէրեր, արդիւնաբերողներ, վաճառականներ, արհեստաւորներ, չինովնիկներ, ազատ զբաղմունքների տէր ժառանգ (փաստաբաններ, բժիշկներ, վարժապետներ), գործաւատարներ. նմանապէս ամեն երկրում էլ կան նրանց կարիքները և շահերը պաշտպանող քաղաքական կուսակցութիւններ:

Եթէ, ուրեմն, կարելի է, պէտք է որոնել



այնպիսի ընտրական եղանակ, որն ապահովէր ազգային ժողովում ազգաբնակչության թէ մեծամասնութեան և թէ փոքրամասնութեան շահերի ներկայացուցչութիւնը: Այս բանը ցանկալի է նաև ուրիշ պատճառով: Իրաւական պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը, ինչպէս գիտենք, պէտք է պատկանի ամբողջ ժողովրդին. ազգային ժողովի մէջ, ինչպէս հայելում, պէտք է անդրադառնան ամբողջ ժողովրդի ցանկութիւնները, մտքերը և զգացմունքները: Ազգային ժողովը պիտի լինի արտայայտիչ ժողովրդական կամքի, իսկ այդ կամքը գոյանում է առանձին-առանձին անհատների ցանկութիւններից և փափագներից: Իրաւական պետութեան մէջ չէ կարելի իրաւունքից զրկել և ոչ մէկին, որը օրէնքով ունի այդ իրաւունքը: Այս պատճառով է, որ մարդկային միտքը երկար է խորհել այն հարցի մասին, թէ ինչպէս ապահովել նոյն կարիքները, նոյն հայեացքները և ցանկութիւնները ունեցող մարդկանց իւրաքանչիւր, փոքրիշատէ աչքի ընկնող, խմբի մասնակցութիւնը պետութեան գործերը վարելում՝ համաձայն իրենց թւի:

Այս հարցի ուղիղ լուծումը տալիս են այսպէս կոչւած արոպորցիոնալ կամ համեմատական ընտրութիւնները: Տեսնենք այժմ, թէ ընտրութիւնների այդ եղանակը ինչպէս է աւելի լա-

ապահովում ամբողջ ժողովրդի շահերը, քան սոսկ մեծամասնութեան ներկայացուցչութիւնը:

## 9. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿԱՄ ՊՐՈՊՈՐՑԻՈՆԱԼ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս ընտրութիւնների էութիւնը հետևեալն է: Իւրաքանչիւր քաղաքական կուսակցութիւն յայտնում է, թէ նա հասարակութեան որ դատկարգի շահերը և ինչ միջոցներով պիտի պաշտպանէ: Ընտրութիւնների օրը ընտրողները իրենց ձայնն են տալիս այս կամ այն կուսակցութեանը, նայած թէ որին նրանք ամենից աւելի կուգենային յանձնարարել իրենց շահերի պաշտպանութիւնը ազգային ժողովում: Ապա իւրաքանչիւր կուսակցութիւն հաշւում է, թէ նա ամբողջ երկրում ընդամենը քանի ձայն է ստացել և ըստ այնմ էլ ազգային ժողով է ուղարկում համապատասխան թւով ներկայացուցիչներ:

Ընտրական այս եղանակի առաւելութիւնները մեզ համար աւելի պարզ դարձնելու համար վերադառնանք վերև իբրև օրինակ առաջ բերած պետութեանը, որտեղ կան 10,000 ընտրողներ և երկու քաղաքական կուսակցութիւններ — աշխատաւորական և ազատամիտ: Այդ պետութեան մէջ կատարելով շրջանային ընտրու-



թիւներ „ըստ մեծամասնութեան“, 5,500 ընտրողներ ուղարկում են ազգային ժողով 10 ներկայացուցիչ, այն ինչ 4,500 բանւորները՝ չեն կարողանում ուղարկել և ոչ մէկին:

Ենթադրենք այժմ, թէ այդ պետութեան մէջ նոր ընտրութիւններ են կատարւում՝ „ըստ կուսակցութիւնների“: Ի՞նչ կստացւի այդ դէպքում: Հարկաւոր է ընտրել ընդամենը 10 ներկայացուցիչ, որովհետեւ գոյութիւն ունեն 10 շրջաններ. նշանակում է իւրաքանչիւր 1000 ընտրող իրաւունք ունի ազգային ժողով ուղարկելու մէկ ներկայացուցիչ: Եթէ որեւէ կուսակցութիւն 1000 ձայնից էլ պակաս ստանայ, այդ դէպքում նա իրաւունք չի ունենայ ներկայացուցիչ ուղարկելու: Ենթադրենք առաջւայ նման, թէ կան երկու կուսակցութիւններ—աշխատաւորական և ազատամիտ և թէ՛ աշխատաւորական կուսակցութիւնը ստացել է 5,500 ձայն, իսկ բանւորական կուսակցութիւնը՝ 4,500 ձայն: Այս դէպքում ազգային ժողով կերթան հինգ հոգի իբրեւ աշխատաւորական կուսակցութեան ներկայացուցիչներ, համաձայն նրա ստացած լիակատար հինգ հազար ձայնի, և չորս հոգի էլ իբրեւ ազատամիտ կուսակցութեան ներկայացուցիչներ՝ համաձայն նրա ստացած լիակատար չորս հազար ձայնի: Աշխատաւորական և ազատամիտ կուսակցութիւնների 500-ական ձայները հաշւի

չեն առնւում, որովհետեւ միայն 1000 ձայնը իրաւունք ունի մի պատգամաւոր ուղարկելու: Մէկ հազար ձայները այս օրինակում բաժանւել են հաւասարապէս երկու կուսակցութիւնների մէջ: Այդ պատճառով էլ ազգային ժողով են գնում միայն իննը հոգի. տասերորդին կարելի չեղաւ ընտրել. բայց դրա փոխարէն ազգային ժողովը ճշգրիտ կերպով արտացոլում է, հայելու պէս, ընտրողների իրար հետ ունեցած թւական յարաբերութիւնը: Այժմ աշխատաւորներն ունեն իրենց ներկայացուցիչները, ազատամիտները՝ իրենց. այն էլ՝ իւրաքանչիւրը այնքան, որ ոչ մէկն էլ տուժած չի լինում: 5,000 ընտրող-աշխատաւորներ կան և ունեն 5 ներկայացուցիչ. 4,000 ընտրող-ազատամիտներ և 4 ներկայացուցիչ,—որոնք պէտք է պաշտպանեն իրենց ընտրողների շահերը ազգային ժողովում: Եւ որովհետեւ 10,000 ընտրողներ իրաւունք ունեն ազգային ժողով ուղարկելու 10 ներկայացուցիչներ, այն ինչ ընտրւած են ընդամենը 9 հոգի—չնորհիւ հազար ձայնի հաւասարապէս բաժանմանը կուսակցութիւնների մէջ,—այդ դէպքում կարելի է կամ բոլորովին չընտրել 10-րդ ներկայացուցիչ, և կամ նրան ուղարկելու իրաւունք է տրւում այն կուսակցութեանը, որի կողմն է մնացած ձայների մեծամասնութիւնը:

Ենթադրենք, թէ աշխատաւորականները ստա-



ցել են 5,600 ձայն, իսկ ազատամիտները՝ 4,400 ձայն: Բացի լիակատար 5,000 ձայնից առաջինները ստացել են էլի մնացորդ 600 ձայն, իսկ ազատամիտները բացի լիակատար 4000 ձայնից՝ էլի մնացորդ 400 ձայն: Այդ դէպքում աշխատաւորականները կարող են իրենց կողմից ուղարկել դարձեալ մէկ, վեցերորդ ներկայացուցիչ. և այդպիսով բոլոր ներկայացուցիչների թիւը կանի տասը:

Այժմ մի փոքր աւելի բարդացնենք մեր օրինակը: Ենթադրենք, որ երկրում գոյութիւն ունեն չորս կուսակցութիւններ, — կղերական՝ որ պաշտպանուցմ է հոգևորականութեան շահերը, կալաժատիրական, աշխատաւորական և ազատամիտ: Ընդունենք, թէ կղերական կուսակցութիւնը ստացել է 2000, կալաժատիրականը՝ նմանապէս 2000, աշխատաւորութեանը՝ 3000 և ազատամիտ կ.-ը՝ 3000: Այս դէպքում ժողովրդական ներկայացուցիչների թիւը մնում է 10 և նրանք կբաժանւեն այս կերպ. 2 հոգի կղերական կուսակցութիւնից, 2 հոգի՝ կալաժատիրական, 3-ը աշխատաւորական և 3-ն էլ ազատամիտ կուսակցութիւնից: Եւ կամ ենթադրենք այսպէս. 4000 ձայն ստացել է աշխատաւորն կուսակցութիւնը, 3000 ձայն՝ սոցիալ-դեմոկ., 2000 ձայն՝ արդիւնաբերողների և վաճառականների կուսակցութիւնը և 1000 էլ՝ կառավարու-

թեան կուսակցութիւնը: Այս դէպքում էլ ազգային ժողովը բաղկացած կլինի 10 ներկայացուցիչներից, որոնցից չորսը կպաշտպանեն ընդհանուր աշխատաւորութեան շահերը, երեքը. պրոլետարիատի, երկուսը՝ արդիւնաբերողների և առևտրականների շահերը, իսկ մէկն էլ չինովնիկների շահերը:

Բոլոր արած ենթադրութիւններից մենք տեսնում ենք, որ ազգային ժողովը ճշգրիտ կերպով ներկայացնում է ընտրողների բաժանումը՝ երկրում գոյութիւն ունեցող որոշ դասակարգերի: Միայն այն կուսակցութիւնները հնարաւորութիւն չեն ունենայ ուղարկելու իրենց ներկայացուցչին, որոնք ընտրութիւնների ժամանակ հազարից պակաս ձայն կստանան: Թէև սա մի չարիք է, բայց շատ փոքր է՝ համեմատած նրա հետ, երբ ընտրողների համարեա թէ կէս մասը զրկւում է իր ներկայացուցիչներն ունենալու հնարաւորութիւնից: Իսկ յիշատակած օրինակում բոլոր ընտրողների միայն  $\frac{1}{10}$ -ից պակասը չի կարողանում օգտւել ընտրողական իրաւունքի բարիքներով: Ընտրութեան այս եղանակը — համաձայն իւրաքանչիւր քաղաքական կուսակցութեան տրւած ձայների համեմատական թւին — ունի և այն առաւելութիւնը, որ ամենևին կարիք չի զգացւում երկիրը ընտրողական շրջանների բաժանելու: Իսկ մենք գիտենք արդէն, թէ դա ինչ գլխացաւանք պատճառող բան է. ամբողջ եր-



կիրը բնակիչների համահաւասար թիւ կազմող շրջանների են բաժանում թէ չէ, տեսնում ես, որ էլի անհրաժեշտ է նոր բաժանումներ անել, որովհետեւ կան մարդիկ, որ մեռել են, շատերը նոր ծնւել, ուրիշները դուրս են գաղթել, շատերն էլ ներս գաղթել: Եւ երբ ձայները հաւաքւում են ըստ կուսակցութիւնների, այդ դէպքում ընտրութիւնների համար հարկաւոր է, որ օրը լինի տօն. մէկ էլ՝ որքան կարելի է շատ ընտրելավայրեր լինեն, ուր գրւած լինեն և ընտրական արկղներ, մօտը նստած վստահելի մարդիկ\*):

Համեմատական (պրոպորցիոնալ) ընտրութիւնների դէմ կարելի է առարկել նոյնը, ինչ որ ըստ «անւանացանկերով» ընտրութիւնների դէմ, այն է, որ ընտրողը չգիտէ, թէ ով պիտի լինի իր ներկայացուցիչը: Երբ նա ընտրում է իր շրջանում, այդ դէպքում նա ընտրում է մի որոշ անձն, որն իր թեկնածութիւնն է դրել: Ընտրողը ճանաչում է այդ մարդուն: Սակայն՝ ոչինչ չէ խանգարում ընտրողին պրոպորցիոնալ ընտրութիւնների ժամանակ էլ ճանաչել իր ընտրելիներին: Չէ որ ենթադրւում է, որ իւրա-

\*) Ներկա,ումս Ռուսաստանում արդէն գործադրւում է համեմատական ընտրութեան այս նշանակաւոր քաղաքական ընտրութիւնների ժամանակ: Նոյնը ծրագրւում է նաև Սահմանադիր ժողովի համար:

քանչիւր կուսակցութիւն յայտարարում է իր թեկնածուների անունները ժողովրդական ներկայացուցչութեան համար: Անարժան ընտրելիների դէմ բողոքել կարող է իւրաքանչիւր ոք: Իր կողմից էլ ընտրողը խորհուրդ կարող է տալ կուսակցութեանը լրացնել թեկնածուների ձայնը այս կամ այն մարդկանց անունով, որոնց նա անձամբ ճանաչում է և արժանի է համարում ժողովրդական ներկայացուցչութեան համար: Եւ եթէ նա, յիրաւի, կերևայ որ արժանաւոր է այդ դէպքում կուսակցութիւնը անտարակոյս կդնէ նաև նրա թեկնածութիւնը:

Այս բոլորից յետոյ կուսակցութիւնների թեկնածուները ամենուրեք, թէ մամուլի մէջ և թէ ժողովներում կաշխատեն արծարծել և պաշտպանել կուսակցութեան հայեացքները, կծանօթացնեն ընտրողներին կուսակցութեան հետ: Այդպէս էլ անում են բոլոր երկիրներում թեկնածուները, հանդէս գալով մերթ իբրեւ գրողներ և մերթ իբրեւ հոեւորներ: Այդ նշանակում է՝ կուսակցութեան ամեն մի թեկնածուի կճանաչեն ընտրողները, որոնք կամ լսել են նրան ժողովներում, կամ կարդացել են նրա յօդւածները, և կամ լրագրական զեկուցումների միջոցով ծանօթացել են նրա ճառերի հետ՝ արտասանւած ժողովրդական ներկայացուցիչների ժողովում: Եւ քանի մի թեկնածու աւելի ճանապարհորդի



երկրում, խօսի քաղաքներում և գիւղերում ժողովրդի հետ, այնքան էլ աւելի լաւ կճանաչեն նրան ընտրողները։ Մի խօսքով՝ հիմնաւոր չէ այն առարկութիւնը, թէ ընտրողը չի ճանաչի իր ներկայացուցիչն։

Այսպէս ուրեմն, համեմատական ընտրութիւններ ասելով՝ հասկանում ենք ընտրողների ձայն տալը այս կամ այն քաղաքական կուսակցութեան օգտին և իւրաքանչիւր կուսակցութեանը վերապահել՝ ուղարկել ժողովրդական ներկայացուցիչների ժողովը թեկնածուների այնքան թիւ, որ համապատասխանում է նրան տրւած ձայների թւին։ Մի կուսակցութեան տրւած բոլոր ձայների թիւը բաժանւում է օրէնքով ազգային ժողով մէկ պատգամաւոր ուղարկելու համար պահանջուող ձայների ամենափոքր թւի, և այդպիսով որոշւում է, թէ կուսակցութիւնն ընդամենը քանի ներկայացուցիչ ուղարկելու իրաւունք ունի։

Այժմ մենք արդէն գիտենք, թէ ինչպէս կարելի է իմանալ այն ներկայացուցիչների թիւը, որ իւրաքանչիւր կուսակցութիւն իրաւունք ունի ներկայացուցչական ժողովն ուղարկելու։ Բայց, չէ՞ որ, այդ ներկայացուցիչները պէտք է ընտրւեն ընտրողների կողմից, և ոչ թէ նշանակւեն կուսակցութեան կողմից։ Ահա թէ ինչպէս են տեղի ունենում պրոպոզիցիոնալ ընտրութիւն-

ները։ Իւրաքանչիւր կուսակցութիւն պատրաստում է իր թեկնածուների ցանկը։ Ենթադրենք զարձեալ, թէ երկու կուսակցութիւն կայ—աշխատաւորական և ազատամիտ։ Առաջին կուսակցութիւնը գրում է ցանկում 8 անուն, երկրորդը՝ 6 անուն։ Ահա, ասենք, աշխատաւորական թեկնածուների անունները.—Յովհաննիսեան, Սեդրակեան, Չամչեան, Օհանեան, Սերօբեան, Պահլաւունի, Մակարեան, Կարապետեան։

Մենք գիտենք, որ լիակատար 1000 ձայնը միայն իրաւունք ունի մէկ ներկայացուցիչ ուղարկելու ազգային ժողով։ Ընտրողները տալիս են իրենց ձայնը Յովհաննիսեանին, որ առաջինն է ցանկի մէջ։ Հենց որ նրա համար տրւում է 1000 ձայն, նա յայտարարւում է ընտրւած։ Յետոյ ընտրւում է Սեդրակեան։ Ենթադրենք, թէ ընտրողները նրան լաւ չեն ճանաչում և կամ որևէ պատճառով նա դուր չէ գալիս հենց ձանաչողներին. նա ստանում է 750 ձայն. այդ նշանակում է, որ նա ընտրւած չէ։ Ապա մէկը միւսի յետևից ընտրւում են՝ Չամչեան, Օհանեան, Սերօբեան, Պահլաւունի, Մակարեան. իւրաքանչիւրը ստանում է 1000 ձայն։

Մնում է միայն Կարապետեանը, որը ստացել է 500 ձայն, բայց այդ ոչ այն պատճառով, որ ընտրողները նրան անարժան են համարել, այլ այն պատճառով, որ աշխատաւորական կու-



սակցութեանը ձայն տուող էլ չկայ: Ազատամիտ  
կուսակցութիւնն էլ դրել է ցանկում վեց թեկնա-  
ծուներ—Տէրեան, Սարգսեան, Մարկոսեան,  
Ստեփանեան, Բարսեղեան և Աւագեան: Առաջին  
չորսը ընտրուած են մէկը միւսի յետեից, ստա-  
նալով—Տէրեանը՝ 1100 ձայն, Սարգսեանը՝ 1050  
ձայն, Մարկոսեանը՝ 1025 ձայն և Ստեփանեանը՝  
1000 ձայն: Բոլոր չորս հոգին ուրեմն ստացել  
են 4175 ձայն: Բարսեղեանը ստացել է 200,  
իսկ Աւագեանը 25 ձայն. այդ նշանակում է, որ  
այս երկուսը ընտրւած չեն: Իսկ ընդամենը  
ազատամիտ կուսակցութեան օգտին տրւել է  
4500 ձայն:

Այսպէս ուրեմն՝ համեմատական կամ պրո-  
պորցիոնալ ընտրութիւնների ժամանակ ընտրող-  
ները կարող են ձայն տալ թէ միանգամից մի  
կուսակցութեան թեկնածուների ամբողջ ցան-  
կին և թէ իւրաքանչիւր մէկին՝ առանձին: Ան-  
ւանացանկերով ձայնտուութիւնը, այսինքն միան-  
գամից բոլոր թեկնածուներին ձայն տալը, ունի  
մի քանի անյարմարութիւններ, որոնցից վիսա-  
ւորն է՝ ընտրողի կամքի ճնշումը: Բանն այն է,  
որը ընտրողը ցանկանում է օրինակ իր ներ-  
կայացուցիչն ունենալ աշխատաւորական կուսակ-  
ցութեան մի անդամի, այն ինչ ցանկում զբւած  
է մի ինչ-որ Սեղրակեանի անուն, որին նա որեւ  
է պատճառով անարժան է համարում ներկայա-

ցուցիչ լինելու, թէպէտ նա էլ է պատկանում  
իր կուսակցութեանը: Եթէ ընտրութիւնը տեղի  
է ունենում անւանացանկով, այդ դէպքում նա  
ձայն պիտի տայ նաև Սեղրակեանին: Իսկ եթէ  
ձայնը տրւի ցանկում յիշւած իւրաքանչիւր թեկ-  
նածուի առանձին, այդ դէպքում ընտրողը իր  
ձայնը տալիս է նրան, ով իրան ամենից աւելի  
է ծանօթ, որին նա ամենից աւելի կցանկար  
տեսնել ընտրւած իբրեւ իր ներկայացուցիչ: Ան-  
ւանացանկերով ընտրութիւնը կոչւում է քաղա-  
նական, որովհետեւ ընտրողը իր ձայնը տալիս  
է միանգամից շատ անունների. առանձին-առան-  
ձին մարդկանց ընտրելու եղանակն էլ կոչւում  
է միանւանական, որովհետեւ ընտրողը ձայն է  
տալիս մէկ անուն:

Համեմատական ընտրութիւնները գոյութիւն  
ունեն Դանիայում, Բելգիայում, Սերբիայում և  
մի քանի ուրիշ պետութիւններում, օրինակ՝  
Շւէյցարական հասարակապետութեան, մէջ այժմ  
նաև Ռուսաստանում: Այն հանգամանքը, որ  
ընտրութեան այս եղանակը քիչ է տարածւած,  
գա՛րացատրւում է նրանով, որ նա ձեռնառ է  
պետութեան մէջ գերիշխող դասակարգերին,  
այդ պատճառով էլ որանք բոլոր ոյժով ընդդի-  
մանում են ընտրութեան այս եղանակի ներմուծ-  
մանը:



# 10. ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՉԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Իրաւական պետութեան մէջ ժողովրդական ներկայացուցիչներ ընտրութիւնները կատարելուց յետոյ այդ ներկայացուցիչները հաւաքուում են միատեղ՝ պետական գործերը քննելու և վճռելու նպատակով: Ժողովրդական ներկայացուցիչների այս ժողովը կոչւում է ներկայացուցչական ազգային ժողով: Ֆրանսիայում նա կոչւում է պատգամաւորների (դեպուտատներ): Այլապէս, Գերմանիայում՝ ռայխստագ, մի խօսքով՝ իւրաքանչիւր պետութեան մէջ առանձին անունով: Ներկայացուցչական ժողովը տեւական հաստատութիւն է պետական բոլոր ընթացիկ գործերը վճռելու համար: Պետութիւնների մեծամասնութեան մէջ այդ ժողովը ունենում է տարեկան երկու նստաշրջան՝ չորս ամիս անընդհատ տևողութեամբ: Կարիք եղած դէպքում ժողովը հրաւիրւում է նաև ներկայացուցիչների հանդուստութեան համար սահմանւած արձակուրդների ժամանակ, եթէ այդ բանը պահանջում է պետական գործերի անյետաձգելութիւնը և կարեւորութիւնը:

Բացի տեւական ներկայացուցչական ազգային ժողովից՝ մի քանի երկիրներում եղել է նաև ժամանակաւոր ներկայացուցչական Սահմանադիր կամ Հիմնադիր ժողով: Ինչպէս ինքը

«սահմանադիր» բառը ցոյց է տալիս՝ այդ ժողովը գումարւում է այն նպատակով, որ վերև յիշատակած ոստիկանական պետութեան փլատակների վրայ հիմնէ իրաւական պետութիւն: Իր գործը կատարելուց յետոյ, այսինքն պետական օրէնքներ սահմանելուց յետոյ Սահմանադիր ժողովը արձակւում է ինքն իրեն, և ժամանակաւորապէս իր ձեռքն եղած բարձրագոյն իշխանութիւնը տալիս է տեւական ներկայացուցչական ժողովին:

Ընդհանուր, ուղղակի, հաւասար, գաղտնի ձայնաւութեամբ կոչւած Սահմանադիր ժողովները, չնայած իրենց կարծատե գոյութեան, ամենալաւ միջոցն են եղել ժողովրդական իրաւունքները և ազատութիւնները հաստատելու համար: Ոստիկանական պետութիւնը շատերին է ձեռնտու եղել, օրինակ չինոյիկներին և հարուստ մարդկանց: Եւ Սահմանադիր ժողովներում կռիւ է մղել հասարակութեան՝ ամեն տեսակ արտօնութիւններով օժտւած հին դասակարգերի ներկայացուցիչների և նորերի ներկայացուցիչների միջև: Հոգևորականութիւնը, չինոյիկները, ազնական-կալածատէրերը, վաճառականները և գործարանատէրերը ամեն ջանք թափել են իրենց ներկայացուցիչների միջոցով պաշտպանել իրենց օգտաւէտ և արտօնեալ դիր-



քը: Չէ որ նրանք տէր ու տնօրէն էին ոստիկանական պետութեան մէջ: Ու յաճախ յաջողւել է նրանց այդ բանը շնորհիւ ժողովրդի խաւար մտքի և տգիտութեան: Արհեստաւորները, բանւորները և գիւղացիները ներկայացուցիչներին հեշտ չէ եղել Սահմանադիր ժողովում կըռւել այն բանի համար, որ պետական նոր կազմը իրենց համար նպաստաւոր լինի. զանազան երկիրներում էլ նրանք ունեցել են ոչ պակաս յաջողութիւն: Յաճախ էլ պատահել է, որ այն, ինչ պիտի կատարէր Սահմանադիր ժողովը, արել է հետզհետէ, տասնեակ տարիների ընթացքում, տեական ներկայացուցչական ժողովը: Յամենայն դէպս՝ էլ խօսք լինել չէ կարող այն մասին, որ Սահմանադիր ժողովը անհրաժեշտ բան է ամեն մի երկրի համար, որ վճռել է հիմնել իրաւական պետութիւն: Վտանգաւոր բան է պետական վերակազմութեան գործը յանձնել նրանց, որոնք սովոր են կամայականութեան:

# 11. ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը յաճախ կոչում են օրէնսդիր ժողով, որովհետեւ այդ ներկայացուցիչների գործունէութեան գլխաւոր առարկան օրէնքներ հրատարակելն է:

Սակայն օրէնքներ քննութեան առնելուց, փոփոխելուց և վերացնելուց զատ ժողովրդական ներկայացուցիչները սահմանում և փոփոխում են հարկերը և տուրքերը: Նրանք տնօրինում են պետական բոլոր եկամուտները և ծախքերը, այսինքն՝ սահմանում են եկամուտի բոլոր աղբիւրները և որոշում են, թէ ժողովրդական փողերը ինչպէս պիտի գործադրւեն: Նրանք են որոշում, օրինակ, թէ որչափ է հարկաւոր ծախսել ժողովրդական լուսաւորութեան համար, դատարանի համար, աշխատողուրիներին և անբերիութիւնից վնասաւթներին օգնութեան հասնելու համար, թէ որքան է հարկաւոր ծախսել ներքին կառավարութեան վրայ, և այլն: Նշանակում է՝ ներկայացուցչական ժողովի գործունէութեան գլխաւոր առարկան է՝ օրէնքներ քննել և հրատարակել, պետական տնտեսութիւնը վարել, պետական ելեմուտքի ցուցակը հաստատել: Վերջին գործառնութիւնը շատ կարևոր բան է, որովհետեւ իրաւական պետութեան քաղաքացիները վճարում են միայն այն հարկերը, որոնք թոյլ են տրւած կառավարութեանը ժողովել՝ համաձայն ժողովրդական ներկայացուցիչների կողմից հաստատուած ցուցակի: Այսպիսով՝ ամեն տարի հրատարակուող այդ ցուցակը համարում է պարտադիր թէ քաղաքացիների և թէ կառավարութեան համար: Ոչ մի միջնորդ



իրաւունք չունի քաղաքացիներէց վերցնելու թէկուզ մի կոպէկ աւելի ելեմուտքի ցուցակի մէջ նշանակածից:

Այսպէս ուրեմն, օրէնսդրական իշխանութիւնը գտնուում է ներկայացուցչական ժողովի ձեռքին: Իսկ ի՞նչ ձեռքին է գտնուում կատարողական (գործադիր) կամ կառավարչական իշխանութիւնը: Սա գտնուում է մինիստրների խորհրդի կամ, ինչպէս ասում են, մինիստրների կաբինետի ձեռքին:

Իւրաքանչիւր պետութեան մէջ կան հետեւեալ կարգի մինիստրներ. — գինւորական, ծովային, առևտրի և արդիւնադործութեան, ներքին և արտաքին գործերի, աշխատանքի, արդարադատութեան, երկրագործութեան, պետական կայքերի և եկամուտների (ֆինանսների) մինիստրներ:

Իւրաքանչիւրը սրանցից գլուխ է կանգնած իր վարչութեան, իսկ ամենքը միասին կազմում են կաբինետ, որ և զբաղւում է բոլոր ընթացիկ գործերով: Մինիստրների կաբինետը կառավարում է երկիրը համաձայն ժողովրդական ներկայացուցիչների թոյլտուութեան և նրանց ցուցումների, միաժամանակ՝ կատարեալ յարգանքով դէպի երկրի հիմնական օրէնքները, այսինքն չխախտելով քաղաքացիների իրաւունքները և ազատութիւնները:

Այն երկիրներում, ուր գոյութիւն ունի կատարեալ ժողովրդապետութիւն, մինիստրների կաբինետը կազմւում է հենց ժողովրդական ներկայացուցիչների միջից:

Ահա թէ ինչպէս. ներկայացուցիչներից մէկն ունի զառնում է առաջին մինիստր: Ապա նա իրեն օգնական է կոչում ուրիշ ներկայացուցիչների, և նրանցից իւրաքանչիւրը անցնում է մէկ կամ միւս մինիստրութեան գլուխ: Երբ նրանք իրար մէջ են բաժանում պետութեան կառավարութիւնը, — այն ժամանակ ասում են՝ մինիստրների կաբինետը կազմւեց: Կաբինետի գլխաւորն է առաջին մինիստրը: Այժմ ծանօթանա՞նք այն բանի հետ, թէ մինիստրների կաբինետը ինչպէս է կառավարում երկիրը:

## 12. ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆԸ

Մենք արդէն գիտենք, որ ժամանակակից իրաւական պետութեան մէջ գործադիր կամ կառավարական իշխանութիւնը գտնուում է մինիստրների ձեռքին: Ի՞նչպէս խուսափել այդ իշխանութիւնը ի չարը գործադրելուց. յայտնի է, որ ոստիկանական պետութեան մինիստրները իրենց իշխանութիւնը գործ են զբեղ միշտ ի վնաս ժողովրդի: Այս բանը առաջ էր գալիս նրա-



նից, որ նրանք ժողովրդի առաջ պատասխանատու չէին, իսկ թագաւորի առաջ նրանց ունեցած պատասխանատուութիւնը հաւասարել է գէրօյի, որովհետեւ նա ինքն է եղել նրանց նշանակողը: Իրաւական պետութեան մէջ թէ միւստրոնների կաբինետը և թէ իւրաքանչիւր միւստր առանձին՝ պատասխանատու են ժողովրդական ներկայացուցիչների առաջ:

Այդ պատասխանատուութիւնը երկու տեսակ է. պարլամենտական՝ այսինքն հենց իրենց, ժողովրդական ներկայացուցիչների առաջ, և քրէական՝ դատարանի առաջ: Պարլամենտական պատասխանատուութեան էութիւնը հետեւեալն է: Մինիստրների կաբինետը կառավարում է երկիրը, իսկ նրա գործունէութիւնը միևնոյն ժամանակ ենթարկւում է դատաւիտման կամ խրախուսանքի՝ լրագիրներում և ներկայացուցչական ժողովում: Եթէ մի մինիստր տեսնում է, որ յարձակում է գործւած վրան, նրա գործունէութիւնը որևէ կերպ դատաւիտւելով, այդ դէպքում նա ներկայացուցչական ժողովի առջև է դնում իր վստահութեան հարցը, որն և ենթարկւում է ձայնաւութեան. եթէ ներկայացուցիչների մեծամասնութիւնը վստահութիւն արտայայտէ այդ մինիստրին, նա կմնայ իր պաշտօնի մէջ, իսկ եթէ մեծամասնութիւնը անվստահու-

թիւն արտայայտէ, այդ դէպքում արդէն նա հրաժարական պիտի տայ:

Բոլորովին նոյն կերպ է վարւում նաև առաջին մինիստրը, երբ որևէ պատճառով կասկած է արտայայտւում բոլոր մինիստրների գործունէութեան վերաբերմամբ: Եթէ ներկայացուցիչների մեծամասնութիւնը անվստահութիւն արտայայտէ ամբողջ կաբինետին, այդ դէպքում էլ բոլոր մինիստրները պիտի հրաժարական տան, և մի ուրիշը յանձն կառնէ նոր կաբինետ կազմելը՝ վերև յիշատակած ճանապարհով:

Բացի դրանից՝ ժողովրդական ներկայացուցիչները մշտապէս հարցապնդութեան են անում մինիստրներին նրանց գործունէութեան վերաբերմամբ, հետևում են նրանց գործողութիւններին: Սակայն մինիստրների պարլամենտական պատասխանատուութիւնը տեղի է ունենում միայն այն ժամանակ, երբ մինիստրները սոսկ թեթև վերաբերմունքից կամ անհոգութիւնից են զանցառութիւն կատարել, և կամ ազգային ժողովի կազմի մէջ կատարւած այնպիսի փոփոխութեան դէպքում, որի հետ տեղի է ունենում նաև պետութեան կառավարութեան գործերի վերաբերմամբ եղած հայացքների կատարեալ յեղաշրջում: Իսկ եթէ մինիստրներից մէկը կամ շատերը որևէ յանցանք գործեն, օրինակ եթէ նրանք կաշառք վերցնեն, կամ որևէ կերպ քա-



դաքացիների իրաւունքին դիպչեն, այդ դէպքում ներկայացուցիչների ժողովը ձայների բաղմութեամբ որոշում է կայացնում՝ նրանց դատի ենթարկելու. այդ դէպքում արդէն դատարանն է վճռում նրանց յանցաւորութեան հարցը: Ուրեմն՝ բացի պարլամենտական պատասխանատուութիւնից, այսինքն հրաժանական տալու պարտականութիւնից, մինիստրները ենթարկւում են նաև քրէական պատասխանատուութեան և պիտի կրեն այն պատիժը, որ նրանց վրայ կգնէ դատարանը:

### 13. ԴԱՏԱՐԱՆԸ ԻՐԱԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մենք դիտենք, որ իրաւական պետութեան մէջ բոլոր քաղաքացիները իրար հաւասար են ոչ միայն օրէնքի առաջ, այլ նաև դատարանի առաջ: Ի՞նչպէս պէտք է սահմանել այդ դատարանը, ում ձեռքին է գտնւում դատական իշխանութիւնը: Սա ևս գտնւում է ժողովրդի ձեռքին, քանի որ իբրև դատարանական հիմունք ծառայում է երկու սկզբունք, — դատաւորների ընտրւած ու անփոփոխելի լինելը: Իրաւական պետութեան մէջ բոլոր դատաւորները ընտրւում են ժողովրդից և չեն կարող պաշտօնից հեռացւել կառավարութեան կողմից:

Օրէնքների և ուրիշ քաղաքացիների դէմ գործւած աննշան զանցառութիւնները քննում են ընտրւած հաշտարար դատաւորները: Դա անհատական դատարանն է: Օրէնքների և քաղաքացիների դէմ գործւած բոլոր կառուր զանցառութիւնները — յանցանքները դատւում են երդեալ դատաւորի կողմից: Երդեալ դատաւոր պարտաւոր են լինել բոլոր 25 տարեկան դարձածները. սա ոչ միայն իրաւունք է, այլ նաև պարտականութիւն:

Իսկ դատաւորների անփոփոխութիւնը այն է նշանակում, թէ կառավարութիւնը իրաւունք չունի փոխել իրեն չուղած դատաւորին: Դատաւորը պաշտօնագրով է լինել կարող է միայն դատարանի միջոցով, երբ սա ապացուցանէ նրա յանցանքը: Այս անփոփոխելիութեան օրէնքը շատ կարևոր է արդարադատութեան համար, որովհետև դատաւորը այն ժամանակ կդատէ իւրաքանչիւրին խղճով, ինչ բարձր պաշտօն էլ նրանք պետութեան մէջ վարելիս լինեն, երբ նա չվախենայ, թէ կառավարութիւնը կգրկէ նրան պաշտօնից, որևէ բարձրաստիճան պաշտօնեայի դատապարտութեան մատնելու պատճառով: Չէ որ իրաւական պետութեան մէջ միասեռակ դատաստան կայ բոլորի համար, սկսած առաջին մինիստրից:

Բոլոր դատի ենթարկւածները իրաւունք ունեն ունենալու իրենց պաշտպանը ոչ միայն



դատաստանի առաջ, այլ նաև նախնական քննութեան միջոցին: Սա էլ մեղադրողի համար կարևոր իրաւունք է, որովհետև մեղադրողները կամ դատախազները յաճախ տարւում են մարդկանց դատապարտելու ցանկութեամբ՝ ինչ գնով էլ որ լինի. բաւական է, որ մէկին կառկածի ենթարկեն, իսկոյն նրա դէմ աշտուութեամբ փաստեր կժողովեն: Այս փաստերը դատավարութեան ժամանակ յաճախ անհիմն են երևում, և ինքը դատախազը ստիպւած է լինում հրաժարել մեղադրելուց: Եւ ահա, որպէսզի ամենևին չսկսւի անօգուտ մեղադրանք և անմեղ մարդու ի դուր տեղը ձերբակալելով չտանջեն, ամեն մէկը, որ որևէ յանցանք արած լինելում կասկածի է ենթարկւում, իրաւունք ունի պահանջելու, որ նրա պաշտպանը ներկայ գտնւի նախնական քննութեան ամբողջ ժամանակը, որ նա ծանօթանայ առաջ բերւած փաստերի հետ և մեղադրողին ցոյց տայ նրանց թերութիւնները և անբաւարարութիւնը:

#### 14. ՌԵՖԵՐԵՆՏՈՒՄ (ՀԱՐՑՈՒՄ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻՆ)

Վերև յիշատակեցինք, որ ժամանակակից պետութիւնները իրենց բնակիչների թւով և

բռնած տարածութեամբ այնչափ մեծ են, որ բոլոր պետական գործերի անմիջական լուծումը բոլոր քաղաքացիների ձայնաւութեան միջոցով — աներևակայելի բան է: Այդ պատճառով էլ ոչ մի տեղ գոյութիւն չունի բոլոր քաղաքացիների տեական և անմիջական ժողով, ուր վճռէին բոլոր գործերը, այլ ամեն տեղ մտցրել է պետութիւնը ընտրւած ներկայացուցիչների միջոցով կառավարելու եղանակ:

Սակայն մի քանի պետական գործեր կան, այնքան կարևոր, որ նրանց վերաբերմամբ ցանկալի է հարցնել անմիջապէս բոլոր քաղաքացիներին: Այսպէս օրինակ՝ պատերազմ յայտարարելու կամ խաղաղութեան դաշը կոչելու հարցերը, ընդհանուր զինւորագրութիւն մտցնելու կամ վերացնելու հարցը, պետութեան կառավարութեան եղանակը փոխելը, — այս բոլոր հարցերը այնչափ սերտ կերպով շօշափում են բոլոր քաղաքացիների շահերը, որ ցանկալի է նրանց լուծումը՝ յենւելով օչ թէ ներկայացուցիչների կարծիքի վրայ, այլ իրենց՝ ընտրողների անմիջական ձայների վրայ:

Շւէյցարական հասարակապետութեան մէջ յաճախ արել է այդ փորձը՝ բոլոր քաղաքացիների համար կարևոր համարւող գործերի մասին ընտրող-քաղաքացիներին անմիջապէս հարցում անելով: Այդ հարցումը յաջողութիւն է գտել և



ստացել է ռեֆերենդում անունը, այդ պատճառով էլ Շւէյցարիան յաճախ կոչում են ռեֆերենդար հասարակապետութիւն, ժողովրդին հարցնող պետութիւն:

Բուն հարցումը այսպէս է կատարւում: Կառավարութիւնը առաջարկում է բոլոր քաղաքացիներին այս հարցը. «Կամենո՞ւմ էք», օրինակ, «շարունակել պատերազմը, թէ՛ կամենում էք հաշտութեան դաշն կռել»՝ և բոլոր ցանկացողները պարտաւոր են պատասխան տալ մի որոշ ժամանակ: Ապա հաշւում են յօգուտ կուի կամ հաշտութեան տրւած ձայները և կառավարութիւնը վարւում է մեծամասնութեան կամքի համաձայն:

Եթէ մի պետութեան բոլոր քաղաքացիները լուսաւորւած են, այդ դէպքում կարելի է համաժողովրդական ձայնաւութեան ենթարկել և օրէնքների ամբողջ նախագծեր: Յիշատակած փորձը պատահական չէ, որ կատարւել է Շւէյցարիայում. բանը այն է, որ Շւէյցարիան շատ փոքրիկ պետութիւն է, և այնտեղի ժողովուրդն էլ շատ լուսաւորւած է: Ու այս երկու պատճառներն են նպաստել ռեֆերենդումի կամ ընդհանուր հարցման բարեյաջող լուծմանը:

# 15. ՕՐԷՆՍԻՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՌՈՒՆԴԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ (ԻՆՏԵՐԱՏԻՎ)

Ինիցիատիվի (նախաձեռնութեան) իրաւունք ասելով հասկանում ենք այն իրաւունքը, որի համաձայն ներկայացուցչական ժողովի քննութեան առարկայ կարելի է դարձնել օրինագծեր: Սովորաբար այդ իրաւունքը ունեն ժողովրդական բոլոր ներկայացուցիչները, սակայն նրանցով օգտւում են համարեա բացառապէս մի նիստերը, կաբինետի անդամները, որովհետև օրինագիծ կազմելու համար հարկաւոր է փորձառութիւն, որ չունի ամեն մի ժողովրդական ներկայացուցիչ: Ժողովրդական ներկայացուցիչները սովորաբար անում են առաջարկութիւններ կառավարութեանը, այսինքն մինիստրներին, ասում են, թէ անհրաժեշտ է այս կամ այն օրէնքը հրատարակել:

Սակայն շնորհիւ այն բանի՝ որ մի քանի պետութիւններում ղոյութիւն չունի անադարտ ժողովրդական ներկայացուցչութիւն, այդ պատճառով հենց իրենք ներկայացուցիչներն էլ յաճախ խուլ են մնում կեանքի պահանջների հանդէպ: Ժողովուրդը մեծ կարիք կարող է զգալ որևէ օրէնք հրատարակելու, սակայն ոչ կառավարութիւնը, և ոչ էլ ներկայացուցչական ժողովը կհրատարակեն այդպիսի օրէնք: Ի՞նչ անել



այս դէպքում: Չարիքի առաջն առնել կարելի է նրանով, որ ներկայացուցչական ժողովից դուրս մի որոշ թիւ կազմող քաղաքացիներ իրաւունք ունենան օրինագծեր կազմելու և պահանջելու, որ նրանց քննութեան ենթարկեն օրէնսդրական ժողովում: Այս նպատակով էլ հրատարակուեմ է այսպիսի օրէնք, — ինիցիատիվի (նախաձեռնութեան) իրաւունք ունի տմեն մի քաղաքացի:

Ենթադրենք, թէ մի քաղաքացի առաջարկուեմ է որեւէ օրինագիծ. եթէ յօգուտ նրա առաջարկութեան ձայն կտան որոշ թիւ, աւելի 100 հազար ընտրողներ, այդ դէպքում ժողովրդական ներկայացուցիչները պարտաւորուեմ են քննել նրա օրինագիծը և հրատարակել համապատասխան օրէնք:

Շնորհիւ այն բանի, որ օրէնսդրական նախաձեռնութեան իրաւունք ունեցող անձերի շրջանը ընդլայնուեմ է, օրէնսդրութիւնն էլ կեանքից յետ չի մնայ: Երբեմն մի ժողովրդի կեանքում ծագուեմ են այնպիսի հարցեր և յարաբերութիւններ, որ շօշափուեմ են ընդամենը 100 հազար մարդկանց շահերը, և որոնք իրաւունքով պահանջուեմ են վճիռ և օրինական ձանաչուեմ: Ժամանակակից պետութիւններից կրկին Շւէյցարիան է, որ առաջին անգամ ընդլայնեց օրէնսդրական նախաձեռնութեան իրաւունքը վերոյի-

շեալ մտքով, տարածելով այն՝ բոլոր ընտրողների վրայ:

## 16. ՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՄԻՈՐ ԳԼՈՒԽԸ

Վերև ասեց, որ իրաւական պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը ամբողջապէս գտնուեմ է ժողովրդի ձեռքին: Ժողովուրդը — վեհապետը այստեղ հանդիսանուեմ է իրրև գլուխ պետութեան:

Սակայն բացի ժողովրդից, իրաւական պետութեան այսպէս ասած իսկական գլխից, բոլոր պետութիւններում գոյութիւն ունի և պատուաւոր գլուխ:

Ֆրանսիայում, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում նա ընտրովի է, իսկ Անգլիայում՝ ցմահ է և ժառանգական: Պետութեան այս պատուաւոր գլխի գոյութիւնը նրանով է պարզուեմ, որ ստիկանական պետութեան գոյութեան երկար դարերի ընթացքում ազգաբնակչութիւնը սովորել է տեսնել պետութեան գլուխն անցած թագաւորներ:

Իսկ երբ արքայական իշխանութիւնը ոչնչացաւ, ժողովուրդը, սովորած լինելով տեսնել պետութեան շօշափելի գլխաւոր, սկսեց ընտրել պետութեան պրեզիդենտ կամ նախագահ:



Անգլիայում՝ իբրև այդպիսի նախագահներ հանդիսանում են նախկին ինքնիշխան թագաւորների յետնորդները: Իսկ ի՞նչ են անում նախագահները: Սովորաբար նրանք համարւում են պետութեան ներկայացուցիչներ՝ ժողովրդական կեանքի բոլոր հանդիսաւոր դէպքերում և նրանց միջոցով է մի ժողովուրդ միւսի հետ բանակցում: Ամերիկայի նախագահը, որ ընտրւում է ամբողջ ժողովրդից, հանդիսանում է գործադիր իշխանութեան բարձրագոյն ներկայացուցիչ, որին և ստորագրւում են մինիստրները: Անգլիայում նախագահի պաշտօնը վարում է թագաւորը, որը, ինչպէս ասւեց սկզբում, «թագաւորում է, բայց չէ կառավարում»:

Անգլիայում թագաւորն ունի միայն պաւաւոր իրաւունքներ: Այսպէս՝ նրա անունով է կատարւում դատավարութիւն, նա է յանձնարարում համայնքների պալատի առանձին ներկայացուցիչներին կազմել մինիստրների կաբինետ, երբ այդ հարկաւոր է լինում. նրա անունով են գրւում շատ պետական թղթեր և օրէնքներ, նա է հաստատում իր ստորագրութեամբ ժողովրդական ներկայացուցիչների որոշումները: Առանց մինիստրների համաձայնութեան, որոնք պատասխանատու են ժողովրդական ներկայացուցիչների առաջ, թագաւորը մի բայլ չէ կարող անել: Նրա անունով բաց թողնւող ամեն մի թուղթ

պէտք է անպատճառ ստորագրւի համապատասխան մինիստրի կողմից նրա համար, որ ժողովրդական ներկայացուցիչները պատասխանատւութեան կոչեն մինիստրին, եթէ թագաւորը մի ապօրինի կարգադրութիւն արած լինի: Մինիստրները գիտեն, որ իրենք են պատասխանատու թագաւորի արած ամեն մի ապօրինի հրամանի համար, այդ պատճառով էլ նրանք ստորագրւում են միայն նրա ան թղթերը, որոնց բովանդակութիւնը համաձայն է երկրի հիմնական օրէնքներին: Այսպիսով՝ անգլիական թագաւորը չէ կարող բնաւ խախտել օրէնքները կամ քաղաքացիների իրաւունքները: Բարձրագոյն իշխանութիւնը նրա ձեռքին չէ, այլ անգլիական ժողովրդի:

Ուրիշ բան է, երբ աչք ենք դարձնում դէպի Գերմանիա, որտեղ բարձրագոյն իշխանութիւնը բաժանւած է կայսրի և ժողովրդի մէջ այնպէս, որ կայսրը գործադիր իշխանութեան և զօրքի գլուխ է համարւում, իսկ ժողովուրդը՝ օրէնսդրական և դատաստանական իշխանութեան գլուխ, — այն էլ ոչ կատարեալ չափով: Գերմանացիները դեռ շատ մնացորդներ ունեն ոստիկանական պետութիւնից:

Գերմանական կայսրը (պրուսական թագաւորը) կարող է, առանց հարցնելու ժողովրդական ներկայացուցիչներին՝ ուրիշ պետութիւն



ների հետ պայմաններ և դաշնադրութիւններ կռել, կռիւ և հաշտութեան հարցերը վճռել, բոլորի համար պարտադիր հրովարտականք հրատարակել, մինիստրներ նշանակել և արձակել: Մինիստրները պատասխանատու են նրա առաջ, և ոչ ժողովրդական ներկայացուցիչների առաջ, որոնք կարող են մինիստրներին հասցրած բանաւոր կշտանքանքներով միայն իրենց սիրտը մխիթարել, իսկ արձակել տալ՝ այդ նրանց իրաւունքը չէ: Իրերի դրութիւնը նոյնն է և Աստորիայում: Նշանակուած է՝ այս երկու պետութիւններում զոյւթիւն չունի ոչ կատարեալ ժողովրդապետութիւն և ոչ էլ թագաւորի ինքնակալութիւն:

Բարձրագոյն իշխանութիւնը այդ երկիրներում գտնուած է աւելի շուտ կայսրի ձեռքին, թէպէտ և կրճատուած սահմանափակ չափով:

Պետութեան կառավարութեան այս եղանակը, ինչպէս արդէն գիտենք, կոչւում է սահմանադրական միապետութիւն և հանդիսանում է իբրեւ մի անցողական աստիճան ստիկանական պետութիւնից դէպի իրաւական պետութիւն:

Գերմանական ժողովուրդը դեռ մինչև օրս ոյժ չէ ունեցել իր ձեռքն առնելու ամբողջ բարձրագոյն իշխանութիւնը: Գերմանական կայսրը դեռ զօրեղ է, և գերմանացիները մինչև օրս կուտւում են նրա զէմ:

Որովհետև զօրքը Գերմանիայում երկուս է տալիս թագաւորին և ոչ ժողովրդին, այդ պատճառով էլ գերմանական կայսրի համար այդ զօրքը հանդիսանում է իբրեւ մի ոյժ, որի վրայ էլ նա յենւում է ժողովրդի դէմ ունեցած կուտում:

Իսկ իրաւական պետութեան մէջ զօրքը երկուս է տալիս ոչ թէ նախագահին, այլ ժողովրդին, և խոստանում է պահպանել երկրի հիմնական օրէնքները և քաղաքացիների իրաւունքները:

#### 17. ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԻՐԱԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Երբ մարդիկ միասին են ապրում, այդ գէպքում նրանց մէջ երևան են դալիս այնպիսի կարիքներ, որոնք չէին լինի, եթէ մարդկանց մէջ չլինէր և ոչ մի յարաբերութիւն, իւրաքանչիւն պարէր առանձին:

Մարդկանց համայնակեցութիւնը պետութեան մէջ պահանջում է նաև ընդհանուր ծախքեր՝ հասարակական կարիքները հոգալու համար: Այսպէս՝ փող է հարկաւոր հասարակական հիմնարկութիւնների համար, դատաւորներ պահելու, երկաթուղիներ շինելու համար, պոստի հեռագրատան համար, ժողովրդական լուսաւորու-



թեան համար, և այլն: Շախսեր անելու անհրա-  
ժեշտութիւնը ստիպում է կառավարութեանը  
եկամուտի աղբիւրներ որոնել:

Մենք գիտենք, որ ոստիկանական պետու-  
թեան կառավարութիւնը հարկերով ծանրաբեռ-  
նում է գլխաւորապէս գիւղացիներին: Դրանք  
են՝ ողղակի հարկեր: Սակայն բացի դրանից  
գանձարանը հարկեր է նշանակում շաքարի, ծը-  
խախտախի, օդու, նաւթի, լուցկու, թէյի և ուրիշ  
մթերքների վրայ. դրանք են անուղղակի հար-  
կեր: Գանձարանին վճարում է գործարանատէրը  
կամ վաճառականը, եթէ, օրինակ, արտասահ-  
մանից բերած ապրանքի համար, ասենք թէյ,  
մաքս պիտի վճարել: Իսկ երբ գործարանատէրը  
կամ վաճառականը ապրանք են վաճառում, այդ  
դէպքում նրանք հարկը աւելացնում են ապրան-  
քի գնի վրայ, և այդպէս վերջ ի վերջոյ հարկը  
վճարում է նա, ով գնում է ապրանքը: Եւ ո-  
րովհետեւ գնողը վճարում է այդ հարկը ոչ թէ  
անմիջապէս գանձարանին, այլ կողմնակի կեր-  
պով՝ վաճառականի միջոցով, այդ պատճառով  
էլ այդ հարկը կոչւում է անուղղակի հարկ:

Հասկանալի է, որ չքաւոր մարդու համար  
աւելի դժւար է վճարել գանձարանին այդ հար-  
կերը, քան հարուստի համար, որովհետեւ այդ  
հարկերը կազմում են նրա խղճուկ աշխատա-  
վարձի մեծ մասը: Ամեն մի պետութեան բոլոր

ընակիչները մեծագոյն մասը գիւղացիներ են  
կամ բանւորներ, ուրեմն և անուղղակի հարկերը  
հաւաքւում են գլխաւորապէս նրանցից: Ուստի-  
կանական պետութեան եկամուտների գլխաւոր  
աղբիւրն էլ կազմում է աղքատի լղար քսակը:  
Հասկանալի է, որ այդ բանը նրանից է առաջ  
գալիս, որ ոստիկանական պետութեան մէջ հա-  
րուստները մօտ են կանգնած իշխանութեանը և  
բաւականաչափ զօրեղ են՝ հարկերի ամբողջ  
ծանրութիւնը խեղճ աշխատաւորների վրայ գլու-  
րելու համար:

Այս բանը գոյութիւն չունի իրաւական պե-  
տութեան մէջ: Այստեղ եկամուտի գլխաւոր աղ-  
բիւր են ոչ թէ անուղղակի հարկերը՝ ժողովրդ-  
ական մասսաների գործածութեան պիտոյքնե-  
րից վերցնող, այլ ողղակի հարկերը, որոնք  
ծանրանում են նրանց վրայ, որոնցից վերցնւում  
են այդ հարկերը: Նրանց մէջ էլ առաջին տեղը  
բռնում է եկամտային հարկը: Այսպէս՝ Մեգլիա-  
յում ամեն մի քաղաքացի վճարում է 8—20  
կոպէկ հարկ իւրաքանչիւր 10 ըուբլու համար,  
ըստ որում հարկի չափն էլ աճում է եկամուտի  
մեծանալու հետ: Ով տարէնը 1000 ըուբլուց աւ-  
կաս եկամուտ ունի, նա ազատւում է և հարկից:  
Մօտաւորապէս այդպէս է սահմանւած եկամու-  
տային հարկը նաեւ Իտալիայում և Գերմանիա-  
յում: Բազմանդամ ընտանիք ունեցողները վճա-



րում են այնտեղ աւելի քիչ հարկ, քան սակաւանդամ ընտանիքաւորները:

Նշանակում է ուրեմն, որ իրաւական պետութեան մէջ իբրեւ հիմնական հարկ հանդիսանում է եկամտային հարկը, որն և աճում է համաձայն եկամտի աճման՝ ամենաչքաւորներն էլ ազատւում են հարկատուութիւնից: Այսպիսով՝ իրաւական պետութեան մէջ չքաւոր մարդիկ աշխատում են հարկատուութեան լուծը դնել հարուստների վրին, որոնք և պարտաւոր են իրենց ուսերի վրայ կրել այդ ծանրութիւնը, որովհետեւ ամենից շատ միջոցներ նրանք ունեն:

Միւս կողմից՝ իրաւական պետութեան մէջ ընդունւած է այսպէս կոչւած յատուկ հարկ. հարկատուութեան են ենթարկւում այն մարդիկ, որոնք առանձին շահ ունեն որեւէ հանրագումար ձեռնարկութիւնների վրայ արեւոյ ծախսերից: Օրինակ՝ քաղաքային խորհուրդը փողոցները լաւ սալայատակում է, ծառեր է տնկում, էլեքտրական լուսավառութիւն է սկսում, մի խօսքով անպէտք փողոցը լաւացնում է, որից և այդ փողոցի վրայ գտնւող տների բնակարանները թանգանում են և աճում է տնտեսքերի եկամուտը: Վերջիններս ուրեմն առանձին շահ ստացան վերոյիշեալ հանրագումար ձեռնարկութիւնից, դրա համար էլ արդարացի է նրանց վրայ յատուկ հարկ դնել, որպէսզի փողոցի բարեկարգու-

թեան համար ծախսած փողերի գոնէ մի մասը յետ ստացւի: Որովհետեւ քաղաքային խորհրդի եկամուտներն էլ գոյանում են բոլոր քաղաքացիների կողմից վճարւող հարկերից, այդ պատճառով էլ մասնակի կամ յատուկ հարկատուութիւնը հնարաւորութիւն է տալիս խեղճերին դարձեալ հարկատուութեան բեռը իրենց նիհար ուսերի վրայից հարուստների ուսի վրայ դնել: Յատուկ հարկատուութիւնից շահ ունեն գլխաւորապէս քաղաքի բանւորները:

Ժողովրդական ներկայացուցիչները հաստատելով պետական եկամուտների ցուցակը, ամենաճշգրիտ կերպով որոշում են նաեւ, թէ ինչ բանի վրայ պիտի ծախսւի ժողովրդական փողերի ամեն մի գրոշը, ֆինանսների մինիստրն էլ իրաւունք չունի նախահաշւից մի քայլ խել շեղւելու: Այդ բանին հետեւում է ժողովրդից յատուկ ընտրւած պետական վերահսկիչը: Վերահսկողութիւնը լինում է երկու կերպ: Մինիստրին փող տալուց առաջ պետական վերահսկիչը ստուգում է, թէ յիշուած մինիստրը իրաւունք ունի այդ ծախսն անելու. այդ անելուց յետոյ միայն նա տալիս է նրան փողը: Սա է նախնական վերահսկողութիւն: Դրանից յետոյ էլ մինիստրը պարտաւոր է նրան ներկայացնել հաստատող փաստաթղթեր, թէ նա յիշուած ծախսել է փողերը ժողովրդական ներկայացուցիչների կողմից



հաստատած բաների վրայ: Սա է յետագայ վերահսկողութիւն:

Աճող եկամտային հարկ, յատուկ հարկահանութիւն և իսկական վերահսկողութիւն պետական բոլոր ծախսերի վրայ, — ահա իրաւական պետութեան կառավարչական տնտեսութեան առանձնայատկութիւնները:

### 18. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Բացի համաժողովրդական և համապետական կարիքներից, որոնք յատուկ են բոլոր քաղաքացիներին, պետութեան իւրաքանչիւր մասի բնակիչներ ունեն իրենց տեղական կարիքները, որոնք ամենից լաւ կերպով բաւարարութիւն կը ստանան տեղական ոյժերով և միջոցներով: Եթէ ներկայացուցչական բարձրագոյն իշխանութեան ձեռքում կենտրոնանայ քաղաքացիների ամեն տեսակ պահանջներին գոհացում տալը, այդ դէպքում ժողովրդական ներկայացուցիչները կը ծանրաբեռնւեն այնչափ շատ անկարևոր, գուտ տեղական գործերով, որ ժամանակ էլ չեն ունենայ վճռելու համապետական կարիքներ և հոգսեր: Ապա՝ ժողովրդական ներկայացուցիչները չափազանց հեռու են գտնուում առանձին վայրերից, և չեն կարող տեղական կարիքները և հարցերը

այնպէս հառկանալ, ինչպէս տեղացի մարդիկ: Ամեն մի քաղաքաբնակ անձն աւելի լաւ է ծանօթ իր քաղաքի կարիքներին, քան մայրաքաղաքում աղբոր ժողովրդական ներկայացուցիչը: Նմանապէս ամեն մի գիւղացի աւելի լաւ է իմանում իր գիւղի, գիւղաշրջանի, գաւառի և նահանգի կարիքները:

Այս պատճառով անկարելի է ամբողջ ժողովրդի կեանքը կառավարել մէկ վայրից, մէկ կառավարութեան ձեռքով: Մի խօսքով՝ բացի համապետական կառավարութիւնից անհրաժեշտ է նաև տեղական ինքնավարութիւն: Եւ յիշաւի, բոլոր երկրներում էլ կան զեմսաւոճներ և քաղաքներ՝ իրրի տեղական ինքնավարութեան օրգաններ: Ժողովրդական ներկայացուցիչները քաղաքների և զեմսաւոճների իրաւասութիւնից հանում են իրենց ենթակայ գործերի մի որոշ շրջան և ապա նրանց են վերադնում կատարել ինքնուրոյնութիւն՝ տեղական գործերը վճռելու և տեղական կարիքներին գոհացում տալու համար: Եթէ այդ կարիքներին տեղական միջոցները գոհացում չտան՝ այդ դէպքում ժողովրդական ներկայացուցիչները պետական գանձարանից են օգնում տեղական ինքնավարութեան մարմիններին:

Իրաւական պետութեան մէջ քաղաքային խորհուրդները և զեմսկի ժողովները նմանապէս ներկայացուցչական հիմնարկութիւններ են: Ամե-



նից լաւը այն է, որ իրաւասուններն էլ ընտրւեն ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի և համեմատական (պրոպորցիոնալ) ձայնտուութեամբ: Կարևոր է, որ թէ քաղաքները և թէ գեմասւոնները գոհացում տան ամենից առաջ ժողովրդական կարիքներին: Քաղաքի բնակիչների մեծամասնութիւնը, ի հարկէ, բանւորներ են, գաւառներում էլ՝ գիւղացիներ: Ուրեմն, թէ բանւորները և թէ գիւղացիները պէտք է ապահովեն իրենց համար ներկայացուցիչների մեծամասնութիւնը ոչ միայն ազգային բարձրագոյն ժողովում, այլ նաև գեմասւոններում և քաղաքային խորհուրդներում: Քաղաքի և գեմասւոյի եկամուտների զխաւոր աղբիւրն են կազմում հողից, տներից, գործարաններից, գաւոգներից և առևտրական ձեռնարկութիւններից վերցնւող տեղական հարկերը, իսկ նորագոյն ժամանակում՝ նաև հանրօգուտ ձեռնարկութիւններից առանձին օգուտ ունեցող մարդկանցից վերցնւող հարկը, որի մասին վերև խօսք եղաւ:

Տեղական ներկայացուցչութիւնը կազմում է մի լաւ լրացուցիչ մասն համաժողովրդական ներկայացուցչութեան:

## 19. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Իրաւական պետութեան մէջ ժողովրդական լուսաւորութիւնը ներկայացուցիչների և կառավարութեան զխաւոր հոգսն են կազմում: Այդ քանի վրայ ծախսւում են շատ միջոցներ: Կառավարութիւնը հսկում է բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների վրայ, լինեն նրանք հանրակրթական, թէ մասնագիտական: Միջնակարգ գալրոցական հաստատութիւնները և ժողովրդական ստորին գալրոցները գտնւում են գեմասւոնների և քաղաքների ձեռքում: Կառավարութիւնը միայն օգնում է տեղական ինքնավարութեան մարմիններին՝ այդ ուսումնարանները պահելու համար:

Իրաւական պետութեան մէջ բոլոր բնակիչները գրագէտ են, որովհետև ստորին ժողովրդական ուսումը պարտադիր է ամենքի համար, — իւրաքանչիւր երեխայ ? — 14 տարեկան հասակը պարտաւոր է ուսումնարան երթալ սովորելու: Երեխաներին սովորել խանգարող կամ գալրոց յաճախել արգելող ծնողները դատարանով պատժի են ենթարկւում: Ստորին ժողովրդական ուսումը իրաւական պետութեան մէջ ձրի է: Այս հանգամանքը հնարաւորութիւն է տալիս բոլոր չքաւոր ծնողներին կատարելու պարտադիր ուսման օրէնքը: Մի քանի իրաւական պետութիւն-



ներում բացի դրանից, երեխաները ճիշդաբար ստանում են ուսումնարանում սաք հերակուր և բոլոր անհրաժեշտ ուսումնական պիտոյքները: Շնորհիւ ընդհանուր, պարտադիր և ձրի ուսուցման՝ ժողովուրդը արագօրէն սովորում է կարգաւ օգտակար գրքեր, հետաքրքրւում է իր երկրի հոգևոր և քաղաքական կեանքով, գիտակցօրէն է վերաբերւում իր և ուրիշների իրաւունքներին և պարտականութիւններին: Իրաւական պետութեան մէջ, շնորհիւ ժողովրդական կըրթութեան լայն տարածման, քիչ կան դատարկապորտ և հարբեցող մարդիկ, սակաւ են պատահում ամենատեսակ յանցագործութիւններ, մարդկանց՝ իրար հետ ունեցած յարաբերութեան մէջ քիչ կայ կոպտութիւն և անտաշութիւն, քան ուսիականական պետութեան մէջ: Ոչ ոք թոյլ չի տայ, որ իրեն վիրաւորեն, դրա հետ նաև իւրաքանչիւր ոք մեծ յարգանքով է վերաբերւում ուրիշ մարդու անձնաւորութեանը: Յատկապէս կարեւոր է իրաւական պետութեան մէջ ուսման հանրամատչելիութիւնը հասարակ, աշխատաւոր մարդկանց համար, որովհետև գիտութիւնը և միութիւնը՝ դրանք միակ ոյժերն են, որոնց օգնութեամբ աշխատաւոր դասակարգը կուել կարող է լաւագոյն ապագայի համար՝ կալւածատէրերի և արդիւնաբերողների բանակը կազմող իր զօրաւոր հակառակորդների հետ:

Գիտութիւնը, — միայն նա կարող է հասկացնել աշխատաւորին, թէ ում հետ, թէ ինչու, ինչպէս և թէ ինչ բանի համար պէտք է կուել: Ոստիկանական պետութեան կառավարութիւնը ազէտ և խաւար ժողովրդի ականջից՝ բռնած տարել է, ուր քէֆն ուզել է, ժողովուրդն էլ կարծել է, թէ կառավարութիւնը իր բարեբարն է: Իսկ իրաւական պետութեան մէջ ամեն մէկը հասկանում է, որ միայն այն կառավարութիւնն է լաւ, որը պատասխանատու է ժողովրդի առաջ, հաշիւ է տալիս նրան: Ու այս բանը հասկանալ է տալիս՝ ժողովրդական լուսաւորութիւնը:

Ընդհանուր և պարտադիր ուսումը 7-ից մինչև 14 տարեկան հասակը՝ ունի և մի ուրիշ լաւ կողմ. շնորհիւ այդ օրէնքի՝ ծնողները հնարաւորութիւն չունեն այդ ժամանակամիջոցում իրենց երեխաներին գործարաններ և գաւոռներ ուղարկելու: Այդպիսով երեխայի մարմնական ոյժերը չեն ջլատւում հէնց ամենաքնքոյշ հասակում, երբ մարդու կազմաւածքը դեռ չէ ամրապնդւած: Եւ թէպէտ ծնողները յաճախ իրենց երեխաներին ուժասպառ անող աշխատանքներ են անել տալիս ոչ թէ անգթութիւնից, այլ դառն կարիքից ստիպւած, բայց յամենայն դէպս այս օրէնքը օրհնաբեր է նաև ծնողների համար, որովհետև, երբ հնարաւորութիւն չկայ չափահաս մարդու իոխարէն երեխայի աշխատանքից օգտ-



ւելու, այդ բանը մեծացնում է նաև մեծերի աշխատանքի քանակը ու աշխատավարձն էլ բարձրանում է: Մի խօսքով՝ ծնողներն իրենք են սկսում աւելի աշխատավարձ ստանալ. իսկ այդ աւելի լաւ է, քան կարիքը լրացնել երեխայի աշխատանքով:

Այսպէս ուրեմն, իրաւական պետութեան մէջ ամենքը զրապէտ են, այնտեղ կայ ընդհանուր, պարապիրի և ձրի ժողովրդական ստորին դպրոց: Այդ դպրոցում թագաւորում է ուսուցման ազատութիւն. ոչ թէ կառավարութիւնն է ցոյց տալիս ուսուցիչներին, թէ ինչպէս պէտք է սովորեցնել երեխաներին, այլ իրենք ուսուցիչներն են մշակում երեխաների ուսման և դաստիարակութեան ծրագիր: Ուսուցման այս ազատութիւնն էլ ունենում է ամենալաւ հետեւանքները. ուսուցիչ են դառնում այն մարդիկ, որոնք աճող տերունդը դաստիարակելու կոչում են զգում իրենց մէջ, և ոչ թէ չինովնիկները, ինչպէս՝ օստիկանական պետութեան մէջ:

## 20. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ ԻՐԱՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ժամանակակից պետութիւններից շատերը կազմւել են նւաճումների ճանապարհով. համե-

մատաքար աւելի պօրեղ մի ժողովուրդ տիրում է ուրիշներին և նրանց երկիրը իր պետութեանը միացնում: Յաղթւած ժողովուրդները ստիպւած են լինում հպատակւել. սակայն նրանց մէջ միշտ էլ կենդանի է մնում յիշողութիւնը այն ժամանակւայ մասին, երբ նրանք ինքնուրոյն և անկախ են եղել: Այս յաղթւած ժողովուրդները զանազանում են յաղթող ժողովրդից թէ լեզուով և թէ կրօնով: Ոստիկանական պետութեան մէջ յաղթող-ժողովրդի կառավարութիւնը միշտ աշխատել է ամեն տեսակ հալածանքների և բռնութեան միջոցով ստիպել յաղթւած ժողովրդներին՝ փոխել իրենց կրօնը և լեզուն: Իսկ այդ ամեն տեղ անկարելի է եղել, որովհետև ամեն մի ժողովուրդ հաստատ է մնում իր հաւատին և մայրենի լեզւին:

Իրաւական պետութեան մէջ ժողովրդական ներկայացուցիչները հասկացել են այդ բանը, այդ պատճառով էլ նրանք հրաժարւում են որևէ կերպ բռնութեան դիմելուց՝ այլակրօններին իշխող կրօնի հետևող դարձնելու և օտար լեզուներն էլ իշխող լեզուով փոխարինելու մտքից: Իրաւական պետութեան մէջ այլազգիների համար գոյութիւն չունի ոչ մի տեսակ ստեմանափակում: Իւրաքանչիւր քաղաքացի, ինչ ազգի ուզում է պատկանի,—լեհ, հրէայ, գերմանացի, հայ, սևամորթ նեգր և այլն,—բոլորն էլ ունեն



նոյն իրաւունքները և նոյն պարտականութիւնները, ինչ որ երկրում իշխող ազգութեան քաղաքացիները: Իրաւական պետութեան մէջ ամենքը լաւ հասկանում են, որ իւրաքանչիւր որ ամենից առաջ այնպիսի մարդ է, ինչպէս միւսները, և ապա թէ միայն նա տարբերում է միւսներից որեւէ բանով: Եթէ մէկը մի պետութեան քաղաքացի է, ապա ուրեմն նա միւսների հետ հաւասար չափով պիտի օգտւի մարդկանց պետական համախմբութիւնից:

Պէտք է յիշել նաև այն, որ բոլոր այն փորձերը, որոնք նպատակ ունեն բռնի միջոցով արմատախիլ անելու մի ժողովուրդ, հասցնում են միայն ազգերի փոխադարձ երկպառակութեան և միմեկմասն անհնաբիւ են դարձնում ժողովրդի համար մի գործ կատարել: Օրինակի համար վերցնենք այժմեան Ասորո-Ունգարիան: Այնտեղ կուում են գերմանացիները սլաւոնների դէմ, ունգարացիները լեհերի դէմ, ռուսները մէկի և միւսի դէմ: Գերմանացիները ուզում են ամենքին գերմանացի դարձնել, ունգարացիները ուզում են ամենքին ունգարացի դարձնել: Ամեն մի ժողովրդի ներկայացուցիչներն էլ փոխանակ զլուրացիների և բանւորների համար օգտաւէտ օրէնքներ հրատարակելու, պայքար են մղում իրար դէմ՝ իշխանութիւնը ձեռք բերելու համար: Թագաւորը օգտւում է ազգերի այս զժառութիւ-

նից և ձգտում է ժողովրդական ներկայացուցչութեամբ սահմանափակւած իր իշխանութիւնը ամրապնդել միմիտքների միջոցով նպաստելով այդ զժառութիւններին:

Ահա, թէ ինչ բանի է հասցնում մի ժողովրդի միւսին արմատախիլ անելու ձգտումը: Միայն մի ելք կայ այդ բանից—բաժանւել, մաս-մաս լինել: Թող ամեն մի ժողովուրդ, որը համարում է իրին ճշւած, հիմնէ ինքնուրոյն և անկախ պետութիւն, ինչպէս որ այդ արին նոր-ւէգացիները, բաժանւելով շէդացիներից: Աւստրո-Ունգարիան էլ անշուշտ կբաժանի Աւստրիայի և Ունգարիայի, իսկ մի շարք մանր պետութիւնների: Իսկ այն երկիրներում, ուր ազգութիւնները իրար հետ ապրում են բոլորովին խառը, այդ դէպքում բանը այնքան էլ հեշտ չէ: Այդ դէպքում հարկաւոր է, որ ամենքը, անկախ իրենց ազգութիւնից, ունենան նոյն իրաւունքները՝ ըրրեւ քաղաքացիներ: Ազգութիւնների աշակախի հաւասարութիւն գոյութիւն ունի իրաւական պետութիւններում: Եւ որովհետեւ ժողովրդական ներկայացուցիչները ոչ մի շահ չունեն մի ժողովուրդ միւսի դէմ գրգռելու մէջ, ինչպէս որ անում է սոսիկանական պետութեան կառավարութիւնը, այդ պատճառով էլ զանազան ազգութիւններ խաղաղ կերպով ապրում են կողք-կողքի: «Բաժանիւր բոլորին, որ տիրես»:



ասում էին դեռ հռովմէական կայսրները, և ուրիշ թագաւորներ էլ միայն նմանել են նրանց այդ բանում: «Քաղաքացիներ, միացէ՛ք իրար հետ առանց կրօնի և ազգի խտրութեան», — հանոր ժամանակի պահանջը, որովհետեւ քաղաքացիների միութիւնը գորութիւն է, որ ապահովում է պետութեան մէջ հաստատուն խաղաղութիւն և կարգ ու կանոն, հիմնւած ամենքի հաւասարութեան՝ օրէնքի առաջ:

Այսպէս ուրեմն, ազգութիւնների հաւասարութիւնը նաեւ հանդիսանում է իբրեւ մէկը երաւական պետութեան սիւներից:

## 21. ՊԱՐԶ ԵՒ ԲԱՐԴ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ. ՕՐԷՆՍ-ԴՐԱՔԱՆԶԻՐ ՊԱՆԹՆԵՐ

Պատահում է, որ մի պետութեան մէջ բնակւում է միայն մի ազգի ժողովուրդ: Դա պարզ պետութիւն է, և նա ունենում է մէկ ներկայացուցչական ժողով: Երբեմն էլ պետութիւնը բաղկացած է լինում մի քանի ազգութիւններից: Այս դէպքում, իւրաքանչիւր ազգութիւն կազմում է առանձին պետութիւն, իսկ նրանք բոլորը միասին կազմում են դաշնակցական պետութիւն: Օրինակ՝ Շւէյցարիայի հասարակապետութիւնը բաղկացած է առանձին-առանձին կան-

տոններից (պետութիւններից) — Ֆրանսիական, գերմանական և իտալական: Իւրաքանչիւր կանտոն ունի իր ներկայացուցչական պալատը՝ կանտոնի պետական գործերը վճռելու համար. իսկ բոլոր կանտոններն էլ միասին բացի այդ ունեն մի ընդհանուր ներկայացուցչական պալատ՝ ամբողջ դաշնակցութեան բոլոր պետութիւնների համար կարեւոր համարւող գործերը վճռելու համար:

Այս կարգը անխուսափելի է, երբ մի քանի ինքնուրոյն պետութիւններ միանում և կազմում են մի ամբողջութիւն:

Սակայն մի քանի պարզ պետութիւններում էլ, ինչպէս են օրինակ Ֆրանսիան և Անգլիան, գոյութիւն ունեն ժողովրդական ներկայացուցիչների երկ-երկու պալատ. Անգլիայում՝ վերին (լորդերի) և ստորին (համայնքների) պալատներ, իսկ Ֆրանսիայում՝ ղեպուտատների պալատ և սենատ: Ինչո՞ւ համար այդ երկրներում էլ գոյութիւն ունեն երկ-երկու պալատներ, թէև դրա կարիքը ամենեւին չկայ: Մենք կհասկանանք բանը, եթէ տեսնենք, թէ վերին կամ լորդերի պալատը Անգլիայում ինչ մարդկանցից է բաղկացած:

Ո՛վքեր են այդ լորդերը. — խոշոր կալւածատէրեր: Դարձեալ ո՞վքեր են անգամ լորդերի պալատի. — եպիսկոպոսները, հոգեւորականութեան ներկայացուցիչները: Այս նշանակում է, որ այդ



հաստատութիւնը այն երկու դասակարգերի ներկայացուցիչներէ պալատն է, որոնք իրենց ձեռքում էին կենտրոնացրել իշխանութիւնը դեռ ոստիկանական պետութեան մէջ:

Անգլիայի հասարակ ժողովրդի համար, նաև ուրիշ երկիրներում, ուր գոյութիւն ունի երկրորդ պալատ, նա հանդիսանում է իբրև մի ոչ ցանկալի հաստատութիւն, որովհետև երկրորդ պալատի ընտրութիւնները այնչափ սահմանափակումների մէջ են դրւած, որ գիւղացիներին և բանւորներին չէ յաջողւում անցկացնել այնտեղ իրենց ներկայացուցիչներին: Բացի զբանից, այս երկրորդ պալատը, որը Պրուսիայում լաւ բնորոշւելով «տէրերի» պալատ է կոչւում, սահմանւած է այն բանի համար, որ ամեն կերպ դժարացնի ստորին պալատում յօգուտ աշխատաւոր ժողովրդի օրէնքներ, հրատարակելու: Երկրորդ, տիրական պալատը, ուր մտնում են միայն հարուստ և բարձրաստիճան մարդիկ, հէնց սրանց ձեռքով էլ ստեղծւել է այն բանի համար, որ թուլացնի առաջին պալատի նշանակութիւնը, որը բաղկանում է ժողովրդի բոլոր դասակարգերի ներկայացուցիչներից՝ ընտրւած ընդհանուր, գաղտնի, ուղղակի և հաւասար ձայնատութեամբ: Մի խօսքով՝ երկրորդ պալատը ամեն տեղ էլ փնտրակար է և աւելորդ: Ժողովրդական կարիքները պաշտպանելու համար ամեն

տեղ աւելի նպատակայարմար է համարւել մէկ պալատ միայն, մանաւանդ երբ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատութեան հետ լինեն նաև համեմատական (պրոպորցիոնալ) ընտրութիւններ, այսինքն՝ ազգաբնակչութեան թէ՛ մեծամասնութեան և թէ՛ փոքրամասնութեան կողմից:

## 22. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն անգամ, երբ մի երկրում մտցրել է ժողովրդական ներկայացուցչութիւն, ոստիկանական պետութեան պաշտպանները — որից օգտւել են զլիսաւորապէս կալւածատէրերի, չինովնիկների, հոգևորականների և քառաւորա-արդիւնաբերողների դասակարգերը, — սովորաբար հակառակ են եղել ժողովրդական ներկայացուցչութեանը, յենւելով ժողովրդի ագիտութեան վրայ: «Ի՞նչպէս կարող է պետութիւն կառավարել խաւար գիւղացին կամ տգէտ բանւորը» — բացականչել են նրանք. ախր ի՞նչ են հասկանում նրանք պետութեան գործերից. միթէ կարող են այդ մարդիկ իրենց համար ներկայացուցիչ ընտրել»: Միւս կողմից էլ ոստիկանական պետութեան այս պաշտպանները ամեն կերպ կանգնեցրել են ժողովրդական կրթութեան գործը և զբա-



նով դատապարտել ժողովուրդը յաւանանական  
տգիտութեան:

Աններև բան է, որ այս պայմաններում  
ժողովուրդը երբէք չէր կարող ձեռք բերել կա-  
ռավարութեան ներկայացուցչական եղանակ, ե-  
թէ նա հին կարգերին կռիւ չյայտարարէր, ու-  
րից դուրս եկաւ իբրև յողթող: Եւ ահա, չնա-  
յած իր տգիտութեան, ժողովուրդը ոչ միայն  
ոյժով ստիպեց ճանաչել իր՝ իբրև մարդու և  
քաղաքացու՝ իրաւունքները, այլ նաև յաջողու-  
թեամբ լուծեց իր մասնակցութեան հարցը պե-  
տութիւնը կառավարելում: Ի՞նչպէս եղաւ այս  
բանը: Ի՞նչպէս կարող է գիւղացին իր արօրից  
կամ բանւորը իր գաղգահից բաժանել և պե-  
տական գործերով զբաղել սկսել:

Բանն այն է, որ ժողովրդի տգիտութեան  
վրայ ուշադրութիւն դարձնողները, որոնք այդ  
համարում էին արգելադրի՞մ հանգամանք ժողո-  
վրդական ներկայացուցչութիւն մտցնելու համար,  
մոռանում էին, որ երկրում գոյութիւն ունեն  
քաղաքական կուսակցութիւններ, որոնք պաշտ-  
պանում են ժողովրդական շահերը: Գիւղացին  
կարիք չունի բնաւ թողնելու իր արօրը, կամ  
բանւորը իր գաղգահը՝ ներկայացուցչական ժո-  
ղովրդ երթալու և այնտեղ բազմելու համար: Թէ  
գիւղացին և թէ բանւորը գոհ կլինեն, իրենց շա-  
հերը ապահովելու համար, որ իրենց իր ներ-

կայացուցիչ ընտրեն գիւղացիական կամ բանւո-  
րական կուսակցութեան մի անդամը. այդ դէպ-  
քում նրանց շահերը կպաշտպանեն այնչափ լաւ,  
որչափ որ եթէ նրանք իրենք պալատի անդամ  
լինէին: Ճիշտ է, գիւղացիները և բանւորները  
երբեմն, տգիտութեան շնորհիւ, ընտրել են իրենց  
ներկայացուցիչ կաւածատերով կամ գործարանա-  
տիրով, բայց դառն փորձը կարճ ժամանակում  
ցոյց տաւ նրանց, թէ որչափ վտանգաւոր բան  
է սեփական գործերի համար միջնորդ ունենալ  
հակընդդէմ շահեր ունեցող մի մարդու: Մի քա-  
նի անգամ, տգիտութեան շնորհիւ, այս սխալն  
անելով, գիւղացիները և բանւորները սկսեցին  
իրենց համար ներկայացուցիչ ընտրել միմիայն  
ժողովրդական քաղաքական կուսակցութիւննե-  
րից: Եւ եթէ նոյնիսկ ընդունենք, որ անգար-  
գացած գիւղացու կամ բանւորի համար դժւար  
է կամ միանգամայն անհնար՝ լաւ պաշտպանելու  
իր շահերը ներկայացուցչական ժողովում, ապա  
գիւղացիական կամ բանւորական կուսակցու-  
թեան կըլծած անդամի համար դժւար չէ կա-  
ռավարել երկիրը կամ իրեն ընտրողներին շահերը  
պաշտպանել:

Յամենայն դէպս մի բան անկասկած է. —  
իրաւական պետութիւն ձեռք բերած բոլոր ժո-  
ղովուրդների փորձը ցոյց է տալիս, որ չլուսա-  
ւորւած բանւորութեան և գիւղացիութեան կող-



մից իբրև ժողովրդական ներկայացուցիչ՝ ընտր-  
ւած և որոշ քաղաքական կուսակցութիւնների  
պատկանող անդամներն աւելի ընդունակ են ե-  
ղել պետութիւնը կառավարելում, քան ոստի-  
կանական պետութեան չինովնիկները: Եւ հէնց  
ոստիկանական պետութեան պաշտպանները ի-  
րենք, որոնք դէմ են եղել ներկայացուցչութեան՝  
ժողովրդի ազիտութիւնը պատճառ բերելով, ի-  
րենք իրենց չեն համատացել և ժողովրդի աչքին  
միայն թող են փչել: Այս բանը պարզ երեւում  
է հէնց նրանից, որ ամենուրեք, ուր իշխանու-  
թիւնը նրանց ձեռքում է եղել, չեն տւել ժողո-  
վրդին ոչ ընդհանուր, ուղղակի, հասարակ և  
գաղտնի ընտրական իրաւունք, ոչ էլ համեմա-  
տական ընտրութիւններ, ժողովրդի վզին էլ փա-  
թաթել են «աէրերի» երկրորդ պատու:

Պարզ է, որ ժողովրդի ազիտութեան երկիւ-  
ղը չէ եղել պատճառ, որ նրանց կեիւ է մղել  
տւել կառավարութեան ներկայացուցչական եղա-  
նակի դէմ և ամեն կերպ սահմանափակել տւել  
ժողովրդի չլուսաւորւած մասի ընտրողներին թիւը,  
— այլ այն երկիւղը, որ իրենք ժողովրդական  
ներկայացուցչութեան կանոնաւոր կազմի մէջ  
չկորցնեն այն բոլոր արտօնութիւնները, որոն-  
ցով օգտւել են ոստիկանական պետութեան մէջ:

Նրանց կողմից արւող միւս առարկութիւնն  
է եղել. «Տղէտ ընտրողներին հեշտ է կաշառել

կամ երկիւղ տալ», — այս են ասել ոստիկանա-  
կան պետութեան պաշտպանները: Էապէս սա  
ճիշտ է. բայց երկիւղի դէմ միջոց կայ, այն է՝  
գաղտնի ընտրութիւններ: Ինչ վերաբերում է  
կաշառելուն, այն պիտի ասել, թէ ով է եղել  
երբևիցէ ընտրողներին կաշառողը, եթէ ոչ՝ հէնց  
այն հարուստ մարդիկ, որոնց ձեռքին է գտնւել  
ոստիկանական պետութեան կառավարութիւնը:  
Իւրաքանչիւր պետութեան մէջ ապրող չինով-  
նիկները, կալւածատէրերը, վաճառականները և  
արդիւնաբերողները կազմել են ազգաբնակու-  
թեան փոքրամասնութիւնը. և երբ մտքը ել է  
ժողովրդական ներկայացուցչութիւն, նրան սկը-  
սել են կաշառել նաև ընտրողներին, — միայն թէ  
ժողովրդական ներկայացուցիչների մեծամաս-  
նութիւնը իրենց կողմը լինի: Բայց, ինչպէս  
ցոյց է տալիս դարձեալ փորձը, ոստիկանական  
պետութեան պաշտպաններին շատ էլ չի յաջող-  
ւում կաշառելը, որովհետև ուր կայ մամուլի  
ազատութիւն, այնտեղ էլ դժւար է հասարա-  
կութիւնից բան ծածկել: Իրաւական պետութեան  
մէջ կաշառելու փորձերը կաշառողներից շատ  
շուտով դատապարտեալների նստարանի մօտ են  
քաշ տալիս:

Մենք գիտենք այժմ, թէ ինչ դեր են խա-  
ղում քաղաքական կուսակցութիւնները ընտրու-  
թիւնների ժամանակ: Իսկ ընդհանրապէս ինչ են



ներկայացնում այդ կուսակցութիւնները, ինչպէս են կազմակերպւում. ինչ մարդկանցից են բաղկացած լինում, նաև՝ ինչ քաղաքական կուսակցութիւններ գոյութիւն ունեն:

Եւրոպական «պոլիտիկա» բառը նշանակում է՝ պետութիւնը կառավարելու արւեստ: Իւրաքանչիւր պետութեան մէջ գոյութիւն ունեն ազգաբնակչութեան տարբեր դասակարգեր, յաճախ հակընդդէմ շահերով: Այսպէս՝ գիւղացիների շահերը հակառակ են կալւածատէրերի շահերին, բանւորների շահերը հակառակ են գործարանատէրերի շահերին, գործակատարների շահերը հակառակ են վաճառականների շահերին: Հոգեւորականութիւնը ունի իր շահերը, չինտիլիկները՝ իրենց:

Ժողովրդի մեծամասնութիւնը կազմող չքաւոր մարդկանց շահերը հակառակ են ունեւորների շահերին, որոնք ժողովրդի փոքրամասնութիւնն են կազմում, որովհետև ունեւորները ապրում են չունեւորների աշխատանքի հաշիւին: Առանձին անհատները ոյժ չունեն իրենց շահերի համար կրօնելու. այդ պատճառով էլ միատեսակ հասարակական գիրք ունեցող բոլոր մարդիկ, որոնք ունեն եկամուտի նոյնատեսակ աղբիւր, դրանք բոլորը միացնում են իրենց ցրւած ոյժերը՝ գոյութեան կոխը ընդհանուր ոյժերով առաջ տանելու համար:

Այսպէս են ծագում մարդկային ընկերակցութիւնները՝ անտեսական շահերը պաշտպանելու համար: Եթէ այդպիսի մի, ասենք բանւորական, միութիւն չէ սահմանափակում իր գործունէութիւնը միայն անտեսական կուով, այլ ձգտում է նաև որոշ մասնակցութիւն ունենալու պետութեան կառավարութեան մէջ, այդ դէպքում այդ միութիւնը դառնում է քաղաքական: Ամբողջ երկրում գոյութիւն ունեցող առանձին առանձին քաղաքական ընկերակցութիւնները և միութիւնները կարող են կապ հաստատել իրար հետ, միատեսակ պահանջներ դնել և միատեսակ միջոցներով կուել այդ պահանջների համար: Այս դէպքում անա կլինի կազմակերպւած քաղաքական կուսակցութիւն, այսինքն՝ ընդհանուր կարիքներ, այդ կարիքներն առաջ բերող պատճառների մասին միատեսակ հասկացողութիւն ունեցող և այդ կարիքների դէմ կուելու համար միատեսակ միջոցներով ղեկավարող մարդկանց միութիւն:

Իւրաքանչիւր քաղաքական կուսակցութիւն ունի իր ծրագիրը, այսինքն այն նպատակների ամբողջութիւնը, որոնց նա ձգտում է: Իւրաքանչիւր քաղաքական կուսակցութիւն ունի իր տակտիկական կամ գործելակերպը, այսինքն գոյութեան կուի համար մշակւած միջոցներ և ձևեր, որոնցով առաջնորդւում է կուսակցութիւնը:



կուսակցութեան անդամ դառնալ կարող է դատարանով չարատաւորեալ ամեն մի քաղաքացի, որ համաձայն է նրա ծրագրին և տակտիկային: Այս է պատճառը ահա, որ ժողովրդական շահերը պաշտպանող բոլոր կուսակցութիւնների մէջ մենք տեսնում ենք ոչ միայն գիւղացիներ և բանւորներ, այլ նաև շատ կրթեալ մարդիկ՝ հասարակութեան ուրիշ դասակարգերից: Այս մարդիկ իրենց գիտութեամբ և ժողովրդի համար ունեցած անձնօրէնութեամբ շատ են օգնում վերջինիս իր շահերը պաշտպանելու համար: Զիշտ է, ժողովրդական ներկայացուցիչների թւում երբեմն լինում են նաև անմիջապէս գութանի կամ դադգեահի մօտից եկած մարդիկ. այսպիսի մէկն էր, օրինակ, Գերմանիայի բանւորական կուսակցութեան անդամ, ժողովրդական ներկայացուցիչ Աւգուստ Բերելը, որ առաջ եղել էր մի հասարակ ջուլհակ, իսկ յետոյ՝ Գերմանիայի ամենալաւ հռետորը և գերմանացի բանւորների ղեկավարը: Սակայն այդպիսի դէպքեր, դժբախտաբար, մինչև օրս շատ սակաւ են եղել. դժբախտ է բանւորի և կամ գիւղացու համար չնչին աշխատավարձով ձեռք բերել կարևոր կրթութիւն, մանաւանդ որ նա բիշ ժամանակ ունի այդ բանի համար՝ երկարատե բանւորական օրւայ պատճառով: Բայց բանւորները և գիւղացիները ոչինչ չեն կորցնում, որ նրանց ներկա-

յացուցիչներ հանդիսանում են յաճախ ազատ զբաղմունքների տէր մարդիկ—գիտնականներ, գրողներ, փաստաբաններ, ուսուցիչներ, և այլն:

Իւրաքանչիւր իրաւական պետութեան մէջ գոյութիւն ունեն մի քանի քաղաքական կուսակցութիւններ: Այսպէս՝ ընտրական կուսակցութիւն, որ պաշտպանում է բանւորների, գործակատարների և ընդհանապէս բոլոր մանր վարձու աշխատաւորների շահերը. գիւղացիական կուսակցութիւնը պաշտպանում է գիւղացի-հողագործների շահերը:

Եթէ մի երկրում չկայ առանձին գիւղացիական կուսակցութիւն, այդ դէպքում աշխատաւորների շահերի պաշտպանութիւնը կլինի ոչ գիւղացիական և ոչ էլ բանւորական, այլ աշխատաւորական կուսակցութիւն:

Կալւածատիրական կուսակցութիւնը պաշտպանում է խոշոր կալւածատէրերի շահերը, կղերական կուսակցութիւնը՝ հոգևորականութեան շահեր, կառավարականը՝ չինովնիկների շահերը: Այս երեք կուսակցութիւնները երբեմն միանում են և միասին կազմում պահպանողական կուսակցութիւն, որովհետև նա ձգտում է պահպանել հասարակութեան այդ երեք դասակարգերի արտօնութիւնները:

Երբեմն պահպանողական կուսակցութիւնը փոխում, դառնում է ռէակցիոներ կամ յետա-



դիմական, այսինքն այնպիսի կուսակցութիւն, որ ուզում է կեանքի անիւր շուռ տալ զէպի ետ և ժողովրդին զրկել իւր իրաւունքներից:

Առհտրա—արդիւնաբերական դասակարգը կազմակերպում է ազգային-լիբերալ կուսակցութիւն, այսինքն այնպիսին, որ պահանջում է նոր նուաճումներ՝ շուկան ընդարձակելու, ապրանքները արտահանելու նպատակով՝ որ չէ ցանկանում տէրութեան միջամտութիւնը բանւորների և կապիտալիստների յարաբերութեան մէջ: Վերջապէս, ազատ զբաղմունքների տէր մարդիկ, մանր սեփականատէրեր—արհեստաւորներ, որոնք ապրում են քաղաքներում, միանում են և կազմում ազատամիտ կուսակցութիւն: Այս կուսակցութիւնը պաշտպանում է գլխաւորապէս ամբողջ ժողովրդի հոգեկան շահերը և ժողովրդական իրաւունքներն ու ազատութիւնները:

Ժողովրդական իրաւունքներն ու ազատութիւնը, ժողովրդի վեհապետութիւնը ամենից աւելի լիակատար կերպով պաշտպանում է սոցիալիստական կամ ընկերվարական կուսակցութիւնը, որը պահանջում է արմատական փոփոխութիւն մտցնել հասարակութեան տնտեսական կազմի մէջ, մինչդեռ ազատամիտները այդ չեն պահանջում: Սոցիալիստական կուսակցութիւնը պահանջում է, որ հողը, գործարանները, գաւոզները և մեքենաները (արդիւնաբերութեան միջոց-

ները) պատկանեն ամբողջ ժողովրդին, և ոչ թէ առանձին անհատներին, որովհետև քանի դեռ հողը, գործարանները և մեքենաները ունեւորների մասնաւոր սեփականութիւն են կազմում, չունեւորները չեն կարող ազատուել աւամայ աշխատանքից նրանցով: Սակայն դժւար է միանգամից հողը, գործարանները և մեքենաները զարձնել հասարակական սեփականութիւն: Այդ պատճառով էլ այդ անցումը նախապատրաստելու և աշխատաւորների վիճակը թեթեւացնելու համար սոցիալիստական, այսինքն իսկական—ժողովրդական կուսակցութիւնը ամենից առաջ պահանջում է ամբողջ հողը զարձնել ամբողջ ժողովրդի սեփականութիւն, որի կարգադրութիւնն էլ յանձնել տեղական միութիւնների քաղաքային և գիւղական համայնքների խորհրդին: Այս խորհուրդները, որոնք ընտրւում են ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի ձայնաւոյթութեամբ, կբաժանեն և հողը աշխատաւորների համայնքների և ընկերութիւնների մէջ այն պայմանով, որ նրանից օգտւեն հաւասարապէս և համայնապէս՝ առանց կողմնակի մարդկանց կապալի \*): Դրանից դատ սոցիալիստա-

\*) Այս են, օրինակ, Ռուսաստանի սոցիալիստիկ յեղափոխականների, ինչպէս նաեւ Զ. Յ. Դաշնակցութեան պահանջները: Այս կուսակցութիւնները պաշտպանում են թէ բանւորների և թէ գիւղացիների շահերը:



կան կուսակցութիւնը պահանջում է Տ-ժամեայ բանւորական օր գործարանում, գաւոռներում և արհեստանոցներում. պահանջում է գործադուլի և բանւորական միութիւնների ազատութիւն, բանւորական ընտրեալների ներկայացուցչութիւն, գործարանական վերահսկիչներ, պարտադիր ապահովագրութիւն՝ մահւան, հիւանդութեան, պատահարների և աշխատազրկութեան դէմ, պետութեան և գործատէրերի հաշւին: Սոցիալիստական կուսակցութիւնը պահանջում է նմանապէս աճող (պրոգրեսսիւ) եկամտային հարկի ներմուծում, անուղղակի հարկերի կատարեալ վերացում, նաև անհրաժեշտ պիտոյքների՝ օրինակ նաւթի, լուցկու, շաքարի, թէյի վրայ դրող մաքսի վերացում: Անուղղակի հարկերը, ինչպէս մենք գիտենք, չափազանց թագցնում են կեանքը սակաւ ունեւորների և չունեւորների համար:

Ահա այն քաղաքական կուսակցութիւնները, որոնք կուռում են իրար դէմ՝ իրաւական պետութեան մէջ: Նրանց կռիւն էլ հէնց կազմում է այն, ինչ կոչում են երկրի քաղաքական կեանք:

Քաղաքական կռիւն մասնակցութիւն են ցոյց տալիս բոլոր զիտակից քաղաքացիները: Սակայն այս կռիւր իրաւական պետութեան մէջ յենում է առանց արիւնհեղութեան: Ազատ

խօսք, ազատ կարծիքները և համոզմունքներ, նաև ազատ մամուլ, — ահա այդ կռիւ միջոցները և զէնքերը:

### 23. ԻՐԱՆԻՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Մինչև այժմ, գրքիս առաջին մասում, մենք ծանօթացանք իրաւական պետութեան այն առանձնայատկութեան հետ, որ կոչւում է ժողովրդի վեհապետութիւն կամ ժողովրդի ինքնակալութիւն: Մենք տեսանք արդէն, որ ժողովուրդը իրագործում է իր բարձրագոյն իշխանութիւնը՝ օրէնքներ հրատարակող ներկայացուցչական ժողովի միջոցով:

Սակայն իրաւական պետութիւնը այսպէս է կոչւում ոչ միայն նրա համար, որ այնտեղ բարձրագոյն իշխանութիւնը գտնւում է ժողովրդի ձեռքին, այլ նաև նրա համար, որ այնտեղ բոլոր քաղաքացիները հաւասար են դատարանի և օրէնքի առջև: Հաւասար են ամենքը նրա համար, որ հիմնական օրէնքներով ճանաչւած են անխտիր բոլորի վերաբերմամբ այսպէս կոչւած մարդու սրբազան և անկապտելի իրաւունքները: Այդ իրաւունքներն են — խղճի, հաւատի և զիտական համոզմունքների ազատութիւն, խօսքի և մամուլի, ժողովումների և միութիւնների ա-



զատութիւն, անձի, բնակարանի և պոստային յարաբերութիւնների անձեռնմխելիութիւն:

Այս իրաւունքները սրբազան են կոչուում այն պատճառով, որ մարդկային հոգին, մարդկային անձնաւորութիւնը այդ ազատութիւնների կարիքը ունի, ինչպէս սրբութիւն: Ազատութիւնն այնպէս է հարկաւոր մարդու, ինչպէս որ օգը՝ շնչելու համար: Այդ ազատութիւնները կոչուում են անկապտելի կամ անձեռնմխելի: Այս նշանակում է, թէ ոչ մի պետութիւն, նոյնիսկ աշխարհիս ամենալաւ պետութիւնը իրաւունք չունի խլելու այդ ազատութիւնները քաղաքացիներից, զրկելու մարդկանց իրենց անկախութիւնից և ազատութիւնից:

Իրաւունքի տիրապետութիւնը հէնց նրանով էլ արտայայտուում է, որ պետական իշխանութիւնը ներկայացուցչական պետութեան մէջ հանդիպում է միայն մի սահմանափակման, որ է՝ սահմանափակումն քաղաքացիների իրաւունքներով: Ժողովրդական ներկայացուցիչները կարող են հրատարակել ինչ օրէնք որ պէտք է, միայն թէ ոչ այնպիսի մի օրէնք, որ զրկէր քաղաքացիներին իրենց ազատութիւններից և իրաւունքներից:

Իրաւական պետութեան բոլոր բնակիչները հաւասար իրաւունքներ ունեն իբրեւ քաղաքացիներ, անկախ այն բանից, թէ նրանք ինչ հաս-

րակական զիրքի տէր մարդիկ են: Պետութեան նախագահը, մինիստրը, մի բանւոր թէ գիւղացի, — բոլորն էլ միատեսակ կերպով պարտաւոր են օրէնքին հնազանդւել և յարգել ուրիշ մարդկանց իրաւունքները:

Օրէնքի ոյժը պահպանելու և խախտած իրաւունքները վերականգնելու համար գոյութիւն ունեն քաղաքացիների կողմից ընտրւած դատաւորներ: Բայց հէնց «քաղաքացի» կոչումը հասկանալի է միայն իրաւական պետութեան մէջ: Ո՞վ է կոչուում քաղաքացի. — այն մարդը, որ տէր է անկապտելի իրաւունքների՝ ճանաչւած երկրի հիմնական օրէնքներով, և որոնց պահպանութիւնը դատարանի ձեռքին է: Ոստիկանական պետութեան մէջ չկան քաղաքացիներ, այնտեղ կան սոսկ բնակիչներ, հաւատարիմ հրատարակներ, — մի խօսքով՝ իրաւազուրկ մարդիկ: Այս իրաւազուրկ մարդիկ առարկայ են դառնում ամեն տեսակ իշխանաւորական կամայականութեան, որի դէմ նրանք անզօր են այնչափ ժամանակ, քանի դեռ կուով ձեռք չեն բերել իրենց իրաւունքը:

Մի անգամ արդէն երկրի հիմնական օրէնքներով պետութեան բնակիչները ճանաչել տալով իրենց իրաւունքները և ազատութիւնները՝ իրաւունք են ստանում պաշտպանել նրանց թէկուդ ոյժի միջոցով: Այնպէս՝ անզլիական քաղաքացի-



ները իրաւունք են համարում նոյնիսկ ժողովրդական ապստամբութեան միջոցով պաշտպանել իրենց սրբազան իրաւունքները ամեն տեսակ ոտնձգութիւնների դէմ՝ պետական իշխանութեան կողմից: Անգլիայի ժողովուրդը նրա համար չէ կուել հարիւրաւոր տարիներ շարունակ յանուն այդ իրաւունքների, որ դուրս գայ մէկը և խի նրանցից այդ իրաւունքները: Իրաւական պետութեան մէջ էլ ժողովրդական ներկայացուցիչները չեն մոռանում իրենց օրէնսդրական գործունէութեան ընթացքում յարգանքով վերաբերել դէպի քաղաքացիների իրաւունքները, որ թւած են երկրի հիմնական օրէնքների մէջ: Այս պատճառով էլ ներկայացուցչական ժողովի միայն այն որոշումն է օրէնք կոչում, քաղաքացիների համար պարտադիր, որը չէ հակասում հիմնական օրէնքներին: Նախագահի միայն այն հրամանագիրը և միւստորի միայն այն կարգադրութիւնն է համարում պարտադիր, որը չէ խախտում քաղաքացիների իրաւունքները և չէ անցնում այն իշխանութեան սահմաններից դուրս, որ վերապահւած է նրանց ժողովրդական ներկայացուցիչների կողմից: Ուրիշ խօսքով՝ կառավարչական հրամանագրերը իրաւական պետութեան մէջ միայն այն ժամանակ են համարւում իրագործելի, երբ համաձայն են երկրի հիմնական օրէնքներին և ժողովրդական ներկայացու-

ցիչների կողմից հրատարակւող սովորական օրէնքներին:

Տեսնենք այժմ, թէ ինչ նշանակութիւն ունեն առանձին-առանձին ազատութիւնները իրաւական պետութեան քաղաքացիների կեանքում:

## 24. ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Խղճի ազատութիւն ասելով հասկացւում է մտածելու, զգալու և ցանկանալու ազատութիւնը այնպէս, ինչպէս որ թելադրւում է մարդու իր խիղճը: Վաղուց արդէն յայտնի է, որ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ», այսինքն՝ մարդու համար գոյութիւն չունի ստամոքսի հարց միայն, այլ նաև մտաւոր հարցեր և բարոյական պահանջներ: Այս տեսակէտով էլ մարդս տարբերւում է անասունից, որը միայն ուտում է, խմում և բազմանում:

Մարդս չէ ապրում սոսկ բուսական կեանքով, նա իր շուրջը նոր կեանք էլ էստեղծագործում: Մարդկային հոգին—անա մարդկութեան բոլորատեսակ հոգեւոր և նիւթական նւաճումների միակ և անվերջ աղբիւրը: Իսկ ամեն մի ստեղծագործութիւն երևակայել չէ էլ կարելի առանց ազատութեան: Արտաքին ստիպողութիւնը սպանում է մարդկային հոգին:



Ահա թէ ինչ է ասում այդ մասին մի յայտնի գիտնական (Իերինգ): «Զգալ ինքն իրեն աւարիչ՝ թէկուզ ամենափոքր աշխարհի, արտացոլել՝ իրենից առաջ դեռ չեղած և միայն իրենով գոյութիւն ստացած սեփական ստեղծագործութեան մէջ,—ահա թէ ինչն է մարդուս ներշնչում իր արժանաւորութեան ինքնագիտակցութիւն, և ղգացում՝ որ նա նմանում է Աստծուն: Մարդուս բարձրագոյն իրաւունքն է զարգացնել այդ ստեղծագործական գործունէութիւնը, որն և անհրաժեշտ միջոց է բարոյական ինքնակրթութեան: Այս բանի համար արդէն իսկ ենթադրում է ազատութիւն, որովհետեւ մեր սեփական ստեղծագործութիւնը համարել կարող ենք միայն այն, ինչ որ ազատօրէն բղխում է մեր անձնաւորութիւնից: Ստիպել մարդուս, որ նա բարի և խելացի բան կատարի,—այդ արդէն յանցանք է նրա կոչման դէմ, որովհետեւ հէնց այդ ստիպողութեամբ նրանից խլում է սեփական բերմամբ բարի գործելու հնարաւորութիւնը»:

Սրանից արդէն պարզ է, թէ ինչ ահազին նշանակութիւն ունի խղճի ազատութիւնը մի ժողովրդի հոգեկան կեանքի համար: Խղճի ազատութիւն ասելով իրաւական պետութեան մէջ հասկացում է, որ կառավարութիւնը իրաւունք չունի ոչ ոքի հետեւելու, հալածելու նրան իր

մտքերի, իր հաւատի համար, իր զիտական համոզմունքների և այս կամ այն քաղաքական կուսակցութեանը պատկանելու համար: Այսպիսի հալածանքն առանց այդ էլ անմիտ բան է. չէ՞ որ ճշմարտութիւնը երևան է գալիս մտքերի ազատ փոխանակութիւնից, կարծիքների ազատ մրցումից: Իւրաքանչիւր ոք այնպէս է կարծում, թէ ինքը ճշմարիտ է մտածում, թէ իր հաւատն է ճշմարիտը, թէ ամենալաւը այն կուսակցութիւնն է, որին ինքն է պատկանում: Եւ թող ամենքն էլ վիճեն և կուեն իրար հետ խօսքով և համոզմունքով,—ժամանակը ցոյց կտայ, թէ ով է եղել արդարը, ուրի կողմն է եղել ճշմարտութիւնը, ով է բարի գործ կատարել, և ով է քարոզել չարութիւն:

Երբ երկրի հիմնական օրէնքները ընդունում են խղճի, կրօնի և զիտական համոզմունքների ազատութիւն, այդ նշանակում է, որ չեն կարող սահմանափակել ոչ մի քաղաքացու իրաւունքները իր ունեցած հաւատի կամ մտքերի համար, թէկուզ նրանք անհաճոյ լինեն կառավարութեան կամ ժողովրդի մեծամասնութեան համար:

Խղճի ազատութիւնից բղխում է խօսքի և մամուլի ազատութեան իրաւունքը:



# 25. ԽՕՄԳԻ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Երբ մարդ մի բանով ուրախ է, շտապում է ուրիշներին էլ հաղորդակից անել իր ուրախութեանը, որպէսզի աւելի մեծ լինի իր սեփական ուրախութիւնը։ Երբ մարդ վիշտ ունի, շտապում է այդ վիշտից մասն հանել ուրիշին, որ սիրտը թեթեւանայ։ Եւ երբ մարդ նոր բան է մտածում, երբ խելօք, լաւ բան է միտք անում, բաժին է հանում զբանից նաեւ ուրիշին, որպէսզի այդ միտքը ծառայի ընդհանրութեան օգտին։ Պահել իր մէջ մտքերը, չքարոզել նրանց, չհամոզել ուրիշ մարդկանց,—այդ նշանակում է ժլատ մարդու նմանել։

Եւ անա՛ խօսքի և մամուլի ազատութիւնը հնարաւորութիւն է տալիս իւրաքանչիւր քաղաքացու բաժանել համաքաղաքացիների հետ իր մտքի և սրտի հարստութիւնը։ Ազատ, համարձակ խօսքը, ջերմ զգացումը հանգիստ չեն մնում մարդու լեզւի վրայ, ուզում են բերնից դուրս թռչել, որովհետեւ իւրաքանչիւր մարդ ձգտում է հանդէս բերել իր անձնաւորութիւնը, իր հոգին,—ինչով որ կարող է։

Խօսքի և մամուլի ազատութեան կաշկանդումը ոստիկանական պետութեան մէջ կանգնեցրել է ժողովրդի հոգեկան և անտեսական զարգացումը։ Յենդորական իշխանութիւնը ար-

գելում էր ասել և խօսել հասարակ ժողովրդի տառապանքների և կարիքների մասին, չէր թոյլ տրւում մերկացնել կաշառակերութիւնը, պետական փողերի յափշտակումը, իշխանութիւնների բռնութիւնները ազգաբնակչութեան վրայ, չէր կարելի երևան հանել խաբէբայութիւնը և անճշտութիւնը, ժողովրդին ճշմարիտ խօսք ասել անկարելի էր։ Սակայն վերացաւ ոստիկանական պետութիւնը, դրա հետ միասին և չքացաւ ցենզուրան։

Նրա փոխարէն հանդէս եկաւ մամուլի ազատութիւն, այսինքն՝ ժողովրդի շահերը պաշտպանելու և ոչնչով չկաշկանդուող իրաւունքը—գրքերի, լրագիրների և ժուրնալների միջոցով։ Իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ձեռք բերեց կարծիք յայտնելու իրեն յուզող բոլոր հարցերի մասին։ Իրաւական պետութեան մէջ կեանքը աւելի բարդ է, քան ոստիկանական պետութեան մէջ։ Իսկ առանց խօսքի, ուսուցման և մամուլի ազատութեան՝ ժողովուրդը կնամանէր խաւարի մէջ խարխափող մէկին, չիմանալով ինչ անել, ինչի հաւատալ։

Մամուլի ազատութիւն—դա կեանքի խաւարը փարատող արեգակն է։

Մամուլի ազատութիւն—դա այն ամենագործող խողովակն է, որով բարութիւն կարելի է հոսեցնել կեանքի մէջ, իսկ մարդկանց գլխի մէջ՝



գիտակցութիւն: Ազատ մամուլը մերկացնում է ամեն տեսակ չարիք և կռուում է նրա դէմ: Մերկացնելով կառավարութեան կամայականութիւնները՝ նա հանդիսանում է իբրև լաւագոյն միջոց քաղաքացիական իրաւունքները պաշտպանելու համար:

Խղճի և խօսքի ազատութիւնը պահանջում է նմանապէս ժողովուրդների և միութիւնների ազատութիւն:

## 26. ԺՈՂՈՎՈՒՄՆԵՐԻ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Մարդ կարող է իր մտքերը և զգացումները արտայայտել բերանացի կամ գրաւոր կերպով: Եւ եթէ մի պետութեան մէջ ճանաչած է, որ քաղաքացին ունի խօսքի ազատութիւն, այսինքն՝ իր մտքերը և զգացումները բերանացի արտայայտելու իրաւունքը, — ապա ուրեմն պէտք է նաև ընդունել, որ քաղաքացիները իրաւունք ունեն ազատ կերպով հաւաքւելու միասին իրենց մտքերը և կարծիքները փոխանակելու համար: Իրաւական պետութեան մէջ իւրաքանչիւր իրաւատէր քաղաքացի աւելի կամ պակաս չափով մասնակցութիւն ունի պետութիւնը կառավարելու գործում, ապա ուրեմն և նա պէտք է ունե-

նայ որևէ միջոց իր համախոհների հետ խորհրդակցութեան առարկայ դարձնելու համար պետական գործերը և իր դասակարգի շահերը:

Այդպիսի մի միջոց է ժողովուրդների ազատութիւնը: Իրաւական պետութեան մէջ իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք ունի առանց որևէ թոյլտուութեան հրաւիրելու իր համաքաղաքացիներին հասարակական ժողովի և այնտեղ նրանց հետ քննելու այն գործերը և կարիքները, որ իրենք կարևոր կհամարեն: Բացի դրանից՝ այդպիսի ժողովուրդները իրաւունք ունեն որոշումներ անելու՝ իբրև ցանկութիւն, կարող են այս կամ այն բանին ձեռնարկել ժողովրդի համար, ու այդ որոշումները յանձնել կառավարութեանը կամ ժողովրդական ներկայացուցիչներին: Այսպիսով վերջիններս մի աւելորդ անգամ էլ կիմանան, թէ ինչ կարիքներ ունի ժողովուրդը: Նմանապէս ազատօրէն, առանց կառավարութեան թոյլտուութեան, տեղի են ունենում մշտական բնաւորութիւն կրող հասարակական ժողովները, — օրինակ քաղաքային վարչութիւնների, գեմատւօների նիստերը, արդիւնաբերական և գիտական ընկերակցութիւնների, բանւորական միութիւնների ժողովները, գիւղացիական համագումարները և այլն:

Վերը մենք ասացինք, որ ժամանակակից հսկայական պետութիւններում միայն նա է դո-



րեղ, ով կուռում է ոչ թէ միայնակ, այլ վիճակակից ընկերների և համախոհների հետ:

Միութիւնների ազատութիւնն էլ հէնց տալիս է իրաւական պետութեան քաղաքացիներին հնարաւորութիւն՝ իրենց շահերի համար միասնական կռիւ մղելու համար:

Վերոյիշեալ քաղաքական կուսակցութիւնները հանդիսանում են իբրեւ մի տեսակ միութիւններ: Բացի քաղաքական միութիւններից և ընկերակցութիւններից, որոնք զբաղւում են պետութեան ներքին կառավարութեան վերաբերեալ հարցերով, — իրաւական պետութեան մէջ գոյութիւն ունեն եկեղեցական, գիտական, արդիւնաբերական և այլ տեսակի շատ ընկերակցութիւններ: Այդ բոլոր ընկերակցութիւնները հիմնւում են ծանուցման եղանակով (ЯВООЧНЫМЪ ПОРЯДКОМЪ), այսինքն՝ ծանուցւում է ի գիտութիւն կառավարութեան, թէ այս ինչ մարդը հիմնւում է այս ինչ ընկերակցութիւնը կամ միութիւնը, և դրանով էլ բանը վերջանում է — ընկերակցութիւնը կամ միութիւնը համարւում են, այդ անելուց յետոյ, օրէնքով գոյութիւն ունեցող:

Բացի քաղաքական կուսակցութիւններից, այսինքն այնպիսի միութիւններից, որոնց մէջ միանում են պետութիւնը կառավարելու հարցերը միատեսակ ըմբռնող մարդիկ, առանձին

ոյժ են ներկայացնում իրաւական պետութեան մէջ բանւորական արհեստակցական (արոճէստիոնալ) միութիւնները: Սրանց գլխաւոր նպատակն է միացնել բանւորներին գործարանատէրերի դէմ՝ կռիւ մղելու համար տնտեսական պահանջներով: Այդ միութիւնների անդամ բանւորները որոշ տնդամաքձար են տալիս միութեան կասսային, որպէսզի գործադուլի ժամանակ նրանից նպաստ ստանան:

Գործադուլը լաւագոյն միջոցն է գործարանատէրերի դէմ առօրեայ կռիւ մղելու համար՝ աշխատավարձը բարձրացնելու և աշխատանքի օրը կրճատելու համար: Իրաւական պետութեան մէջ բանւորները և գործակատարները վայելում են գործադուլների ազատութիւն: Սակայն գործադուլի միջոցով միայն այն ժամանակ կարելի է մի բան ձեռք բերել գործարանատիրոջից, երբ բանւորները ապրելու միջոց ունենան գործադուլի ժամանակ, որը, եթէ գործարանատէրերը չզիջեն, կարող է երկար տևել: Այսպէս՝ կալաւձատէր Պետրինի քարահանքում (Անգլիա) աշխատող քարտաշները գործադուլ արին 2 տարի և 6 ամիս անընդհատ: Եթէ քարտաշ բանւորների միութիւնը կասսայում հարկւր հազարներ չունենար, բանւորների մշտական վճարներից գոյացած, այդ դէպքում բանւորները չէին կա-



րող ունենայ այդքան երկար ժամանակ շարունակել կոիւր իրենց տէրերի դէմ:

Այս բանից պարզ է, որ մեծ նշանակութիւն չունի գործադուլների իրաւունքը առանց բանւորական միութիւնների ազատութեան: Բանւորական միութիւնները բանւորների գրաւական են գործադուլների յաջող ելքի համար: Իրաւական պետութեան մէջ բանւորական միութիւնները հաշուում են իրենց մէջ միլիոնաւոր անդամներ և տասնեակ միլիոնների կարողութիւն իրենց կասսայում՝ դրանով էլ նրանք ներկայացնում են, մի թէպէտ խաղաղ, բայց ազդեցիկ ոյժ:

Միութիւնների միւս տեսակներից ուշադրութեան արժանի են սպառնողական ընկերութիւնները՝ մեծաքանակ չափով ապրանքներ միասին էժան գնելու համար: Նրանց անդամ են լինում գլխաւորապէս բանւորներ, գիւղացիներ և արհեստաւորներ:

Բացի դրանից գոյութիւն ունեն նաև արտադրական ընկերութիւններ (производительные общества), այսինքն աշխատաւորական այնպիսի միութիւններ, որոնք միասին վարում են որևէ ձեռնարկութիւն: Սակայն որովհետև դրանց հիմները դժւար բան է, այդ պատճառով էլ քիչ կան այդպիսի ընկերութիւններ: Կապիտալով հարուստ մասնաւոր և խոշոր արգիւնաբերական

ձեռնարկութիւնների հետ ունեցած մրցման մէջ մանր արտադրական ընկերութեան համար դժուար է գոյութիւն պահպանել, այդ պատճառով էլ այդպիսին յաճախ կործանւում է, չդիմանալով մրցման:

Իւրաքանչիւր եկեղեցի էլ հանդիսանում է նմանապէս իբրև միատեսակ հաւատացող մարդկանց մի միութիւն, իրաւական պետութեան մէջ եկեղեցին միանգամայն անշատաւած է պետութիւնից, այսինքն պետութիւնը ոչ մի, ոչ տիրող և ոչ էլ սակաւ նշանակութիւն ունեցող եկեղեցական ընկերակցութեան չէ տալիս ոչ մի կոպէկ, ոչ մի արտօնութիւն:

Ամեն մի եկեղեցի, լինի նա քրիստոնէական, մահմեդական թէ հրէական, հաւատար իրաւունք ունի հրապարակական աստուածաշատութեան և իր կրօնական դաւանանքը հրապարակով քարոզելու: Ամեն մի քաղաքացի էլ լիակատար իրաւունք ունի դուրս գալու մի եկեղեցուց և մտնելու մի ուրիշի մէջ, մի խօսքով՝ կարող է փոխել հաւատը: Կարող է նաև ամենեւին չհաւատալ Աստծուն և պատկանել անհաւատների որևէ է ընկերակցութեան: Կառավարութիւնը և ժողովրդական ներկայացուցիչները ոչ մի գործ չունին, թէ ինչպէս են հաւատում քաղաքացիները, կամ բնաւ իսկ չեն հաւատում: Չէ՞ որ, եթէ մէկը չի ուզում, զագանակով չեն



կարող նրան արքայութիւն քշել: Աստուած ինքն էլ արքայութիւն չի ընդունի մի մարդու, որը նրան հաւատում է ոստիկանական բռնութեան շնորհիւ միայն: Աստուած լաւ է տեսնում, որ այդպիսի մարդու հաւատը կեղծաւորութիւն է միայն, որ նա հաւատում է երկիւղից զրդւած: Այս պատճառով ոչ մի օգուտ բերել չեն կարող մարդիկ, որոնք բռնութեան միջոցներով են մարդկանց հաւատ ներշնչել ուզում, օր. իրաւունքներից զրկելով կամ սահմանափակելով այդ իրաւունքները, աքսորով կամ բանտարգելութեամբ: Կրօնական համբերատարութիւնը առաջին օրէնքն է ճշմարիտ հոգեւոր կեանքի: Յիսուս Քրիստոս մարդկանց զազանակով չէր ձգում զէպի ինքը, այլ հեզ և քնքոյշ խօսքերով:

Յիշատակենք նաև այն, որ իրաւական պետութեան մէջ բոլոր քաղաքացիները ունեն թափօրներ սարքելու, այսինքն փողոցով երթալու և իրենց կարիքների կամ ողև է մէկի կողմից խախտած իրաւունքների մասին բարձրաձայն ազդարարելու իրաւունք: Միակ սահմանափակումը, որին հանդիպում են քաղաքացիները իրենց այս իրաւունքը իրազործելու համար, այն է, որ նրանք զրանով չպէտք է խանգարեն փողոցի երթևեկութիւնը: Ոստիկանական պետութեան մէջ այդ իրաւունքից օգտուում է միայն զկեղեցին, երբ նա կրօնական թափօրներ է սար-

քում: Իրաւական պետութեան մէջ կրօնական թափօրներն էլ չպէտք է խանգարեն փողոցի երթևեկութիւնը:

ՁԴ. ԱՆՁԻ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐԻ (ՊՈՍՏԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ) ԱՆՁԵՌՆՄԵՆԼԻ-  
ՈՒԹԻՒՆ

Այս վերնագրում յիշող երեք իրաւունքի ծագումը և կարևոր նշանակութիւնը աւելի լաւ հասկանալու համար վերադառնանք կրկին այն հին, անցանկալի ժամանակին, երբ դեռ ոստիկանական պետութիւնը կանգուն էր:

Վերը տասցինք, որ ոստիկանական պետութեան մէջ տիրում էր կատարեալ կամայականութիւն — ամենքը հաւասարապէս իրաւադուրկ էին, միայն սակաւաթիւ մարդիկ, շնորհիւ իրենց ծագման և հարստութեան, աէր էին պետութեան մէջ, որոնց հետ թագաւորը շրջաժանում էր իր իշխանութիւնը:

Կառավարութիւնը, չինովնիկները, ոստիկանութիւնը և հարուստները ճնշում և քայքայում էին ժողովրդին: Ամենաաղքատները վճարում էին ամենից շատ հարկեր և տուրքեր: Այս բոլոր կամայականութիւնները առաջ էին բերում խուլ անրաւականութիւն, որ բռնկում



էր մերթ այստեղ, մերթ այնտեղ դուրսը՝ ժողովրդական ըմբոստացումների ձևով: Կառավարութիւնը ամեն կերպ աշխատում էր իր յանցանքը ուրիշի վրայ գցել. երբ ժողովուրդը աղքատութիւնից մեռնում էր, կառավարութիւնը ամեն բան անբերրութեան վրայ էր գցում, և կամ ասում էր, թէ ամեն բանում յանցաւոր են հրէաները կամ ուրիշ այլազգիներ: Իսկ հէնց որ դուրս էր գալիս մի համարձակ մարդ, որ ուզում էր հասկացնել ժողովրդին, թէ կառավարութիւնը խաբում է նրան, թէ ժողովրդի ամբողջ թշուառութիւնը վատ կառավարութիւնիցն է, թէ ժողովուրդը քայքայւում է անտանելի ծանր լծի տակ, որ դուրս է աշխատաւորների ուսի վրայ, — այդ գէպքում կառավարութիւնը այդպիսի մարդուն յայտարարում էր իբրեւ դաւաճան, բռնում և առանց որևէ դատաստանի բանտ էր նստեցնում երկար տարիներով:

Հէնց որ մէկը խօսում էր ժողովրդի իրաւագրկութեան մասին համարելով այդ բանը նրա գոյատևութեան հիմնական պատճառը, հէնց որ մէկը ցոյց էր տալիս ժողովրդին, թէ ինչպէս և ում դէմ պէտք է կռուել ու լաւագոյն դրութիւն ստեղծել, — իսկոյն յայտնի կամ գաղտնի ոստիկանութիւնը բռնում էր նրան և տանջում:

Այդ բոլորից յետոյ կառավարութիւնը նրանց, որոնք չէին կարող անտարբեր վերաբեր-

մունք ցոյց տալ հարազատ ժողովրդի տանջանքներին, այդպիսիներին աքսորում էր տաժանակիր աշխատանքի կամ կախել էր տալիս, նայած թէ նրան որչափ վտանգաւոր էին համարում ոստիկանական պետութեան աչքում:

Վերջապէս՝ շատ երկրներում բանն այնտեղ հասաւ, որ սկսեցին մարդկանց բռնել սոսկ կասկածելով վրան, երբեմն նոյնիսկ առանց կասկածի, համարեա ամեն մի պատահող մարդու: Ոստիկանութիւնը և ժանդարմերիան ամեն տեղ ցոյց էին տալիս իրենց եռանդը: Գողերի և աւազակների նման նրանք գիշերով մտնում էին ուրիշի բնակարանը, խուզարկում էին ամենքին, ամեն բան տակն ու վրայ էին անում և բռնում մի քանի մարդու: Հետեւեալ գիշեր մտնում էին մի ուրիշ տուն և կրկնում էին այնտեղ իրենց արարքը:

Զարմանալի չէ, որ զգոհների թիւը աւելի ու աւելի էր բազմանում: Մարդ քնելիս վստահ չէր, թէ նրան գիշերը հանդիստ կը թողնեն: Բազմաթիւ անմեղ մարդիկ փառում էին բանտերում: Ամիսներ և տարիներ էին անցնում և ոչ ոք նրանց չէր ասում, թէ ինչ բանում և ինչ հիմունքներով են նրան մեղադրում: Մի մարդու ուրիշին գրած նամակը բաց էին անում այսպէս կոչւած «սև կաքինեաներում» և կառավարութեան պաշտօնեաները այդ եղանակով աշխա-



տում էին ոստիկանական պետութեան համար վտանգաւոր մտքերի ապացոյցներ գտնել:

Ահա այս բոլոր բաների համար էր, որ ոստիկանական պետութիւնը իրենց վրայից թօթափող ժողովուրդները թագաւորական իշխանութեան ներկայացրած հիմնական պահանջների մէջ զննում են անձի, բնակարանի և մարդկանց իրար հետ ունեցած յարաբերութիւնների անձեռնմխելութիւն, այսինքն՝ կամայական ձերբակալումների և ուրիշների նամակները բանալու արգելում: Եւ յիշուի, ժամանակակից իրաւական պետութեան մէջ իշխում է պոստային կատարեալ գաղտնապահութիւն և անձի ու բնակարանի կատարեալ անձեռնմխելիութիւն կառավարութեան կամայականութիւնից: Այս բանի համար գոյութիւն ունեն մի շարք օրէնքներ, որոնց հետ և անմիջապէս կը ծանօթանանք:

Նախ՝ իրաւական պետութեան մէջ ոչ ոքի չի կարելի խուզարկել և ձերբակալել, հիմնելով միմիայն կասկածի վրայ և առանց որևէ հիմքի: Եւ եթէ նոյնիսկ այս բանի համար լինեն պատճառներ, յամենայն դէպս խուզարկութիւն կամ ձերբակալութիւն կարելի է անել միմիայն հիմնւելով քննիչի կամ դատաւորի ստորագրութիւնը կրող արքունական թղթի վրայ: Իսկ ինքը ոստիկանութիւնը մէկին ձերբակալել կարող է միմիայն այն դէպքում, երբ նրան բռնի յանցագոր

ծութեան վայրում. և միայն մի դէպքում նա կարող է առանց հրամանի մտնել մասնաւոր բնակարան, այն է՝ երբ յանցագործը նրա աչքի առաջ թագնւում է այնտեղ:

Ամեն մէկը, որ իրեն համարում է անարդար տեղը կամ անհիմն ձերբակալւած, իրաւունք ունի պահանջելու, որ 24 ժամայ ընթացքում իրեն դատաւորի մօտ բերեն, որն և պարտաւոր է յայտնել նրան մեղաւորանքը կամ ազատել նրան: Եթէ որևէ մէկը մեղադրւում է օրէնքի աննշան խախտման՝ զանցառութեան մէջ, այդ դէպքում դատաւորը պարտաւոր է կարգադրութիւն անել, որ նրան ազատեն բանտարկելութիւնից: Իսկ եթէ մէկը մեղադրւում է օրէնքի ծանր խախտման մէջ, այդ դէպքում դատաւորից է կախւած այս կամ այն միջոցը ձեռք առնել: Դատաւորը կարող է կամ ազատել նրան երաշխաւորութեամբ, կամ թէ չէ ստորագրութիւն առնելով պարտաւորեցնել նրան, որ չի հեռանայ իր բնակավայրից:

Վերջապէս, եթէ մէկը դատի ապաստելով կալանաւորւած է մնում օրէնքի սահմանւած ժամանակից աւելի երկար, այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ իրաւունք ունի պահանջելու, որ կամ անմիջապէս դատ անեն և կամ իսկոյն ազատեն նրան: Բացի դրանից՝ կալանաւորւածի ամեն մի ազգական և ծանօթ, երբ նա



կասկածում է, թէ կալանաւորւածը որ և է պատճառով հնարաւորութիւն չունի իր դատը շտապեցնելու, և կամ չգիտէ որ իրաւունք ունի այսպէս վարելու, նա իրաւունք ունի նրա փոխարէն պահանջելու, որ անմիջապէս յայտնեն մեղադրանքները կամ ազատեն իրան:

Ահա այն օրէնքները, որոնք անմիջապէս պաշտպանում են քաղաքացիներին կառավարութեան և ոստիկանութեան կամայականութիւնից: Եւ որպէսզի այդ օրէնքները մեռած տառ չմնան անհիմն կերպով ազատութիւնից զրկող կամ անտեղի խուզարկութեան ենթարկող քաղաքացիների համար, կայ երկու միջոց. այդպիսիները կարող են պաշտօնեային կամ ոստիկանական ծառայողին դատական պատասխանատւութեան ենթարկել և դատարանով պատժել տալ, կամ տուգանքի ենթարկել յօգուտ տուժողի, և կամ յօգուտ միաժամանակ թէ մէկի և թէ միւսի:

Պաշտօնեան և ոստիկանական ծառայողը ենթակայ են քաղաքացիական պատասխանատւութեան միայն այն ժամանակ, երբ նրանք կատարել են աննշան խախտումն քաղաքացու իրաւունքների, օրինակ երբ վիրաւորել են (խօսքով) նրան: Իսկ երբ նրանք ցոյց են տւել քաղաքացու իրաւունքների բիրտ խախտումն, օրինակ ապօրինի կերպով կալանաւորել են նրան, այդ

դէպքում բացի այն, որ նրանցից մեծ գումար կառնւի յօգուտ տուժողի, նրանք կենթարկւեն նաև քրէական պատասխանատւութեան՝ պաշտօնից հեռացելով կամ բանտարկւելով: Զարմանալի չէ ուրեմն, որ շնորհիւ այսպիսի խիստ օրէնքների՝ որոնցով կամայականութեան հեղինակները պատասխանատւութեան են ենթարկւում, իրաւական պետութեան մէջ ադմինիստրացիայի և ոստիկանութեան մարդկանց մէջ քչերը կլինեն, որոնք կխախտեն քաղաքացիների իրաւունքները: Կամայականութեան դէպքերը չափազանց քիչ են:

Սրան պէտք է աւելացնել և այն, որ իրաւական պետութեան մէջ՝ զաղափար անգամ չունեն այսպէս կոչւած քաղաքական յանցանքների և քաղաքական յանցադորժերի մասին, քանի որ խղճի, խօսքի և մամուլի ազատութիւնը հնարաւորութիւն է տալիս իւրաքանչիւրին՝ դատել և քննադատել կառավարութեան, չինովնիկների և ոստիկանների գործունէութիւնը՝ ինչպէս որ նա է ուզում: Յիշեալ ազատութիւնները, նրանց հետ նաև միութիւնների ազատութիւնը հնարաւորութիւն են տալիս ամեն մէկին միանալ իր ուզած քաղաքական կուսակցութեան հետ, դաւանել իր ուզած քաղաքական համոզմունքները: Իրաւական պետութիւնը աներևակայելի բան է՝



առանց քաղաքական կեանքի և քաղաքական կուռի:

Իրաւական պետութեան նպատակն է՝ մարդկանց խաղաղ համայնակեցութիւնը. նրան հասնելու միջոցն է՝ կռիւր: Սակայն իրաւական պետութեան մէջ դասակարգերի և քաղաքական կուսակցութիւնների կողմից մղուող կռիւր չէ լինում ապստամբութեան միջոցով՝ ոստիկանական և զինւորական իշխանութիւնների դէմ, այլ խաղաղ միջոցներով, ազատ համոզմունքով և ներկայացուցչական ժողովի մեծամասնութեան որոշումներով:

Իրաւական պետութիւնը պետական համայնակեցութեան ամենալաւ տեսակն է, որ առաջ է բերել երբեք ժողովրդի ստեղծագործութիւնը: Սակայն ժողովրդական ստեղծագործող ոյժը չէ նւազում, իրաւական պետութիւն ձեռք բերելուց յետոյ եկող հերթական հարցը ամեն տեղ էլ նոյնն է — ժողովրդի անտեսական կեանքի կառուցումը հիմնել բոլոր աշխատաւորների հաւասարութեան և եղբայրութեան սկզբունքների վրայ. կամ, ուրիշ խօսքով, պէտք է վերացնել այն ամենամեծ կախումը, որ հիմնւած է ոմանց անտեսական դօրութեան և ուրիշների անտեսական ճնշման վրայ: Պէտք է վերացնել կամաւոր վարձու աշխատանքը, հողը և կապիտալը դարձնելով համաժողովրդական սեփականութիւն,

անա այն մեծ հարցը, որ դրւում է ազատ պետութիւնների ազատ քաղաքացիների առջև:

## Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ոստիկանական պետութիւնը ընկաւ բոլոր ժողովուրդների մէջ շնորհիւ մարդկային ոգու ըմբռնացման ընդդէմ՝ այն խնամակալութեան, որը տքնում էր մարդու բոլոր հինգ զգայարաններին գոհացում տալու համար հոգալ: Մարդու ստեղծագործական գործունէութիւնը հոգեկան և անտեսական գործունէութեան սահմանում՝ չէ կարող զարգանալ ոստիկանական պետութեան մէջ, որը կաշկանդում է բոլոր բնակիչների ամեն մի քայլը ստիպողական պատէրներով և ոստիկանական արգելումներով, — ճիշտ այնպէս, ինչպէս որ սառույցն է կապում ջուրը: Իրաւունք, օրէնք, ազատութիւններ և ինքնուրոյնութիւն — անա թէ ինչ են եղել նոր և ազատ պետական կառուցւածքի հիմքը, որով և ստեղծւել են բարեյաջող պայմաններ՝ մարդկութեան յետագայ զարգացման համար: Մարդկային յարաբերութեան զարգացման ծայրն էլ չի երևում:

Վերլիշենք համառօտակի իրաւական պետութեան այն հիմնական առանձնայատկութիւնները, որոնք ներկայումս հանդէս են բերում ժողովրդական կեանքի ծաղկումը: Իրաւական



պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը գտնուում է ժողովուրդ—վեհապետի ձեռքում։ Սա իրագործում է իր իշխանութիւնը ընտրւած ներկայացուցիչների, նրանց առջև պատասխանատու մինիստրութեան և ընտրւած դատարանի միջոցով։

Ժողովրդական ներկայացուցչութիւնը հիմնւում է ընդհանուր, ուղղակի, գաղտնի, հաւասար և համեմատական ընտրական իրաւունքի վրայ, որով ապահովւում է ազգաբնակչութեան մեծամասնութեան և փոքրամասնութեան շահերի ներկայացուցչութիւնը։ Օրէնքի և դատարանի առաջ հաւասար են բոլոր քաղաքացիները։ Օրէնքները ծառայում են ժողովրդի կարիքներին պահպանելով տալու, դատարանում էլ թագաւորում է ճշմարտութիւնը և արդարութիւնը։

Պետական տնտեսութեան հիմքը կազմում է ամենքին ըստ եկամուտի հարկատուութեան ենթարկելը։ Իւրաքանչիւր ոք կրում է մէջքին հարկի ծանրութիւնը։

Տեղական կարիքների մասին հոգալու համար գոյութիւն ունի տեղական յատուկ ներկայացուցչութիւն՝ նոյն հիմունքներով, ինչպէս ժողովրդական բարձրագոյն ներկայացուցչութիւնը։

Ժողովրդական կրթութիւնը մատչելի է ընդ-

հանրութեան, պարտադիր է և ձրի. գոյութիւն ունի ուսուցման ազատութիւն։

Տարբեր ազգութիւնների իրար հետ ունենալիք յարաբերութիւնների հարցը վճռւում է նրանով, որ պետութիւնը բաժանւում է ինքնուրոյն երկրամասերի՝ տեղական ժողովրդական ներկայացուցչութեամբ։ Երկրամաս-պետութիւնները, կատարեալ ինքնավարութիւն ունենալով, միասին կազմում են դաշնակցական պետութիւն (ֆեդերատիւ հասարակապետութիւն), ունենալով ժողովրդական ներկայացուցիչների բարձրագոյն պալատ՝ բոլոր ժողովուրդների վերաբերող ընդհանուր գործերը վճռելու համար։ Բացի ժողովուրդ—վեհապետից, պետութեան իսկական գլուխին կայ նաև պատւաւոր գլուխ—նախագահ, կամ թագաւոր, ինչպէս որ է Անգլիայում։

Ժողովուրդը բաժանւում է զանազան քաղաքական կուսակցութիւնների, որոնք կռիւ են մղում իրար դէմ։

Իրենց ոյժով և միութեամբ առանձին ուշադրութիւն են դարձնել տալիս իրենց վրայ ժողովրդական—սոցիալիստական կուսակցութիւնները, որոնք պաշտպանում են գիւղացի-հողագործների և քաղաքային ու գիւղական բանւորների շահերը։

Առանձնապէս կարևորութիւն ունեցող խնդիրների համար տեղի է ունենում բոլոր ընտրողների անմիջական հարցում—ռեֆերենդում։

Ինիցիատիւի իրաւունքը օրէնսդրական նախաձեռնութիւնը—պատկանում է ամեն մի ընտրողի, եթէ այդ նախաձեռնութիւնը կապաւորանեն օրէնքով սահմանւած որոշ թիւ կազմող քաղաքացիներ։



Ժողովրդի բարձրագույն իշխանութիւնը սահմանափակում է քաղաքացիների սրբազան, անձեռնմխելի իրաւունքներով, այսինքն՝ խղճի, հաւատի, գիտական համոզմունքների, խօսքի, մամուլի, ժողովուրդների, միութիւնների և թափօրների ազատութեամբ, անձի, բնակարանի և յարաբերութիւնների (սոստային գաղտնիք) անձեռնմխելիութեամբ:

Մարդկային անձնաւորութեան իրաւունքները և մարդկային արժանապատուութիւնը ազմինխտրացիայի և ոստիկանութեան կամայականութիւնից պաշտպանւում են դատարանով. նրանց խախտել իսկ ցանկացող ամէն մի չինովնիկ, ոստիկանական ծառայող կամ մասնաւոր անձն ենթակայ է քաղաքացիական և քրէական պատասխանատուութեան:

Ժողովրդական ներկայացուցիչներից բաղկացած Սահմանադիր Ժողովը լաւագոյն միջոցն է իրաւական պետութիւն ստեղծելու համար:

Ծանր, արիւնահեղ կոիւնեղով են քաղաքացիները ոստիկանական պետութիւնից իրաւական պետութիւն դարձել. այժմ էլ, իրաւական պետութեան մէջ, մղւում է կուսակցութիւնների կոիւր, բայց այդ կոիւր մղւում է խաղաղ ձանապարհով, հիմնւած համոզմունքի և ներկայացուցչական ժողովի մեծամասնութեան որոշումների վրայ:





ԼՈՅՍԵՆՍԵՍԵԼ

- № 62. Հ. Յ. Դաշնակցութեան հայ. ծրագիր 20 Կ.  
 № 63. հայեր սուսերէն . . . . . 20 Կ.  
 № 64. Հ. Յ. Դ. նազարցոյն ծրագիր հայեր. 10 Կ.  
 № 65. հայեր սուսերէն . . . . . 10 Կ.  
 № 66. » վրացերէն . . . . . 10 Կ.  
 № 67. 1917 թ. ապրիլի 6 12 Հ. Յ. Դ.  
 Ռաշնական ժողովի որոշումները 15 Կ.  
 № 68. հայեր սուսերէն . . . . . 15 Կ.  
 № 69. Ա. Արեղեան. Ի՞նչ է իրական  
 պետութիւնը (II հրատարակութիւն). 70 Կ.  
 № 70. Ա. Արեղեան. ժողովրդավար  
 քնտրութիւններ. II հրատ. 1 ա.  
 № 71. Գ. Խ. Աղլարլին հարց, Աւստրա-  
 միա եւ Ֆէդերացիա, II հրատ. 25 Կ.  
 № 72. Ֆ. Լատալ. Սոս անադրութեան  
 էութեան մասին, II հրատ. 50 Կ.

ТИФЛИСЬ

Պահուար՝ Դերմոնտեւեկի, № 12, Библиотека  
 «Арачъ»



ՀՀ Ազգային գրադարան



NL0189391



